ANAHIT: REVUE ARMÉNIENNE, LITTÉRAIRE ET ARTISTIQUE

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԿՐՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ը. ՏԱՐԻ ՑՈՒՆՈՒԱՐ–ՓԵՏՐՈՒԱՐ ԹԻՒ 1–2

ԲՈՒՐԻՉ

«Խօսք» եւ «լոյս» երկու համանման բառեր են նախնական մրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յաւիտենական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չթարգմանէր , չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մթին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

DIRECTEUR : A. TCHOBANIAN

ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՆԱՀԻՏԻ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ՊԷՏՔ Է **ԿԱՆԽԻԿ** ՎՃԱՐԵԼ

ԿԸ
ՏՊԱԳՐՈՒԻՆ
ԱՑՑԱՔԱՐՏԵՐ
ՏՈՄՍԱԿՆԵՐ
ՆԱՄԱԿԱԳԼՈՒԽՆԵՐ
ԹԵՐԹԵՐ, ՀԱՆԴԷՄՆԵՐ
ևն. ևն.

ՏՊԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

ԲԱՐԻԶ 18, Rue des Gobelins, 18, Paris, (13e)

Ամէն տեսակ տպագրութիւն, մաքուր, խնամեալ եւ ժամանակին:

Ն. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Վկայեալ Փրոֆ. Քլեմանի Institut Scientifique de Coupeէն պատրաստ է ձեւագիտութեան դասեր տալ հայերէն ու ռուսերէն լեզուով, թէ՛ կնոջ եւ թէ՛ այր մարդու զգեստներու համար, ինչպէս եւ աշակերտներ պատրաստել Institut de Coupeի մուտքի քննութեան։

Պայմաններուն տեղեկանալու համար, դիմել իրեն.

M. N. AROUTIUNIAN. 22, Rue Clauzel

ԱՆԱՀԻՏ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵԱՅ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Ը. ՏԱՐԻ — ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ — Թիւ 1-2

ԱԲՈՎԵԱՆԻ

ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

Ռուսահայը որոշած են — եթէ՝ անշուշտ Կովկասի մէջ այժմ տիրող եղերական պայմանները ներեն — հանդիսաւորապէս տօնել Աբովեանի հարիւրամեակը։ Այս առթիւ, արտասպելով Անահիտի մէջ անմահ գրագէտին ամենէն հոյակապ էջերէն մին՝ Զանգին, կ'ուզեմ՝ հետագայ մէկ քանի նկատողութիւններով՝ Վէրք Հայաստանի երգչին անզուգական դէմքին վրայ անգամ մը եւս հրաւիրել Անահիտի ընթերցողներուն հիացական ուշադրութիւնը։

Այն ուսումնասիրութեան մէջ զոր ութը տարի առաջ այստեղ իսկ նուիրած էի Աբովեանին, ջանացած էի իր ուսուցչի, գրագէտի եւ հայրենասէրի գործին համայնապատկերը լայն գծերով նկարել եւ անոր նշանակութիւնը բացատրել, ու իր գրական արտադրութիւններէն մասնաւորապէս Վէրք Հայաստանիին վրայ ծանրացած էի։ Այսօր պիտի զբաղիմ միայն իր գրականութեամբը, որուն դառնալ այնքան քաղցր է որքան վերայցելելը հրաշագեղ բնանկարի մը։

«Բնանկար» մըն է՝ իրօք՝ Աբովեանի գործը, բնանկար մը տարօրինապէս ճոխ, հըզօր ու երփներանգ, անսպառ ազբիւր բիւրաղան տպաւորութեանց ու խորհրդածութեանց, «Վէրք Հայաստանի»ն հոն կը կազմէ տիրական տարրը, — լե՛ռը, ամպերու մէջ կորսուած իր ձիւնապսակ ու վեհ կատարներովը, իր արհաւիրքներով լեցուն դահավէժներովը, իր կանաչագեղ ծաղկալից կողերովը, իրմէ բղխող արծաթափայլ առուակներովը, բոլորը՝ թանձր խաւարի մը մէջէն ծագող նոր արեւի մը արիւնովը գունոտուած։ Բայց՝ «Վէրք Հայաստանի»ն, որքան ալ ամենէն կարեւորը Աբովեանի գործերուն, միակ նշանակալիցը չէ անոնց մէջ. բազմաթիւ, բազմաձեւ են անոնք, եւ անոնց ամենէն աննշանին մէջ իսկ հանճարի նշոյլ մը կարելի է գտնել. լերան շուրջը՝ կը տեսնես անհուն դաշտավայր մը, հոս արօտ մը քաղցր ու հանդարտիկ ուր հօտերը կ'արածուին հովուին սրինգով, անդին անտառ մը խորհրդաստուեր ուր գազաններ կը թափառին, հոս՝ հեղեղ մը փրփրագեղ որ կատաղամռունչ կը խոյանայ ժայռերու վրայէն, հեռուն՝ ուրուականը հին փլած քաղաքի մը նշխարներուն, այստեղ պարտէզ մը ուր մանուկներ կը խաղան, անդին՝ հորիզոնին մօտ՝ բերդի մը չարագուշակ կմախքը։

Ժողովածուն զոր Պ. Տէր-Սարգսեանց հրատարակած է՝ կը պարունակէ մէկ երրորդը միայն Աբովեանի երկերուն. մնացեալն մասը կը մնայ անտիպ, եւ կամ՝ միայն Կոռնեկ Հայոց Աշխարհի հին ամսագրին մէջ (որ այժմ անգը-

տանելի է) 45 տարի առաջ հրատարակուած եւ հայ արդի սերունդներուն անծանօթ մնացած։ Ատոնցմէ է Զանգին զոր Պ. Տէր-Սարգսեանց կ'անուանէ « Աբովեանի բոլոր գրուածքների թագն ու պսակը » . գովեստը ծայրայեղ է , (որովհետեւ « Վէրք Հայաստանի »ի մէջ կայ ամէն ինչ որ կը գտնենք « Զանգի »ին մէջ՝ եւ աւելին ալ) բայց կտորը հոյակապ է արդարեւ . անոր մէջ կը տեսնենք խտացած՝ Աբովեանի բոլոր յատկութիւնները. այդ էջը միայն պիտի բաւէր ապահովելու Աբովեանի անմահութիւնը ։ Ռուսական տիրապետութենէն առաջ՝ մահմետական լուծի տակ ճզմուած , խեղդուած , զանգատած , սահմռկած Հայութեան սարսափահար ու ցաւագին հոգին է որ կը պատկերանայ անոր առաջին մասին մէջ՝ սարսռեցուցիչ զօրութեամբ մը ներշնչման եւ մրրկաձեւ ուժով մը արտայայտութեան ։ Երկրորդ մասը կ'ոգէ հին ազատ օրերու փառաւոր, մխիթարիչ ու վերանորոգիչ յիշատակը՝ ներկային աղջամուղջին մէջ ծիածանի մը պէս յանկարծ նշուլող , եւ վերջին մասը կը փառաբանէ ռուսական զօրութեան գալուստը՝ իբրեւ փրկութեան առաւօտին ծագումը ։

Հետաքրքրական մասնայատկութիւն մը այդ կտորին՝ երեքձեւեան այլազանութիւնն է անոր լեզուին . առաջին մասը գրուած է Բանաքեռի բարբառով, երկրորդ մասը՝ գրաբարախառն աշխարհաբառով , երրորդ մասը՝ զուտ գրաբար . յայտնի է թէ Աբովեան առաջինն եղած է հայ ազգին մէջ՝ գրաբարի անիմաստ տիրապետութեան դէմ մարտնչող, աշխարհաբարի իրաւունքը պաշտպանող եւ իր գործերովն իսկ անոր գոյութիւնն ապահովող. այդ տեսակէտով մեր Տանթէն է ան. ճիշդ է որ Հայերն այնքան դիւրութեամբ չընդդիմացին Աբովեանի բերած նորութիւնը՝ ինչպէս Իտալացիք Տանթէինը . պէտք եղաւ որ Նաղարեան եւ Նալբանդեան, Աբովեանէն յետոյ , բաւական ատեն պայքար մղէին վերջնապէս հաստատելու համար ինչ որ հիմնած էր Աբովեան (իսկ Տաճկահայոց մէջ պայքարը կէս դարէն աւելի տեւած է , եւ դեռ հազիւ տասնհինգ տարիէ ի վեր է որ այդ ալոգիւնքը վճռապէս ձեռք ձգուած է .) գործին հիմնադիրը կը մնայ միշտ Աբովեան ։ Բայց որքան ալ զգացած եւ պաշտպանած ըլլար աշխարհաբարին անհերքելի իրաւունքներուն արդարութիւնը, Աբովեան՝ ապրելով չրջանի մը մէջ ուր գրաբարը դեռ բացարձակ կը տիրապետէր, ինքն իսկ սնած գրաբարով, անոր անդիմադրելի հրապոյրովը սոգորուած , կը պաշտէր այդ լեզուն, եւ չէ կրցած ինքզինքն արգիլել զայն յաճախ գործածելէ . իր գործերուն գրեթէ կէսը գրաբար է գրած , թէպէտ՝ պէտք է խոստովանիլ՝ բաւական անճարակ ու անտաշ գրաբար մը որ այնքան թոյլ է , խառն ու անկենդան , որքան իր աշխարհաբարը ուժեղ, կենսախայտ ու բնական։ « Զանգի »ին ամենէն գեղեցիկ մասը՝ թէ՛ լեզուական եւ թէ՛ դրական տեսակէտով՝ առաջինն է, թէպէտ միւս երկու մասերն ալ զուրկ չըլլան ուժեղ պատկերներէ, սեղմ ու տաք բացատրութիւններէ , եւ այն հրեղէն ներշնչումն որ կտորին ամբողջութիւնը կը լեցնէ։ Նկատելի է որ երրորդ մասը՝ «Զանգի՛, իմ Երա՛սխ, Մասի՛ս, Ալագեա՛զ» բառերէն սկսեալ՝ ոտանաւոր է գրուած , թէպէտ « Կռունկ »ին մէջ արձակի պէս տպուած(1) ։

Աբովեան , որ ամէն բանէ առաջ « բանաստեղծ » մըն է , կը սիրէ՝ ինչպէս արեւելցի աշուղներն իրենց երգախառն քերթուածներուն մէջ՝ իր վիպական կամ նկարագրական գործերուն արձակը (որ արդէն իսկ էապէս բանաստեղծութիւն է) տաղաչափեալ կտորներով կիտուածազարդել ։ Ատոնցմէ զատ , ունի նաեւ բազմաթիւ անջատ քերթուածներ , առակներ , պատմութիւններ , երգեր՝ ոտանաւոր գրուած , աշխարհաբար ու գրաբար։ Ատոնց մէջ կը ցայտին միշտ երկու յատկութիւն , որ արդէն Աբովեանի բովանդակ գործին բնորոշ ու տիրա-

(1) « Կռունկ »ին պէս մենք ալ արձակի ձեւը պահպանեցինք (Անահիտի ծաւալի յուսահատեցուցիչ փոքրութեան պատճառով միայն). բայց մեզի հաղորդուած մասնաւոր տեղեկութեանց համեմատ՝ Զանգիի այդ կտորը ձեռագրին մէջ ոտանաւորի պէս է գրուած և այնպէս ալ պէտք է տպուի երբ Աբովեանի ամբողջ գործերու հրատարակութիւն մը տեղի ունենայ) ։ « Վէրք Հայաստանի »ին մէջ ալ կան կտորներ որոնք իբրև արձակ տպուած են բայց որոնք յայտնապէս ոտանաւոր են գրուած , « Տան կտրներին . . . » մինչև « մէկն էլ ա չփախչի (էջ 150—152) , « Խոտերի դեզերի կրակն ու բոցը . . . » մինչև « գիւմ էլաւ իսպառ կորաւ նա անմայն (էջ 157—158), « Չէ , չէ մտնինք միասին , երթանք միասին . . . » մինչև « Դըժոխքը կ'երթանք ու միշտ կխնդանք » (179—182) ։ — Կան ալ քանի մը հատուածներ կէս-ոտանաւոր ; կէս-արձակ ։

կան յատկանիշներն են, — այն է պարզուկ բայց սուր, նկարուն ու համեղ երգիծանք մը, եւ քնարերգական այն հզօր թռիչը — զոր ոչ ոք Հայոց մէջ բացի Նարեկացիէն եւ՝ մերթ՝ Ալիշանէն՝ հաւասար չափով ունեցած է։ Քնարերգական զօրութիւնը չատերը տեսած եւ ներբողած են Աբովեանի մէջ. բայց երգիծական ուժը կարծեմ թէ դեռ ըստ արժանւոյն նկատուած ու գնահատուած չէ։

Այդ երգիծական տաղանդը կը յայտնուի բազմաթիւ առակներուն, զուարճալի պատմութիւններուն մէջ որոնք մեծագոյն մասը կը կազմեն իր «Պարապ վախտի խաղալիք» եւ «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորադարժից» տիպողոներով հաւաքածուներուն, ինչպէս եւ «Վէրք Հայաստանի»ին խել մը հատուածներուն մէջ։ Առակներուն ու պատմութիւններուն նիւթը յաճախ փոխ առնուած է Լաֆոնթէնէն կամ ուրիշ օտար առակախօսներէ, Նարէտտինի պատմութիւններէ, ժողովրդական աւանդութիւններէ ու զրոյցներէ, մերթ ալ՝ հնարուած է հեղինակէն. անոնց եւ ոչ մէկը սակայն կարելի է պարզ նմանողութեանց կարգը դնել. անոնք այնքան «ստեղծագործութիւն» են որքան նոյն իսկ Լաֆոնթէնի այն առակները որոնց նիւթը Եզոբոսէն կամ Փեդրոսէն առնուած են. կը բաւէ՝ օրինակի համար՝ կարդալ «Կաթնի կճուճ»ը որ Լաֆոնթէնի «Le pot au lait»ն է, Աբովեան զայն այնքան հայացուցած, այնքան իւրացուցած է, որ մենք կարող ենք «հայ» գրականութեան հարազատ եւ ինքնատիպ մէկ էջն համարել։ Բոլոր կտորներուն մէջ կը գտնուի խոր դիտողութիւն, կեանքի հարազատ ըմբռնողութիւն, տիպարներու կենդանի պատկերացում, եւ արտայայտելու սիրուն, կրակոտ, սրամիտ ձեւ մը, լեզու մը՝ ժողովրդական բարբառին ամբողջ կենսավառ հարստութիւններովը բեռնաւոր, տաղաչափութիւն մը՝ ոչ միշտ ներդաշնակ, բայց յաճախ աշխոյժ, թեթեւ, զողտրիկ։ Ահա սկզբնաւորութիւնը «Պարապ վախթի խաղալիք»ի յառաջաբանին։

Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամէջ.
Գլուխդ քաշ գցիր, մի՛ նեղանար դէջ։
Անկաջդ փակիր, սիրտդ լէն բռնիր,
Ինչ ասեն, խօսին՝, տար ու ցամքերիր։
Ճամբորդի գլխին շատ փորձանք կգայ։
Անձրեւ, ձին, կարկուտ ցազիր ցամէշայ։
Դուման ու կայծակ, շոք, բուք ու կրակ
Ամէն տեղ կըլին, ոմէն ժամանակ։

Էսպէս բանիցը ով շուտ վախենայ,
Ու ճամբու կիսիցն վեր կենայ ետ գայ,
Ոչինչ չի շահիվիլ, դարտակ կը մնայ։
Փորձանքից մարդը՝ լաւ չի՝ նեղանայ։

Ի՞նչ ես դարդ անում որ վրէդ խօսեն,
Եա քեզ ծաղր անեն, եա աչքից գցեն։
Ամէնի սրտին դուր գալ չի ըլել.
Ամէնի խաթրը ո՞վ կարայ առնել։

Աշխարքի բերանն ջվալի բերան։
Առակ է ասած՝ ո՞ւմ ասես քո բանն.
Հալբաթ մէկ օր էլ արեւ դուս կգայ,
Էն վախտն կ'իմանան թէ ուզածդ ի՞նչ ա։

Աւելի ուժեղ եւ աւելի սուր գծերով կը ներկայանայ Աբովեանի երգիծանքը «Վէրք Հայաստանի»ին մէջ։ Նկարագրուած բարքերուն ու դծուած տիպարներուն ծիծաղելի կողմերը հզօրապէս՝ թէպէտ անցողակի՝ ալտայայտուած են հոն. ամբողջ գործին մէջ հարիւր տեղ կարելի է գտնել ֆրազներ, տողեր, բառեր՝ որ ի վեր կը հանեն զաւեշտականին այդ մեծ զղացումը. բայց դրքին առաջին մասին մէջ է որ կը գտնուին ամբողջ ընդարձակ հատուածներ ուր հեղինակին հեգնական յատկութիւնը տիրականօրէն կը փայլի. կարելի չէ երեւակայել աւելի սիրուն եւ աւելի ուժեղ երգիծանք մը՝ այդ ատենուան տգէտ քահանաներուն, ստրկամիտ գիւղացի տանուտէրներուն, քան ինչ որ կը գտնենք Աբովեանի վէպին առաջին մասին մէջ։ Տեսէք՝ օրինակի համար՝ սա հատուածը ուր կարդալ իսկ հաղիւ դիտցող քահանաներուն դիմանկարը կը գծէ. «. . . Կոպիտ դեղացու վրայ ի՞նչ ենք զարմանում կամ ծիծաղում։ Գրի սեւն ու սիպտակը հօ՝ էսպէս սեղը տէրտէրներն էլ բռանց էին ջոկում, աւետարան կարդալիս՝ հազար սնգամ եա չէշմակը (ակնոցը) տգում, եա սիրացուի, մղղոս վրայ բարկանում, եա գրակալը գոչներին քաշում, եա գլուխ երես գրքի միջնումը կորցնում, մէկ պտիկ մոմ էլ ձեռներն առնում, եա մոնթի գլխին խփում՝ որ մոմը տուզ բռնի։ Շատ ան-

գամ էլ ո՛ղիանց ո՛ղի մէկ փիս, անմարս, գժարատամ, գլուխ կոտրող բառ էլ որ չէ՛ր ասատ գալիս, հէնց գիտես թէ սատանի թամքը կորաւ, չատ կռանալուցը, մոմը մօտ բռնելուցը՝ ետ գիրքն էր երվում, ետ նրա միրուքը։ Ամա էսպէս բառեր վարալուրդ էին արել, մօտանալիս՝ կամ գլխովն էին պտտում, կամ մէկ գիրն ասում, միւսը կուլ տալիս, ետ թէ չէ սիրը «սուրբ· ես» կարդալու տեղ սոխ կամ սխտոր ասում, սուրը սաղմոս ասելու տեղ զըսրախ, ու ժամ օրհնողն էլ ետ՛ չօռ էր ասում, ետ չէր լսում։ . . . Թէ մէկ վարդապետ էլ պատահում էր էսպէս վախթը, Աստուած հեռո՛ւ տանի, էշը մնում էր ցեխումը խրված, կարդացողի ոտն ու ձեռը դող էր ընկնում, լեղուն կապվում։ Չէ՛ զարմանալու. ի՞նչ անեն խեղճերը. գեղերումը վարժատուն չունին, քաղաքներումը օրինաւոր վարժապետ, ու չատի փորում հինգ օր ման գաս, մէկ այբի կտոր չես գտնիլ։»

Տեսէք նաեւ սա ծաղրանկարը Քանաքեռի «քէտխիւտա»ներուն (երեւելի) որ կիրակի առտու մը եկեղեցիէն տուն կը դառնան. «Քէտխիւտէքը գալիս են տո՛, տեղ արէք, ղրաղ կացէք, ճամբայ բաց արէք,» ձէն տվեց գղիր Կոստանը, մէկ աչքը քօռ, դունչը ծուռը, էնպէս որ միրուքի կէս փայը մնացել էր երեսի վրայ ցից ելած, խճճված, կէս փայն էլ բողազին, չանին կպել, չորացել՝ էնքան խօսացել էր ու հարայ տվել։ Թագաւորն էլ էնպէս ուռած ուռած իր քօչք ու սարէն չէր մտնիլ, ինչպէս մեր գեղի իշխանքը՝ իրանց տաք գոմը. թէեւ չատի հագին այնքան չոր չկար, որ երկու մանեթի գին ունենայ։ Որը մէկ տասը տարվան կտրտված, քրքրված հին եափունջում կոլորված, որը մէկ հազար տեղ կարկատած մաշված քրդի աբայ էնպէս էր ուսերին քաշել, որ ղորդ ա, բերանն ու միրուքը ծածկած ունէր, բայց գօտկի տակից դէնը՝ գլուխդ ապրի՛. պատռտած քօբայի չուխի ծլանկները (կտորները) հազար տեղից էնպէս էին ճոլոլակ ելած ու քամու ձեռին եսիր մնացել, որ փչելիս՝ ուզում էր՝ թէ իրանց էլ հետը տանի։ Գլխընելին հօ՝ էնպէս գիտես՝ թէ ամէն մէկը մէկ սաղ ոչխար ըլէր դրած։ Էն որ մի քիչ չաղ էր եւ եղալի (հարուստ), ոտն ու գլուխը էլի մի քիչ քօք (կոկ) էր, ու Աստծու տվածիցը չորի հոտ էր գալիս վըրներիցը։ Սրանց ամէն բանն էլ կարգին էր. լարչինը թաղայ, մուք մաւի ղաղաք փոխանի ղըրաղները ասղարուր. մաւի քօքաչի չալ չուխայ, կամ Եղդու ղասաք կապայ, սիպտակ կտաւէ, կամ չալէ գօտիկ. չապկընելի եախէն՝ որինը մով, որինը քաթան, արխալղնելը՝ ղորդ ա, կարկատած էր, ամա չատ որ ըլէր, մէկ տասը, քսան տեղ, աւելի չէ, էն էլ ռանդ ռանդ կըտորներով, որը կարմիր, որը դեղին, որը ղօլ ղօլ, էնպէս որ չատի արխալուղը հեռվանց՝ հէնց իմանաս չալ ղաչարի ըլէր, կամ չալ կտավի պոչ։ Ամենիցը գլուխը Նրանց բօրանի քուրքն էր, երեսը կարմիր ներկած ինչպէս մէկ Թուրքի հինայ դրած միրուք, երեսք չունէր. ջանումն էլ բաց տեղ չէր մնում, բոլոր ծածկում էր։ Փէշերը ու նեղ թեւերը բոլորը իշի նոխտի պէս ուսքներիցը կախ ընկած, գետինն էին հասնում ու դիպած տեղը թամուզ աւելում, հայլի չինում. ամէն մէկ քուրք՝ մէկ թաղչափ մազ ունէր, բայց ա՛խ չատ արեւի ու անձրեւի ձեռիցը է՛ն հալն էր ընկել, ներկն ու երեսի ջուրը գնացել՝ որ հէնց գիտես՝ քոսոտ ձիու սաղրի ըլէր։ Շատի վրայ տասը տարուան թոզ ու կեղտ կար։ Շատի ուսերն ու քամակը էնպէս էր ծակվել՝ բուրդն ու մազը դուրս թափել, որ տեսնողը հէնց կ՛իմանար թէ գարունվան բրդըհան էլած ուղտի կաչի ըլէր։ Բազմի փափախի մորթին էլ հօ՝ էնպէս էր չալ ընկել ու ծէրիցը դուս թափել, որ մէկ բարակ քամի կամ հով փչելիս էլ՝ ամէն մէկ մազը թեւ էր առնում ու գլխընելին պար գալիս։ Բայց էլի էնպէս մարդի քէֆը գալիս էր տեսնելով թէ ինչպէս տանուտէրն ու քէտխիւտէքանց չատը՝ գտակները կոտրել՝ աջու ականջի վրայ թեքել, իրանց հինգ ոչխարանի քուրքը քէֆով՝ մէկ էս ուսին էին քաշում, մէկ էն, ու բաղի անդամ՝ գլխընները էլ հետը տրմբացնում էին՝ որ գտակները գիժութիւն չանին, իրանց չափը ճանաչին ու տուզ կանգնին։ Բազի անդամ էլ՝ իրար բռնոթի թաւաղայ անելով, կամ մէկը ձեռը միւսի գօտիկը կամ ճտովը գցած՝ իրանց երեխութիւնը միտքերն էին բերել ու չախայ անում, իրար բոթբոթում, չվացնում, ղոթկացնում, փրթկացնում, ճոթկացնում, մոթկացնում, ու բազի վախտ էլ հրհռում, քրքռում, բրբռում, ղրդը-

ռում. շատը հօ ծիծաղու միջքի իլիկը կոտրտել էր, էնպէս՝ որ ժամիցը ընչանք տուն կը գային, հէնց բոնիր՝ տարի քաշեց, էնքան էին էստեղ, էնտեղ կանգնել ու զրից արել։»

Այս բոլորը մեզի իրաւունք կը տան հայկական երգիծանութեան ալ հայրը նկատելու այդ արտասովոր ստեղծագործը որ մտաւոր գործունէութեան այնքան բազմաթիւ ճիւղերու մէջ ռահվիրայ է եղած Հայոց համար։

Գալով քնարերգական զօրութեանը որ կ՚արտացոլայ Աբովեանի մէջ, աւելորդ կը համարիմ անոր ներբողը անդամ մը եւս հիւսել, այդ մասին զգացած ամբողջ հիացումս արտայայտած ըլլալով նախորդ ուսումնասիրութեանս մէջ։ Այն բազմաթիւ ու այլազան յատկութիւններուն մէջ որով օժտուած է Աբովեան, քնարերգական ձիրքը ամենէն ուժեղն ու տիրականն է. ան կը բոցավառի իր բոլոր գրուածքներուն մէջ, արձակ թէ ոտանաւոր, բայց մանաւորապէս Վէրք Հայաստանի՛ն, Զանգի՛ն եւ իր կարգ մը ոտանաւորներուն մէջ։ Այդ ոտանաւորները շատ անհաւասար են անշուշտ. կան կտորներ որ պարզապէս տկար են. չեմ սիրեր օրինակի համար իր «բայաթի» անուանած քառեակները, որոնք բաց ի վերջինէն՝ անիմաստ բաներ են՝ աւելի երկուելու համար գրուած. բայց զմայլելի «աշուղական գրուածներ» են՝ թէպէտ տկար տողերէ, կրկնութիւններէ ոչ զերծ՝ Վէրքին ողբերը՝ մեծ մասամբ, ինչպէս եւ իր միւս հաւաքածուներուն մէջ քանի մը կտորներ, «Ազգասէր մարդը իր մեռնելու վախտը», «Աղասու սրտի տխրութիւնը». ահա՛ այս վերջինը.

Լուսինն ամպերի միջովն լեղ տալով,
Սարերի ծերին շող գցելով,
Հազար տերեւի, թփի արանքով,
Ոսկու պէս ֆռֆռում, փայլում է լուսով։

Մէկ մութը ձորում քաշվել եմ նստել,
Սիրուն աղբերի ջրին անկաջ դրել.
Ջորս կողմս հովացել, անուշ հոտ բռնել,
Իմ սիրտն ա միայն խաւար մնացել։

Ե՛րաբ, էս սիաթին ո՞ր բարի հրեշտակն՝
Թեւերը փռած երեսիդ։ Ու փակ
Աչքերդ իր լիսը աշխարքից ծածկել,
Հոգիդ անուշ քուն մտել դինջացել։

Կամ թէ չէ դու էլ կանգնել ես դռան,
Ինձ միտքդ բերում՝ նազլու հրեշտակ ջան։
Ի՞նչ կըլէր՝ մէկ հով շունչդ էլ ա բերէր,
Երեսովս տար ու հոգիս տանէր։

Առաւօտն էլի լիսը կբացվի,
Բալքի թէ արեւն էս օր ուէր մտնի.
Թող էս չոր քարը գերեզմանս ըլի.
Նազլո՛ւ ջան, մէկ օր էլ ա վրէս արի։

Աբովեանի գրաբար գրուածքները՝ ինչպէս ըսի արդէն՝ ընդհանրապէս նուազ ուժեղ են քան աշխարհաբար գրածները. գրաբարը յայտնապէս խնամքով ուսումնասիրած է. բայց չի գիտեր զայն վարպետի պէս գործածել. գէշ հագնուած հագուստի մը պէս է իր մօտ. «ժողովրդական» մարմինը տակէն կը զգացուի, ինը ճմրթկէ պատմուճանը, կը տձեւցնէ զայն. բայց ասով հանդերձ, գրաբար ոտանաւորներուն մէջ, կան մերթ՝ հրաշալի կտորներ, բանաստեղծական շքեղ ներշնչմամբ, ինչպէս «Մտածմունք ի տեսիլ հայրենեաց» քերթուածը։

Բուռն ժամանակին բարձեալ զիւր կռան՝
Անխիղճ խստութեամբ՝ ի ձեռն զմահիկ՝
Մանրէ ջախջախէ, ի սուղ այս վայրկեան,
Զփափուկ երեսաց երկրի մեր փշացանկ։

Կրկէսք, ամբարտակք, բրգունք հաստարմատք,
Վերի մատիւնն, կամ ձեռագործք մարդկան,
Բարձունք երկնահիրոսք, լերինք յաղթանդամք
Ի շանթ նորա դառն սուզանին անձայն։

... Ազգաց՝ քաջապանծ հսկայից կաճառք,
Ձաւակք, զարմք, ժառանգք ի մոխիր ցնդեալ,
Ցանսանձ նորա մրրիկ մատնեալ ի յաւար՝
Միոյ վայրկեանի կեր լիցին՝ վատնեալ։

Դու միայն տաճես նազելի մատամբ
Ի քոյդ գիրկ քնքուշ, ի քոյդ ծոց փափկիկ,
Փնջեալ, բոլորեալ հաղաճնոյն քրտամբ
Ձանզոր ճիռ չնչին՝ Մուսայդ իմ գողտրիկ։

Ձի՞նչ այս ձորավայր, այս սուղ կենաց լար,
Մթին, դառնաբնակ, խզուն, դիւրաբեկ,
Թէ քո սուրբ շնչոյ զեփիւռ կենսարար

Ոչ գորովեսցի զծաղկունս մաիաներ՝:

. . . . . .

Եւ դեռ շատերն իր բանաստեղծութիւններէն կը մնան անտիպ կամ միմիայն «Կռունկ Հայոց աշխարհի»ին մէջ հրատարակուած։

Պ. Տէր-Սարգսեանց իր Աբովեանի երկերու յառաջաբանին մէջ եւ Պ. Ներսէս Տէր-Կարապետեան Աբովեանի մասին իր ուսումնասիրութեան մէջ (Լոմայ 1897) կը յիշեն տիտղոսներ շատ մը գործերու, որոնց ահա մէկ քանին (տաղաչափական գրուածներէն). «Մուտ Հայկայ ի Հայաստան եւ արհաւիրք երեւակայութեանն նորա ի ժամ պատերազմին». «Մենասական Ս. Գեղարդայ Վանի». «Կարօտութիւն նախնի վայելչութեանց հայրենեաց իմոց». «Աղերս առ Մուսայն ի դէմս Հայաստանեայց». «Ցաղաւութիւն Հայաստանեայց». «Ղարիպ». «Աչքի լոյս ջան, դարդ մի՛ անիլ». «Ծնունդ Քրիստոսի». «Թայիսայ, հին բալլադ». «Հեկտոր». «Աղօթք առաւօտեան». «Նախատանմանութիւն». «Գարուն». «Տխուր տեսարան ազգին եւ սգաղդեաց Հայաստանի առ նահատակութիւն սրբոց Վարդանանց». «Առ Վարդան». եւն։ Այս բանաստեղծական արտադրութիւններէն զատ, կը յիշուին տիտղոսներ այլազան սեռերու պատկանող գործերու, ինչպէս «Մտածմունք ի վերայ խաչելութեան Տեառն». «Բան ի վերայ Ցարութեան», «Ցունայնութիւն աշխարհային բախտին», «Ի վերայ հայրենասիրութեան», «Գիշերն ամարային», «Ի վերայ Հաղորդութեան», «Ի վերայ նաւագնացութեան», «Ամարային առաւօտն ի գիւղս», «Երեւակայութիւն ի վերայ ճանապարհորդութեան ի լեառն Արարատ», «Ադնէս, պատմական աշխարհագրութիւն», «Աղնուամտութիւն եւ շնորհալիութիւն», «Լինդա, պատմութիւն», [illegible] հոլոս մեծի պատմութիւնը», «Երազ Պետ[illegible]» Կա[illegible] [illegible]տեղծի», եւն. ու վերջապէս՝ [illegible] բարկայ բանա[illegible] ճանապարհորդական [illegible] բաղմաթիւ նամակներ, [illegible] եւ ֆոլքլորնկարագրութիւններ, տեղագրական գրուածքներ, այս վերջիններէն [illegible] մէկ մասը գերմաներէն ու ռուսերէն շարադրուած (յայտնի է որ Աբովեան շատ բան, դիտէր հայկական, ինչպէս Թուրք-պարսկական կեանքէն, ու իր հայրենիքին եւ անոր մէջ բնակող այլեւայլ ցեղերուն բարուց, սովորութեանց, նախապաշարմանց, տօներուն, աւանդութեանց եւ ժողովրդական երգերուն վրայ առատ պաշար կուտակած է իր այդ կարգի գրութեանց մէջ ինչպէս եւ մեծ մաս մը ալ հայթայթած է Հաստկհաուզէնի, Վակնէրի պէս օտար ճամբորդներու եւ Պոտէնաշդէտ բանաստեղծին)։ — Ցանկալի էր որ՝ երբ խաղաղութիւնը վերահաստատուի Կովկասի մէջ՝ մեր ռուսահայ եղբայրները յանձնախումբ մը կազմէին՝ Աբովեանի «ամբողջ գործերը» կենսագրական ընդարձակ ուսումնասիրութեամբ մը՝ հրատարակելու համար։

Պ. Տէր-Սարգսեանի հատորին մէջ՝ Աբովեանի ճանապարհորդական նկարագրութիւններէն միայն փոքրիկ հատուած մը կայ, (Արարատայ վերելքի մը տպաւորութիւնները) գրաբար շարադրուած ու մեծապէս շահեկան՝ թէ՛ գրական եւ թէ՛ տեղագրական տեսակէտով։

Այդ հատորին երկրորդական կտորներուն մէջ իսկ՝ ինչպէս են «Խաղարկութիւն մանկանց»ը եւ «Թէօդորայ» միարար երգախաղը, արժանիքի կայծ մը կը նկատուի. «Խաղարկութիւն մանկանց»ը մանկական գրականութեան առաջին փորձն է, շատ սիրուն կերպով կատարուած. ատով Աբովեան ճամբան կը հորդէր Պ. Աղայեանին որ յետոյ այդ ճիւղը զարգացուց։ «Թէօդորայ»ն որ Աբովեանի միակ թատերական փորձն է (նիւթը՝ ռուսական կեանքէ առնուած ու հաւանականաբար նմանութիւն տիկին Քոթէնի Սխորականի ի Սիպերիա վէպին), լաւ դարձուած մելոտրամ մըն է, ժողովրդական անուշ լեզուով մը գրուած, եւ հայ թատերագրութեան նախափորձերուն մէջ արժանի է որոշ տեղ մը բռնելու։

* * *

Աբովեանի բազմաձեւ եւ ընդարձակ գործին ամենէն հզօր մասը՝ նորէն՝ վիպական արտադրութիւններն են, որոնցմէ մեզի ծանօթ են «Վէրք Հայաստանի»ն, «Զանգի»ն, [illegible] մը [illegible] աւելցուած է «Վէրք»ին) եւ (որ [illegible] Վիպակը՝ Օվսանայ [illegible]

«Օվսանայ»ն դեռ չէ գնահատուած մեր մէջ՝ ինչպէս որ արժանի է։ Որքան ալ նիւթով նրուազ կարեւոր եւ աւելի սահմանափակ ըլլայ քան Վէրքը, Օվսանայն իր տեսակին մէջ հրաշակերտ մըն է. տպաւորութիւնը զոր կրեցի այս օրերս՝ վերընթեռնլով զայն՝ անխառն ու խոր զմայլանք մը եղաւ. կրնամ ըսել որ այդ վիպակը մին է ամենէն աղուոր տասը նորավէպներէն որ գրուած ըլլան հայերէն լեզուով եւ մին ամենէն սիրուն «ռոմանթիք» նորավէպներէն որ գրուած ըլլան ո եւ է լեզուով. ամէն պարագայի մէջ Աբովեանի մեզի ծանօթ գործերուն մէջ ամենէն «կատարեալ»ն է. այն թերութիւնները որ իր միւս գրուածքներուն մէջ կը նկատուին, հոս բացակայ են. դէպքերուն հիւսքը ոլորուած է մեծ ճարպիկութեամբ, սիպարները գծուած են վարպետի ձեռքով, բարքերը նկարուած են ուժեղ, ժուժկալ եւ ցայտուն գծերով. ոճը, միշտ համեղ ու նկարագեղ, սեղմ է. ոչ մէկ մանրամասնութիւն, ոչ մէկ բառ չկայ աւելորդ. գիւղական տարփանքներու այդ քնքոյշ ու սրաղէտ պատկերացումը անթերի գոհար մըն է՝ որ՝ ո եւ է լեզուի թարգմանուած նոյնութեամբ՝ կարող է սքանչացում պատճառել։

* * *

«Վէրք Հայաստանի»ն Աբովեանի ամենէն կարեւոր գործն է բայց եւ ամենէն լեցունը թերութիւններով։ Նախորդ ուսումնասիրութեանս մէջ՝ ծանրանալով յատկութիւններուն վրայ, սքօղած էի թերութիւնները, նոյն իսկ ջանալով զանոնք չքմեղացնել։ Դժբաղդաբար, մեծ են այդ թերութիւնները։ Ամենամեծ թերութիւնն այն է որ վէպը որոշ յատակագիծ մը չունի. Աբովեան գրած է՝ մղուած իր յուզմունքէն, եւ ոչ թէ վարելով իր յուզմունքը. Աղասիին փախուստէն յետոյ, հեղինակը Երեւանի բերդին հոյակապ նկարագրութիւնը կը հիւսէ՝ մոռնալով սակայն զայն առթող էական կէտը՝ այն է Աղասիի հօր հոն բանտարկուիլը, եւ կ'անցնի իսկոյն «Մուհարրամ»ի տօնին նկարագրութեան, եւ յետոյ՝ Խլղարաքիլիսայի պայքարին՝ ուր Աղասիի դիւցազնութիւնը կը պատկերացնէ՝ առանց ցոյց տալու այն բոլոր դէպքերը որոնցմէ անցած էր Աղասին մինչեւ այդ պայքարին օրը. գործին վերջին մասին մէջ է որ կը պատմէ՝ եւ հապճեպով, ու չփոթ կերպով՝ այդ բոլոր մանրամասնութիւնները զոր երկրորդ մասին սկիզբը պէտք էր պատմէր։ Տեղ տեղ, միջադէպ մը՝ զոր սկսած է վիպել՝ անաւարտ կը թողու, եւ կ'անցնի ընդհանուր նիւթին։ Աղասիէն զատ, վէպին միւս դերակատարները՝ շատ հարեւանցի կերպով նկարուած են. Նազլուն, Աղասիի կինը, իր նամակներովը եւ Աղասիի սիրերգնկզրվը կ'երեւայ։ Գործը զուրկ է նաեւ ձեւի միութենէ. մերթ վէպ է, մերթ պատմական քրոնիկ, մերթ խրատաբանական քարոզ, մերթ նոյն իսկ գրականութենէ դուրս կ'ելլէ՝ նամակի, անձնական յուշագրի երեւոյթ մը կ'առնէ։ «. . . Քօռանայ իմ աչքս, որ էսպէս բան չէի տեսել։ Հազար անդամ Աղասու հօր հացը կտրել, հեւը քէֆ եմ արել։ Բարեկենդանին էլ որ Աղասին վախաւ, նրանց տան քէֆ անողների մէկն էլ ես էի։ Իմ որդիս, ա՜խ, ջիւան Մօսին էլ էր՝ նրան հետ փախել։ Բայց ես լսում եմ թէ դեռ նա սաղ ա . . . »։ «. . . Ա՜խ, սի՛րելի կարդացող, էլ ի՞նչ երկարացնեմ էս սարսափելի պատմութիւնը . . . Ա՜խ, էլ ի՞նչ գրեմ, ձեռս թուլանում ա, սիրտս արին կաթում . . . ա՜խ, բաս Աղասու սուգն ո՞վ անի, նրա ջիվան ումրն ու օրը ո՞վ լաց ըլի։ Ե՜ս, ե՜ս, ողորմելիս, նրա գերեզմանին զուրբան, ա՜խ, բաս նա որ ինձ էնքան երեխայ ժամանակս իր ծնկան վրայ խաղացրել ու ինձանով մխիթարվել ա, բաս ես քար պիտի ըլիմ որ նրա սուգը չանիմ, . . . Սի՛րտ, էլ չեմ կարող տանիլ. ո՞վ ջիգեար ունի, ինքն իմանայ, մնացածը էգուց կը զրեմ։» Ցաւալի է որ Աբովեանի գլխաւոր մտահոգութիւնը եղած է ոչ թէ գեղարուեստական գործ մը արտադրել, այլ իր հայրենակիցներուն օգտակար ըլլալ՝ կարգ մը զգացումներ տարածելով, խել մը թերութիւններ քննադատելով, կարեւոր չրջանի մը պատկերը գծելով, քաջի մը յիշատակն անմահացնելով։ Ցաւալի է որ երկուքը մէկտեղ ընելու կարելիութիւնը եւ անհրաժեշտութիւնը նկատի ունեցած չըլլայ։ Քարոզները մերթ անտանելի կերպով երկայն են ու տիրացուական, կը զգացուի իր քանի մը հատ

ուածներէն թէ ինքը՝ սիրելով հանդերձ Հայ Եկեղեցին՝ կրօնամոլ չէր, եւ կղերականներու ստրկացուցիչ դերը ցոյց տուած է բաւական յանդուգն տողերով. բայց մերթ ինքն իսկ՝ կրօնամոլ ու ծթռած զգացումներ կը յայտնէ, տեղ մը Անիի կործանումը լրջօրէն կը վերագրէ Յովհան Երզնկացիի մը անէծքին, ու յաճախ տղղութիւնը Հայ Եկեղեցիին հետ կը շփոթէ. «Էս սիրտը, էս հաւատը, էս հոգին, էս սէրն ունէր հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի՝ երկիր, աշխարհ, ազատութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, մեծութիւն, բոլոր բոլոր կորցրեց, իր հաւատին մատաղ տվեց, աղքատութիւն, նոքարութիւն, գերութիւն, դարիբութիւն, տանջանք, չարչարանք, սով, մահ յանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսաւորչադաւան օրէնքը ամենը հաստատ եւ անխախտ պահի։» Վէպին հերոսը, Աղասին, Հայոց արիւնը խմող Հասան Խանին յաղթելէ եւ զայն իր ձեռքն անցընելէ յետոյ, ատեն կը կորմնցնէ՝ լուսաւորչական կրօնքը անոր ընդունել տալու տէրտէրական ողբալի նպատակով, այնպէս որ քիչ յետոյ գազանը՝ յաջողելով օձիքն ազատել՝ վերստին գլուխը կ'անցնի իր Թուրքերուն եւ հարիւրաւոր Հայեր կը ջարդէ նորէն . . .։

Իր հերոսները շատ երկայն կը խօսին. ողբերը անվերջանալի են, միօրինակ. Թադուհիին մօր ողբը հրաշալի պիտի ըլլար՝ եթէ երեք քառորդը ջնջուէր. ջարդի, հալածանքի նկարագրութիւնները հոյակապ են, բայց շատ յաճախ կրկնուած, միակերպ, եւ ի վերջոյ կը յոգնեցնեն ընթերցողը։ Ոճը մեծապէս անհաւասար է, դիւցազներգական ամենավսեմ բարձունքներէն կ'իջնայ հասարակ խօսակցութեան ամենէն տափակ դռեհկութեանց։

Այս բոլոր թերութիւնները չեն արգիլեր Վէրք Հայաստանի՝ հայ գրականութեան ամենէն հսկայ յիշատակարաններէն մին ըլլալէ. ինչ որ կայ հոն գեղեցիկ՝ այնքան բարձրօրէն գեղեցիկ է, այնքան անզուգականօրէն հզօր, որ գործին ամբողջական ընթերցումէն մնացած տիրական տպաւորութիւնը կ'ըլլայ՝ անխուսափելիօրէն ընկճող հիացում մը, — խառնուած միայն՝ նրբաճաշակներուն համար՝ աւազանքով մը որ Աբովեան երկրորդ ընթերցմամբ մը մաքրած չըլլայ վէպն իր պակասութիւններէն։ Անխառնօրէն ճաշակելու համար այդ վէպին հրապոյրը, լաւագոյն է գեղեցիկ հատուածները զատ զատ կարդալ. այդ ձեւով՝ տպաւորութիւնը ջախջախիչ է։ Քիչ բան կայ ո եւ է դրականութեան մէջ այնքան հզօր, այնքան ջղուտ, այնքան ինքնատիպ ու ցեղադրոշմ, այնքան խոր զգացուած եւ ուժեղ արտայայտուած, որքան Վէրք Հայաստանիին կարգ մը հրաշալի կտորները։

* * *

«Վէրք Հայաստանի»ին մէջ՝ ուրիշ տեսակէտով՝ նկատելի կարեւոր կէտ մը, Աբովեանի բոլորանուէր, անվերապահ, երկրպագողական ոուսասպաշտութիւնն է։ Աբովեան «Ռուս» բառը կ'արտասանէ ինչպէս ամենաջերմեռանդ քրիստոնեայ մը «Աստուած» բառը կ'աղաղակէ։ Տեսէք։ «Տէ՛ր Աստուած, դու մեր Ռուսի թագաւորի սիրտը ոանմ դցես որ դայ մեզ ազատի, ընչանք մահ մի՛ տար մեզ, մինչեւ նրանց երեսը տեսնենք» (հայ տէրտէրն է որ այսպէս կ'աղօթէ՝ Ռուսաց դալուսաէն առաջ)։ — «Օրհնվի էն սնաթը, որ Ռուսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարը մտաւ ու Ղզլպաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կայ, պէտք է գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մաքընեաս բերինք, ու Ռուսի երեսը տեսնելիս երեսներս խաչ հանենք, Աստուծուն փառք տանք, որ մեր աղօթքը լսեց, մեզ Ռուս թագաւորի հզօր աստուածահաստատ ձեռի տակը բերեց։ Բայց թէ մինչեւ էս բախտին հասնիլը, ի՞նչ օր ենք քաշել, ի՞նչ գիւլլէք ա դիպել մէր խեղճ ազգի գլխին, ինչ թրեր ա նրանց լերդն ու թոքը կերել, էրել, նրանց արիւնը վէր ածել, քանի՛ քանի՛ անդամ են քոչել, տնընհան, տեղընհան էլել, քանի՛ քանի՛ իշխանք՝ որը կրակով, որը փէտի տակին իրանց հոգին տվել, ով ուզում ա իմանալ, հետս գայ, գնանք էլ էդ Երեւան . . .։» — «Հաստատ մնայ Ռուսի թագաւորութիւնը, որ մեր ազգն ու աշխարքը գերութիւնից ազատեց, իր բարեգութ ձեռի տակը բերեց ու հոր պէս մեզ խնամում պահպանում ա. էն ի՞նչ լեզու, էն ի՞նչ աչք պէտք է ըլի, որ ամէն մէկ երկինքը տեսնելիս՝ փառք չտայ Աստուծոյ, երեսը գետինը չքսի ու

մեր ամենողորմած կայսերը կեանք, առողջութիւն, զօրութիւն, նրա արքայազն որդոցը եւ զաւակացը՝ կենդանութեան, բարեբախտութիւն, ու հզօր տէրութիւնը հաստատութիւն, պայծառութիւն, մշտական տեւողութիւն չխնդրի, չաղաչի։» «Հայոց արտասուալից աղօթքը՝ որ գիշեր ցերեկ անում էին, թէ ե՞րբ կըլի մէկ Ռուսաց՝ իրանց հաւատակցի՝ երեսը տեսնեն, ետոյ հողը մանին, լսեց Աստուած ու կատարեց, խաչի լիսի ու Ռուսաց մարդասիրութեան շնորհքը ապառաժն էլ կակղացրին, ու Հայաստանի չոլ, ամայի դաշտերը էս օր մարդաբնակ էն դառել ու Ռուսաց աղգի խնամքը վայելում, իրանց սուրբ աշխարքը կրկին շէնացնում։» «Ինչպէս բարեկամ, ինչպէս երկնային աւետարեր հրեշտակ՝ աղատութեան ողորմութեան պսակը ձեռին՝ մտաւ իշխանն Պասքեվիչ Սարատարի ամարաթը։ Նա անց կենալիս հազար տեղ տեսել էր ու արտասունքը բռնել, թէ ինչպէս էին Հայոց մանուկ, աղջիկ, պառաւ, չէ թէ մինակ իր ոտը համբուրում, այլ եւ շատը ընկնում էին սալտաթների ճտոին ու էնպէս նուաղած, հոգին քաղված մնում։ Քանի Հայաստան իր փառքը կորցրել էր, քանի Հայք իրանց գըլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք գցել, էս օրը, էս ուրախութիւնը չէին տեսել, չէին վայելել։ . . . Ռուսք էն մութը հոգին չունէին որ Նապալէոնի պէս մարդին իրանց մեծահոգութեանը ապաւինելիս՝ նաւ գցեն, որ գնայ իր դաւն օրը ովկիանոսի միջումը վերջացնի, չէ՛, Ռուսք իրանց թշնամուն, էնպէս անարդ հոգուն էլ ցոյց տվին էս օր, որ իրանց ոտքը որտեղ որ մտնի, էնտեղ բախտաւորութիւն ու խաղաղութիւն պէտք է ըլի։ Հասան Խանը գլուխն էր դէմ անում, որ կարեն, Պարսիկները երեսներն էին փռում որ ոսնակոխ անեն, բայց Պասքեվիչ, անօրինակ հսկայն՝ մէկին հանդիսով թիֆլիզ ուղարկեց, միւսոցը շնորհք, ողորմութիւն ցոյց տվեց։ Եւրոպացիք Ամերիկայ աւերեցին, հոգի հաւասարեցին, Ռուսք Հայաստան կանգնացրին, ու Ասիացւոց բիրտ, գաղան աղգերին մարդասիրութիւն ու նոր հոգի տվին։ Աստուած ի՞նչպէս չպէտք է նրանց թուրը կարուկ անի. պատմութիւնն ի՞նչպէս չպէտք է Պասքեվիչին աստուածացնի. Հայք ե՞րբ կարեն Ռուսաց արածը մոռանալ, քանի չունչ ունին։»

Այս զգացումները թերեւս տարօրինակ թուին կարդ մը Հայոց որ այս վերջին շրջանին մէջ ատոնց տրամագծորէն ներհակ զգացումներ յայտնեցին։ Անոնք շատ բնական պիտի թուին երբ ի նկատի ունենանք պարագաներն ու դէպքերը որ անոնց ծնունդ տուած են։ Արեւելեան Հայաստանը, երբ դեռ ռուսական զօրութիւնը հոն չէր հաստատուած, այն խայտառակ ու պժգալի կացութեան մէջ կը գտնուէր ուր կը գալարուի այսօր Օսմանեան Հայաստանը. այդ մասին որոշ ու կենդանի գաղափար մը կազմելու համար չկայ աւելի հզօր ու հարազատ տուքիման քան նոյն իսկ «Վէրք Հայաստանի»ն, որուն ամենէն հոյակապ հատուածները ճիշդ անոնք են ուր մահմեդական լուծին տակ Հայուն անորակելի տառապանքը կը նկարագրուի. «Երեւանու բե՛րդը, Երեւանու բե՛րդը, ա՜խ, աչքս դուս գայ, քանի՛ քանի՛ ողորմելի Հայի միս ա կերել, քանի՛ քանի՛ անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթէ չամփրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց ետը, կամ թօփի գիւլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրայ ա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն ատամներովը կրծելով, աչքերը դուս տրաքելով, փոթոթվելով հոգին աւանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դաւն աշխարքից, էն կատաղի գազանների ձեռքից։ Քանի՛ քանի՛ ջահիլ երիտասարդ՝ մէկ սաղ օճախի մէն մենակ որդի, մէկ աղքատ չքաւոր տան սիւն, մխիթարութիւն, մէկ տասը գլուխ քիւլֆաթի տէր ու ապաւէն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արեւի նոր բաց էլած ժամանակին կամ սաղ սաղ քերթվել ա՝, կամ իր պատուական գլուխը դաւան պէս թրին դէմ արել, որ երկնքումը իր ջահելութեան մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անաւրատ արնին էր ծարաւ՝ որ չուտով իմի ու բալքի կշտանայ։ . . . Հերիք ա, հերիք ա՝ ասող կըլի ինձ, ձեռք վերցրու էդ դժոխքիցը, ի՛նչ էլաւ քեզ։ Ա՜խ, ի՞նչպէս ձեռք վերցնեմ. բան ո՛ւր թողունք մեր աղգի էն սիրուն սիրուն լուսաշաղախ աղջիկները. բաս մի ողորմի էլայ չի՞ պէտք է ասենք, որ երեսների վրայ, քարի, աւազի, փշի, տատասկի վրով՝ մաղներիցը

Այս զգացումները թերեւս տարօրինակ թուին կարդ մը Հայոց որ այս վերջին շրջանին մէջ ատոնց տրամագծորէն ներհակ զգացումներ յայտնեցին։ Անոնք շատ բնական պիտի թուին երբ ի նկատի ունենանք պարագաներն ու դէպքերը որ անոնց ծնունդ տուած են։ Արեւելեան Հայաստանը, երբ դեռ ռուսական զօրութիւնը հոն չէր հաստատուած, այն խայտառակ ու պժգալի կացութեան մէջ կը գտնուէր ուր կը գալարուի այսօր Օսմանեան Հայաստանը. այդ մասին որոշ ու կենդանի գաղափար մը կազմելու համար չկայ աւելի հզօր ու հարազատ տուքիման քան նոյն իսկ «Վէրք Հայաստանի»ն, որուն ամենէն հոյակապ հատուածները ճիշդ անոնք են ուր մահմեդական լուծին տակ Հայուն անորակելի տառապանքը կը նկարագրուի. «Երեւանու բե՛րդը, Երեւանու բե՛րդը, ա՜խ, աչքս դուս գայ, քանի՛ քանի՛ ողորմելի Հայի միս ա կերել, քանի՛ քանի՛ անմեղ հոգի՝ տարիքներով չարչարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ ըլելուց, կրակի, բոցի, երկաթէ չամփրի, թոխմախի, կրակած քարփչի տանելուց, համբերելուց ետը, կամ թօփի գիւլլի հետ ա թռել, հազար կտոր էլել, կամ տարաղաջի (կախաղանի) վրայ ա՝ գոռալով, երկինք, երկիր աղաչելով, իր միսն ատամներովը կրծելով, աչքերը դուս տրաքելով, փոթոթվելով հոգին աւանդել, երկինքը գնացել, որ պրծնի էս դաւն աշխարքից, էն կատաղի գազանների ձեռքից։ Քանի՛ քանի՛ ջահիլ երիտասարդ՝ մէկ սաղ օճախի մէն մենակ որդի, մէկ աղքատ չքաւոր տան սիւն, մխիթարութիւն, մէկ տասը գլուխ քիւլֆաթի տէր ու ապաւէն, իր ծաղկած, դալար հասակին, իր ըմբրի ու արեւի նոր բաց էլած ժամանակին կամ սաղ սաղ քերթվել ա՝, կամ իր պատուական գլուխը դաւան պէս թրին դէմ արել, որ երկնքումը իր ջահելութեան մուրազն առնի, վայելի, չունքի երկիրը նրա անաւրատ արնին էր ծարաւ՝ որ չուտով իմի ու բալքի կշտանայ։ . . . Հերիք ա, հերիք ա՝ ասող կըլի ինձ, ձեռք վերցրու էդ դժոխքիցը, ի՛նչ էլաւ քեզ։ Ա՜խ, ի՞նչպէս ձեռք վերցնեմ. բան ո՛ւր թողունք մեր աղգի էն սիրուն սիրուն լուսաշաղախ աղջիկները. բաս մի ողորմի էլայ չի՞ պէտք է ասենք, որ երեսների վրայ, քարի, աւազի, փշի, տատասկի վրով՝ մաղներիցը

բռնած՝ քարքաշան անելով, գլխընեբին խփելով, մէջքընեբին զամշելով, շատ անգամ փոբընեբի վբայ պաբ գալով, քացի տալով, Թբեւեւելով, Թուբ քաշելով, տբոբելով, Թվանքի ռոքով, լափչընի նալչով տալով, եա կխչոբելով, ձեռընները կապած, ոտնները բխոված, շատ անգամ հաբիբ վեբստ տեղից՝ հէբնը մէբն ետեւներից ընկած, քիբ, ախպեբ բոպիկ ոտով, եա գլխաբաց, քեռի, փեսայ, ազգական՝ գոչընները ծեծելով, մազընները պոկելով, հոգ ուքաբ գլխընեբին տալով. ինչպէս մէկ սուբու գառն ու մէբը կոբցբած ոչխաբ՝ տանում էին բեբդն ածում, որ իբանց սբդաբ իմամներին փայ չինեն, հաբստացնեն, Թուբքացնեն։ Շատը հէնց տանն իբ հոգին տալիս, շատը ճամփին, հոբն ու մոբն առաջին էն կեանքը գնում ուբ ցաւ, ուբ վիշտ է՛լ չկա՛յ . . . »։

Եւ այս բոլոբ ֆիզիքական մաբտիբոսութիւնը ըստ իս գեռ շատ Թեթեւ չաբիք մըն էբ բաղդատմամբ հոգեկան տաբկացման ահաւոբ չաբիքին որ մահմետական լուծէն կուգաբ Հայուն . . . Ահա կտոբ մը Վէրք Հայաստանիէն։ զոբ անկաբելի է կաբդալ առանց ամօթէ եւ ցաւէ չիկնելու.

« Սաբտաբ, գլխիդ զուլբան, ասեցին Սվանզուլի խանն ու Սհակ աղէն, ու ձեռ ձեռի տբված՝ ընկան դիւանխանէն, հէնց էն սհաթին, որ խեղճ Հայեբի կոնեբն ու աչքեբը կապել՝ չոքացբել էին որ գլխընեբը տան։ Դահիճները Թուբընները սբել՝ գլխընեբին կանգնել էին։ — « Սաբտա՛բ, մեբ գլուխն էլ սբանցի հետ տուբ, ասացին, չոքեցին, ու ուզում էին իբանց ձեռովն իբանց աչքը կապեն։ « Տուն, մալ, տովլաթ, օղլուշաղ, զովում, զաբդաշ՝ գլխիդ ետիբ ըլին։ Ձեռընեբիցը բռնիբ, ջուբն ածիբ, մեբ հոգին առ, ու էս անմեղ խալխին սուբը մի՛ քաշիբ։ Սաբը քո առաջին գլուխ չի բաբձբացնել, ծովը քեզ տեսնելիս՝ բեբանը կփակի. ոտդ թափ տաս՝ երկիբը Թեւ կ՛առնի, կթռչի. աբաբած աչխաբքը քո Թբիդ առաջին զուլ ա Թառել. անումդ երկնքումն ա ձէն տալիս, աչքդ որ տեղ գցում ես՝ աբեգակ է բաց ըլում. ինչպէս մէկ լաչաբ աղջկայ խաթեբ, մէկ երկու նոքաբի խոսքով՝ էսքան տուն քանդում . . . ։ Էրկինքն էլ ա քոնը, ի՛նչ Թէ երկիբս։ Աբաբած աչխաբքս քեզ ա գլուխ վեբ բեբում. մեկ աղջիկն ի՞նչ ա, որ նբա խաբեբ քո խալխի տունն ուզում ես քանդես։ Աղջիկ ես ուզում՝ հազաբը կայ։ Ո՞ւմ աչքդ առնի՝ որ քեզ մատաղ չըլի։ Մեբ ջանն ուզի, որ քեզ տանիք, աղջիկն ո՞ւմ շունն ա։ . . . Սաբտա՛բ, երկնքի, երկրի տէ՛բ, Սաբտա՛բ, զու չես մեբ չլինքը տալ, մե՛նք մեբ Թուբը մեբ սիբտը կխբենք։ Թէ մեբ աբինը քեզ համաբ Թանկ ա, սբանց զլուխը մեզ բաշխիբ։ Քո դբան շունն ենք, մեզ մի՛ կոբցնիբ։ » Էսպէս աղաչանք աբին, ու չօքըչօք Թբընները տաբան, Սաբտաբի առաջին զբին, ոտ տակն ու փէչը համբուբեցին, երեսներին քսեցին ու գլխընեբը գետնին կպցբին . . . ։ »

Ամենէն մոլի ռուսատեացը պիտի խոստովանի որ ամենէն վայբագ ռուս պաշտօնատաբին ու ո եւ է Հայու միջեւ այսպիսի զզուելի տեսաբան երբեք չէ անցած. ինչ « քաղաքական » հալածանք ալ յաբուցած ըլլան ռուս կառավաբութեան այս կամ այն ներկայացուցիչները Հայ ազգութեան դէմ, ամենէն այլանդակ չինովնիկը պիտի « չհանդուրժէբ » որ իբ առջեւ մաբդկային էակներ այսպիսի լեզուով մը խօսէին . . . ։

Հասկանալի է որ այդ բոլորն իբ աչքովը տեսած, իբ մոբթին վբայ կբած Աբովեանը իբբեւ երկնառաք ազատաբար մը նկատէբ Ռուսը, ոբուն մուտքը վերջ դբաւ Հայոց ամօթալի կացութեանը։ Տաբօրինակ է նոյն իսկ որ մեբ «ազգասէբ»ներէն ոմանք այս վերջին չբջանին մէջ բոլորովին մոռցած ըլլան այդ կաբեւոբ իբողութիւնը. այն բոլոբ ահագին յառաջդիմութիւնը՝ մտաւորական, բաբոյական, տնտեսական, զոբ Աբեւելեան Հայութիւնը կատաբեց ԺԹ. դաբուն մէջ, ռուսական տիբապետութեան հետեւանքն է։ Այն հայ գոբծիչները որ այս վերջին չբջանին մէջ՝ բոլորովին մոռնալով ինչ որ Հայութիւնը կը պաբտի ռուս զօբութեան, հայ քաղաքականութեան տուին որոշապէս հակառուս ընթացք մը, թէ՛ ապիբախտ վաբմունք մը ունեցած եղան հանդէպ բաբիքի մը, որ ինչ ալ ըլլաբ ռուս կառավաբութեան ընթացքը՝ յետոյ՝ այս կամ այն դէպքին մէջ՝ պէտք չէբ երբեք մոռցուէբ, եւ թէ՛ ծանրօբէն վնասեցին հայ ժողովբբդին շահերուն։

Ինչ որ անախորժ է ինծի համաբ՝ եւ մեբթ՝ պաբզապէս անհանդուրժելի՝ այն « եղանակն » է որով Աբովեան կ՛աբտայայտէ իբ ռուսասի-

բութիւնը։ Այդ երախտագիտութեան, սիրոյ եւ հիացման բացագանչութիւնները երբեմն ամէն չափ ու սահման կ'անցնին, սողուն պաշտումի ձեւ կը ստանան, ո եւ է արժանապատուութենէ մերկացած։ Ռուսերը Արեւելեան Հայութիւնն աղատեցին մահմետական հրէշային լուծէն, ճիշդ է, եւ որքան իրենց երախտագէտ ըլլանք ատոր համար՝ քիչ է. բայց Հայ ժողովուրդն ալ՝ իր խումբ մը քաջ զաւակներուն ճիգովը՝ եւ իր ամբողջութեան յանդուգն ռուսասիրութեամբը՝ մեծապէս օգնեց Ռուսին յաղթութեանը. Աբովեան զայդ կը մոռնայ յաճախ, եւ Ռուսին հանդէպ կուտայ հայ աղգին՝ դիրքը կապուած ըստրուկի մը, որ ազատուած ըլլայ Ռուսին տարամերժ ուժովը միայն։ Եւ իր ռուսասիրութիւնը մերթ այնպիսի տարօրինակ ծայրայեղութեանց կը հասնի որ իրեն ըսել կուտայ սապէս բաներ որ Ռուսերն իսկ պիտի ապշեցնէին. «Շատ մարդ կըլլին լսած որ Աղեքսանդր կայսեր ժամանակին, երբ Ռուսք Ֆրանսուզին ջարդեցին ու էնքան մեծ ողորմութիւն դուս էկաւ ամէն մարդի համար! (Ֆեոդորայ)։» «. . . Մեծ էր յիրաւի ու անմոռանալի Ռուսաց Փարիզ մտնելը, բայց ե՞րբ Գաղիացիք էն հոգւովը իրանց բախտաւորութիւնը (!!) կվայելէին, ինչպէս Հայք էս արժանայիշատակ օրը (Վէրք Հայաստանի)։»

Ասոնք ալ սակայն բացատրելի են, աւա՜ղ. եւ հոս կը բաղխինք Աբովեանի մէկ ուրիշ թերութեան, աւելի ծանր քան միւս գրական պակասութիւնները. Աբովեան ամենախոր սարկութեան մէջ աչքը բացած, թափանցուած, տոգորուած բարոյական այլասերմամբ, գերիի տխուր ու անարգ հոգեբանութեամբ որ իր ցեղին մէջ կը տիրէր՝ դարերէ ի վեր հաստատուած, հակառակ եւրոպական համալսարանի մէջ իր ստացած բոլոր զարգացման, հակառակ նոյն իսկ իր անհատական խառնուածքին բնածին ազատասիրութեան, չէ կրցած — բնախօսապէս անկարելի էր արդէն — բոլորովին թօթափել ազդեցութիւնն «ստրկախտ»ին զոր առհաւութիւնն ու մանկութեան դժուարաջնջելի ազդեցութիւնները իր մէջ արմատացուցած էին։ Շատ տեղ իր գործերուն մէջ՝ զգալու եղանակը, բացատրութիւնները, անգիտակցաբար, բայց խորապէս, վարակուած են այդ ախտէն։

«Ստրկա՛խտ» . . . ահաւո՛ր հիւանդութիւն, որմէ թերեւս ոչ մէկ ցեղ այնքան խորապէս է վարակուած որքան Հայը։ Կսկծեցուցիչ բայց հարկաւոր ուսումնասիրութիւն մը կայ կատարելու՝ մեր ամբողջ գրականութեան մէջ անդութ ու անաչառ ձեռքով մը նշանակելու համար բոլոր արատները զոր այդ ախտը դրած է հոն։

Ամբողջ ոսկեդարեան գրականութեան մէջ ան ամբողջապէս բացակայ է. վեհութիւնը, պերճութիւնը, խրոխտութիւնը, մեծվայելչութիւնը այդ հրաշալի լեզուին, եւ այն ծիրանեփառ ոճին զոր կերտած են մեր Ե. դարու Հայրերը, ցոյց կուտան որ հայ հոգին այդ գեղեցիկ շրջանին մէջ մեծութեան, քաջութեան, ազատութեան զգացումով մը թրծուած էր։ Սակայն Նարեկացւոյն մէջ արդէն կը գտնենք ախտին երեւման նշանները. այդ մեծազօր քնարերգակը Աստուծոյ կը խօսի ինչպէս սարսափէն հոդամած սարուկ մը սարսափազդեցիկ ու վայրագ փատիշահի մը պիտի խօսէր. «. . . ի յոտս քո անկանիմ եւ զգարշապարիդ զհետս համբուրեմ, զպարտութիւնս խոստովանիմ եւ զմեղանս հրապարակեմ . . . ի լրութենէ համբաւոյն սարսիմ, յիշատակաւ ահին կորնչիմ, կերպարանօք ատենին հալիմ եւ սպառնալեօք մեծիդ մեռանիմ . . .։» — «. . . Ապա թէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպատն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ անարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. եթէ խէթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սատկանաս, սարսափիմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդ վայր հարկանիցես, հերքիմ. եթէ զողբոց վհատութիւնս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ սպառնաս, ընկճիմ. իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ, եթէ կոչեսցեն, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ։»

Մեր պատմագիրները, Ժ. դարէն յետոյ, յաճախ կը յայտնեն այդ գետնասող, յուսահատ, երկիւղամոլ հոգեբանութիւնը։ Մեր աչուղներուն մէջ ափերով կարելի է գտնել տողեր որ կը վիրաւորեն մարդկային արժանապատուութիւնը։ Պէտք է անշուշտ նկատել որ այդ զգա-

լու եղանակներուն մէջ կան որ Արեւելքի բոլոր ժողովուրդներուն ալ՝ նոյն իսկ ամենէն հզօրներուն՝ գրականութեան մէջ կը գտնուին, ուրուհետեւ Արեւելքի բնակչութիւնը բոլոր ցեղերն ալ վարակած է՝ մինչեւ աստիճան մը՝ տրկութեամբ, բայց Հայուն մէջ՝ իր քաղաքական անկումներուն բերած նուաստացմամբը՝ այդ զգացումները անհունապէս աւելի շեշտուած են. եւ մեր կղերը՝ որ Աւետարանէն առած է միայն ինչ որ կայ հոն համակերպութիւն քարոզող, մանաւորապէս նպաստած է այդ ոգւոյն մեր մէջ տարածման ու արմատացման։ Եւրոպայի հետ շփումը՝ ԺԹ. դարուն մէջ՝ վերանորոգեց հայ մտայնութիւնը։ Բայց ինքզինքնիս խաբել պիտի ըլլար կարծել թէ այդ վերանորոգումը ամբողջական է արդէն. մեր ժամանակակից գրականութեան մէջ, նոյն իսկ այսօրուան արտադրութեանց մէջ, դեռ կարելի է գտնել անդիտակից, բնազդական տրկութեան հետքեր։ Վերջնական վերանորոգումը պիտի իրականանայ երբ հայ ժողովուրդը հասնի ապրելու ճշմարտապէս ազատ ընկերական պայմաններու՝ մէջ։ Աբովեան եղաւ մին այն Հայերէն, որ, ամենէն աւելի խանդով, հաւատքով ու հանճարով երազեցին, ցանկացին ու պատրաստեցին այդ ազատագրումը հայ մտքին. եւ իր գործը, որքան ալ միջավայրի խաթարիչ ազդեցութիւնները եւ տխուր առհաւութեանց բրոնական ներգործութիւնը մերթ մղտացուցած ըլլան անոր մաքրութիւնը, Հայկական Պանթէոնին մէջ պիտի կանգնի՝ յաւիտենապէս կենդանի ու յաղթական՝ իբրեւ մնծագոյն յիշատակարաններէն մին հայ հանճարի բարձրութեան ու հայ սրտի զեղեցկութեան։

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

ՉԱՆԳԻ[1]

Ինչպէս մէկ կատաղած վիշապ՝ երկնքիցը թռած, գլխիվէր ճոլոյակ, մէկ տուտը Սեւանի հանդարտ ծովումը, մէկ տուտը Արազի քրքրուած ղրաղումը, սար ու ձոր կխլոր տալով, քանդելով, տապալելով, քարի ու քրտինքը բերանը կոխած, գզզված, մաղերը քեալլին ցցած, կապը կտրած, գժված, ոեխն աւազով, քարով, զիբիլով լիքը, էս կողմն, էն կողմն փնչացնելով, ճոթռելով, ջարդելով, տակ ու ղրաղ ծամելով, բրդելով, — մէկ թեւն իր ծոցի, էն սեւ, մուրթն ու չանգը կոխած, խէւանդ խէւանդ կտրատած, փորն ու դոշը բաց արած, ծառով,

(1) Այս Չանգի անունով գետակն, որ իր սկիզբն է առնում Գեղամայ ծովիցը դուրս վազող մի կարկաչահոս առուակից և մինչև Երևան հասնելն իր մէջ է ընդունում ուրիշ առուակներ, կազմում է մեր նախնեաց մէջ յիշուած Հրազդան անուն հռչակաւոր գետը։ (Դան. Կ.Հ.Ա.)։

թփով զարդարած՝ ձորի գլխովը քցած, մէկ թեւն էն նեղ, չոր, տխուր Կաքաւասարի տակիցը, որ ական թոթափել դուս չի՝ պրծնում — վազում ու հրով, սրով, բոցով, բրով, փռնչալով, մռնչալով, խռնչալով, քարի, քարափի գլուխ վեր հառելով, իր փորը խցկելով, վէմ, ապառաժ իրար ծեծելով, կայծակին տալով, ճչալով, ճռնչալով, թնդալով, դղրդալով, — ցած ափները սասանահար գետինը պոկելով, պռճոկելով, քրքրելով, քրքրվելով, կենդանի, անկենդան, իսան, հայվան գետնին զարկելով, բամբաչելով, խլացնելով, քարացնելով, սրսրթացնելով, վրթվրթացնելով, — վառված, կրակված, աչքերը արնով լիքը, եալը ցցած, ատամները ղրճտացնելով, կրճտացնելով, դաշտ ու դափ ղրմբացնելով, գրնգացնելով, դմբդմբացնելով, դնգդնգացնելով, ու կայծակի թուրը բերնին բռնած, վրայ պրծած որ չի՝ դալիս ամեհի ՉԱՆԳԻՆ ու Զորագեղ մրտնում, որ Հայաստանի սուրբ գետինը ոտնատակ տվողին, մեր նախնեաց մաքուր գերեզմանը

քանդողին, կործանողին, մեր նահատակաց ասուրը, անմեղ, արդար արինը թափողին, կխչորողին, մեր սատուածաբնակ սահարները, եկեղեցիքը աւերողին, ապականողին, մեր հայկական թախթերը, քաղաքները խլողին, փչացնողին, մեր անճար, օրվան հացին կարօտ, եթիմ, ցրված, սասանած, գերի ընկած, հարամու, թշնամու ձեռին կոտորված, երկրէ երկիր կորած, փչացած, խեղճ, անտէր ԱԶԳԻ տունը քանդողին, հողի հետ հաւասարողին, — ու մեր չար հարամու բունը, անօրէն թշնամու տունը, մեր արինը խմողի թաղթը, մեր աչխարքը քանդողի ամարաթը, նրա արենաշաղախ բերդը, նրա ոսկոռաչէն բուրջը, նրա գողանակ տեղը, նրա գաղանանակ հողը՝ — քանդի՛, տապալի՛, փշրի՛, աւերի՛, տակուզլուխ, գլուխուտակ անի, կլանի, — ու նրանց միջի ըլողներին, դրսի թաղածներին, գլխումը բուն դնողներին, տակումը քուն մտնողներին քշի՛, տանի՛, սրբի՛, ողողի՛, թիքայ թիքայ, փառչայ փառչայ անի ու մեր խեղճ աչխարքի, մեր ողորմելի ազգի՝ աղի արտասունք սրբի, երված, խորովված սիրտը հովացնի, զովացնի, մեր հաղար տարվան թունալից, անբժշկելի եարէն կորի, վերջացնի՝ որ հաղարների, բիւրաւորների ցաւամաչ հոգին ուտում, կեղեքում, մաչում, տոչորում, սաղ սաղ, դալար ու զուարթ՝ էս անգութ ազգին, անողորմ գաղանին՝ չատ տարի, չատ դար զուրբան էր տալիս։ վերջացնում։

Գիշերվան մութը գետինն առած ժամանակին, որ մարդ իր չվաքեցն էլ սասանում, սարսափում ա, ու բաղի դիւահալած, մահատագնապ անցաւոր՝ երեսին խաչ հանելով, Հաւասով խոստովանիմն ասելով, սրբոց, մարգարէից անունը տալով, որ Զանգվի կարմնջի վրովը անց չի՛ կենում ու կոնդի չոր դարդուսը նի՛ ըլում, սարսափը ջանն առած, լեզուն բերնումը սառած, աջու կողմն Երեւանու զարհուրելի բերդն ու Թուրքի Գէօռխանէքը (գերեզմանատուն), ձախու կողմը դնվերը, ջաղացները որ չե՛ն ձորումը թխթխկացնում, վիչիկացնում ու փոքր ինչ հեռու՝ չանգը կոխած կամարակապ համամները ու տխուր Զորագեղը՝ փոսումն ընկած, ձէնները փորընները քցած, առաջին Երեւանու Շհարը՝ տրտում, դառնավարամ, սպի քոդն երեսին փռած՝ որ չե՛ն երեւում, — հէնց իմանաս բոլորն անդուռնդն ա գնում, բաթմիշ ըլում, քանի մարդ բարձրանում ա, վեր ըլում — ու հեռվանց որ արթուն չները՝ ամերի կարներիցը՝ չե՛ն ՀԷգՀԷգում, ոռնում, հաչում, ղղրու տալիս, էլի ձէնները փորընները քցում, բարակ ցցում, զլում, ու քթերիցը իրանց տխուր սարսափելի կոնդոռնալը դուս թողում, նվում, — որ սուր սուր սարերի, թափէքանց գլխներիցը, տակընեներիցը սովամահ գիլանը՝ ֆորսի հոտն առած, փրփրած, անկուշտ բողազներն ու ոխները չե՛ն բան քցում, ոռնում, չան պէս կոնցկոնցում, որ նրանց խաբեն, մօտ գան, ներս մտնին կամ իրանց դզդզեն, պատառեն, խեղդեն, տաղրթմիշ անեն, կամ մէկ անմեղ գառն, մէկ կաթնակեր ճամբէն մոլորած, տունը կորցրած ֆորթ, կամ մէկ նախրիցը ետ ընկած, քուչում, կամ քարի տակի կուչ եկած՝ արդար կով, կամ աորիս եաբու, կամ ծկած խարախ, կամ մէկ բէզարած՝ իրան համար հանգիստ, խաթրջամ նստած՝ արոճող ոչխար՝ գտնեն ու լափեն — կամ մէկ չատ բանացրած, հալից ընկած, տիրոջիցը խռոված, տանից դուս տրած, էստեղ, էնտեղ չոր չօփ, ծէրը սուր փուշ կրծելով, ծամելով, զօթուր անկաջները թափէ թափ տալով, իր սեւ օրիցը բէզարած, ձեռք վերցրած՝ անտառամ, անպոզ, սանլեզու հայվան՝ մէկ խղճալի էշ՝ պարապ ռաստ բերեն, հեռը խաղան, ծլունդ ծլունդ ըլին, ջահէլութիւնը միաքը քցեն, որ մէկ քէֆը բացվի, սազը քօքի ու յետոյ իրենք իրանց բանը տեսնին, մաքրադարձեն։ — Սրանց սոսկալի ձէնի հետ էլ՝ որ ձորերի միջիցը, քարափների արանքիցը, ապառաժների գլխներիցը, բաշերիցը, թփերի, քօլերի տակերիցը, դղերիցը, չօլերիցը, ընձերիցը՝ մէկ կատաղած արջ, կամ խորամանկ աղուէս, կամ վախլուկ չախակալ, կամ մէկ ամեհի քաֆթառ, կամ գլխիցը ձեռք վերցրած ալապստրակ, իրանց սոսկալի, զարզանդելի ձէններն իրար չե՛ն խառնում, զոռում, մռմռում, բռռում, մնկմնկում, ճնկճնկում, ճչում, խառանչում, բառանչում, բղղում, ճղղում, կամ անքուն աքլորները՝ իրանց սիրոջը կամենալով արթուն պահպանել,

լեղապատառ, սասանահար, վախտ բէ վախտ որ չե՛ն թպրտում, թեւերները թափէթափ տալիս ու ճղլանի ձէնները նեղ բողազներիցը՝ մէկ խոր ձորից, մէկ փոսից, մէկ բաշից, եա կտրից հանում, կանչում, անկաջ դնում, էլ եդ ծղրտալով կանչում, — կամ հիմիք Ռսի սալդաթը, էն ժամանակ Թուրքի դարաւուլ սարվազը՝ ինչպէս գերեզմանիցը նոր դուս եկած, դիւանոնց ճանգն ընկած, ոտ ու ձեռը կապած, սուրն առաջին հանած, մահապարտ մեղաւորի պէս, որ ուզեմ ըլին՝ հոգին հանեն՝ թէ բերանը բաց անի, եա ծպտայ՝ սեւամորթ փափախը խոր՝ քիթը քցած, աչք ու ունքը կալած, ծանր, կամաց, սուս, փուս՝ ոտները փոխելով, աչքերը տրորելով, քնահարամ արչտոտալով մէկ մութը պուճախից, կամ մէկ բուդկի տակից — որ գլուխը չի՛ հանում, ու խուլ, խոր, զարհուրելի, փորն ընկած ձէնով՝ «Սլը՛ւ — չա՛յ, — կամ խաբա՛ր-դա՛ր-սա՛ր-հէսա՛ր» գոռում, կանչում. —

Որ քամին մի կողմից, բուքն ու բորնազը միւս դեհից ինչպէս կատաղած դահիճ սրարձակ զամչով, մաթրախով, թօփով, մզրախով — սարերի գլխընեռիցը, ձորերի միջիցն՝ թո՛զ, աւա՛զ, հո՛ղ, ա՛ղբ, ղիբի՛լ առաջն առած՝ փոսերիցը հանում պատէպատ չի՛ տալիս, գետնիցը պոկում, քարափին խփում ա — ծառերը ջարդելով, խոտերը ճոթռելով. գետինը ճղելով, մէկ ճուխք միւս ճխքի, մէկ պատ միւս պատի, մէկ տախտակ միւսին չի՛ սաստիկ կպցնում, թրխկթրխկացնում, զրխկզրխկացնում, մէկ էս քարափին քարով բռնցկում, մէկ էն սարի գլխին դմբզում, բամբաչում, զրխկացնում, թրխկացնում ու մէկ կիտուկ հող, աւազ՝ չունչդ քաշելիս, կամ աչքդ բանալիս՝ երկու ձեռով բերանդ ու բաց քիթդ չի՛ խցկում, լցնում, չունչդ կտրում, քիթդ կալնում, փակում, աչքերդ խաւարացնում ու անկաջիդ տակին թօփի գիւլլի պէս, կամ սուր նետի նման վզվզալով, ղղղալով՝ եւ դառնում չուտով երեսիդ էնպէս խփում, որ աչքերդ՝ մթնած՝ կէծակին են տալիս, ու դուն տեղնուտեղդ չե՛ս շշմում, շշկլում, թմբրում, սասանում, քար կտրած մնում ու սառած կանգնում — ու անեւրեւոյթ թշնամիդ՝ էլ եդ ձէն չափ քցած, էլ եդ հրեղէն բոցով, որ չի՛ սարերի, ձորերի ջանին դաստ անում, հասնում, թագում, մէյտանը բաց անում, ու թնդում, դղրդում, շաչում, շառաչում, ճայթում, կատաղում, փրփրում, խռնչում, ղռնչում, գլուխը թափէ թափ տալիս, նայում, ձէնը կտրում —

Որ աչքդ կիրացած՝ ջանդ սասանահար՝ խելքդ թռած, յանկարծ ինչպէս մէկ խոր քնից՝ գլուխդ ահիւ սասանմամբ չե՛ս բարձրացնում, առաջդ քցում, ու — ամէն մէկ խորից, փոսից, ամէն մէկ ճեղքից, մութը արանքից՝ էս կողմն, էն կողմն հեռու տեղերից, ծառերի տակից, բաղերի միջից, սարերի գլխից, Զանգվի ղրաղներիցը, ծիրանի փէտի չաղ ալաւը, կրակի վառ բոցը, հրեղէն ձողու պէս վռվռալով, խաւար գիշերը թրի պէս ճղելով, սեւ մութը, թանձրացած ծուխը, պէծն ու վառ կայծակը վերը վեր չե՛ն խփում, ձորերն ու երկինքը կրակում, ու — խաւարը կոխած, սեւ խոռոչների բերանները բաց՝ էրերի, օձի պէս ոլորված՝ ճեղքերի, քաջքի պէս ճոլոլակ էլած, չանգըները դէս ու դէն քցած, մաղերը խճճված, ծամերը կախ ընկած, գոչ ու ծիծ եդ ճոթռած՝ բարձր ԾԱՌԵՐԻ, դիւի պէս երեսը դէմ տված, կանգնած, անահ, անվախ, սուր, ցից, իրար վրայ թինկը տված, երես երեսի դրած, բերան բերնի խփած՝ խաւարադէմ ծոցընները բաց արած, ատամները սրած՝ զարհուրելի ՔԱՐԱՓՆԵՐԻ սոսկալի սֆաթները չե՛ն բաց անում, ու էլ եդ խփում — ու էլի խելքը ցնդած, ընկնաւորի (թուլացկոտի) պէս՝ շատ թրպրտալուց, ծեծվելուց, դէս ու դէն գլորվելուց, ղռճատացնելուց, ղնչոտացնելուց յետոյ — իրանց իրանց էլ եդ աչքընները չե՛ն խփում, տաղ անում, անչունչ, անսաս մնում, դադարում. —

Ու — էս հադաղին, էս սարսափելի սհաթին՝ որ բազի վախտ էլ երկինքը՝ իր ալեկոծութիւնը չի՛ սկսում, սարերը ջարդում, ամպերը տրաքացնում, կէծակի լախտին աշխարքի չորս կողմի գլխին վեր հատում, փշուր փշուր անում, ու Զանգին, սարսափելի Զանգին էլ որ մէկ կողմից չի՛ գոռում, մռնչում, ու թուլ ձեռները, անկազմ ոտները քարէ քար տալիս, թոզ, դուման անում, բառանչում, ու — քամու վզվզոցը, երկնքի տրաքոցը, քարափի ճռճռոցը, սարերի դրմբդրմբոցը, ձորերի դրնգդրնգոցը, ծառերի խշխշոցը, էրերի խռնչոցը, դնգերի,

ջաղացների թրխկթրխկոցը, դեռնի զրնդալը, տների թնդալը, պատերի տրաքտրաքոցը, ջների, գիլանոց, արջերի, դարաւուլների, աքլորների՝ ծղրտալը, ճչալը, ծվալը, բառանչիլը, խառանչիլը, վնգվնգոցը, կոնձկոնձալը, ճնգճնգալը — իր ահագին ձէնի հետ խառնում, ոլորում, փորը քաշում, էլ եդ մէկ բոպէից յոտոյ հազար կողմերով՝ դուս փչում, ցանում ու սարերի, ձորերի, քարափների բերանը էլ եդ լիզու դնում, էլ եդ չունչ տալիս, որ իր քաղցր ձէնը քաշեն, դամ անեն, իրանց դժոխային քէֆն արամիշ անեն, պար գան, ծափ ծիկայ տան, ծղրտան, ղիժինայ քցեն, քէֆ անեն, խնդան, ցնծան. — էս հազարին՝ որ Աստուած ո՛չ չհանց տայ, մէկ անծանօթ անցաւոր որ Կոնդի դուռը չի՛ նիրլում, եա Ապրանքափոսիցը(*) վեր գալիս, որ Զանգվի վրովն անց կենայ, աչքը շաղվում ա, գլուխը չվարում ու հէնց իմանում ա. թէ մէկ ահագին սար վրէն փուլ էկաւ։ Էլ ո՛չ առաջն ա տեսնում, ո՛չ ետեւը։ Քարացած, փէտացած, մնում ա տեղնուտեղը սառած, ցցված։ Ինչպէս երազում մէկ հեռու, խոր տեղից, մէկ խուլ դղրդոց անկաջդ ընկնի ու հէնց իմանաս՝ թէ երկինք, արեգակ, լուսին, աստղեր իրարացով դիպան, փշրեցին, փշրվեցին, կոտրեցին, կոտրրվեցին, ու դոգոալով, գոռգոռալով, պատռելով, պատռվելով, վէր թափեցին, ու — անդունդ, դժոխք, արքայութիւն, տարտարոս, հրեշտակք, դիւանք, Սերովբէք, Քերովբէք, Սաղայէլ, Սաղանայէլ, սասանած, սպրթնած՝ հրեղէն սրով, բոցեղէն թրով, ամպով, կայծակով՝ թօթափում են, վէր ընկնում, որ աշխարս վերջացնեն ու յետին դատաստանի տէղը պատրաստեն, որ Աթոռ Աստուածութեանը իջանի, բազմի ու անիրաւ մարդիցը հէսաբ պահանջի, որ հէնց իմանում ա, թէ աշխարքն իրն ա, ինչ ուզենայ, էն պէտք է անի, էսպէս ա ողորմելի անցաւորի հոգին ու սիրտը խառնվում, երկրից երկինքը գնում, իր վախճանը տեսնում ու արեան քրտինքը երեսիցը՝ մեղայ ասելով, իր մեղքն յիշելով՝ սրբում, երբ աչքի առաջին կամ Քանաքեռ ա բացվում, կամ Նորագեղի դուռը։

Էսպէս մէկ սարսափելի գիշեր էր, որ Ապովենց ՑԱՐՈՒԹԻՆԸ, Քանաքեռու ազնուական անձանց մէկը Ապրանքափոսիցը դուս եկաւ, մտաւ իրանց մեծ իգին տեսաւ, կատեպանները (քաղմանչի) բոլոր քնած են, էլ ղիմիչ չարաւ՝ որ նրանց վեր կացնի, ինքը քեահլան ձին տակին՝ ասեց մէկ գորգոչանը դիպչի, եա բանդը գնայ, տեսնի թէ ջուրը ընչի՞ չի գալիս։ Մութն էնպէս էր գետինն առել՝ որ մատդ կոխէիր մարդի աչքը, չէ՛ր իմանալ։ Բայց բոլոր քարերն էլ որ բերանները բաց անէին, նրան չէին կարող վախացնել, է՛ն աներկիւղ սիրտն ունէր մեր քաջ Հայազգին։ Թուրք ու Հայ էս օր էլ կասեն՝ թէ նրա ոչ սրտին, ոչ լեզվին սարն էլ չի՛ դիմանալ։ Բաղերի գլխովը ավեց մեր սըրատ իգիթն ու հասաւ Գորգոչանի գլուխը. Ջրի բաժանվելու տեղն էս էր։ Տեսաւ որ էստեղ էլ ա ջուրը պակաս։ Հէնց վերի եկեղեցու գլխովը պտտեց, որ մէկ բանդին հասնի, ջուրը կապի, — աչքը որ ետեւը չքցեց, մնաց տեղնուտեղը սառած։ Չէ՛ր գիտում, թէ ի՞նչ տեղ ա։ Ուզում էր ետ դառնայ, սիրտը չէր տալիս, ամօթ էր համարում իր գլխին. ձիուն էր զօռ անում, ձին անկաջները խլշացնում, փնչացնում էր, ետ վազում։ Զորս կողմը բոլոր մութն ու խաւարը կոխել էր, բայց եկեղեցու գլուխը արեգակի պէս փայլում, ճաճանչում էր։ «Սո՛ւրբ Մարիամ Աստուածածին՝ քեզ եմ կանչել» ասեց բարեպաշտ Հայազգին, ձիուցը վէր էկաւ, մէկ դրաղ տեղ կապեց ու երմսին խաչակնքելով, մտաւ գերեզմանատունը։ «Աստուած ձեր հոգին լուսաւորի, ա՛յ արդար ննջեցեալք», ասեց ու մտաւ ժամի հայաթը։

Քանի Քանաքռու աստղը ծովել, հաղար հարուստ տանիցը, քառասուն տուն էին մնացել, ու էն էլ աղքատ, ողորմելի, օրէն հացին կարօտ, էս սուրբ եկեղեցին էլ մնացել էր ամայի։ Տարէնը մի անգամ էին էնտեղ ժամ ասում, էն էլ Սուրբ Աստուածածնի տօնին։ Էստուր համար դուռ ու հայաթ բաց էր մնացել։ Հէնց մէկ քանի ծունը դրեց, երեսին խաչ հանեց, ու ուզում էր, որ սեղանն էլ համբուրի, գնայ իր բանը. էնպէս գիտես՝ թէ թեւիցը քաշեցին։ Էնպէս որ սառած, կանգնած մնաց ո՛չ, յանկարծ մէկ երեխի ձէն ընկաւ անկաջովը։ Կարծում էր՝ թէ երազ ա տեսածը, եա միտքն ա իրան խաբում։ Մի քիչ էլ որ անկաջ դրեց, մէկ ուրիշ ձէն էլ ընկաւ անկաջը ու պարզ լըսում էր, որ մէկ երեխայ՝ ձէնը փորն ընկած՝

հեկեկում էր. «Նա՛նի ջան՝ նա՛նի, ա՛խր մի աչքդ էլայ բա՛ց, ա՛յ քո չարը տանիմ։ Մեզ ո՞ւր բերիր էստեղ, էս մեռելները հո մեզ կուտեն, մեր ճարն ո՞վ կըլի, որ դու էլ քնում ես, աչքդ չե՛ս բաց անում։ Վե՛ր կաց դնանք տուն, քանի՛ լաց ըլիս, քանի՛, մեր ափուն հո կորել չի՞. էլ եդ կդայ, ի՞նչ ես էդքան սուգ անում։ Մեզ թաղի՛ր՝ նա՛նի ջան, մեզ մորթի՛ր, ջուրն ածի՛ր, մեզ հարամին կդայ, կտանի, մեզ ի՞նչ կանես էս չօլումը։ Նանի ջան, նանի՝ էդ սիրուն երեսիդ ղուրբան, ընչի՞ չես մէկ խօսք էլայ ասում, ա՛խր քու երեխէքը չե՞նք, ի՞նչ արինք, որ էդպէս մեզանից նեղացար։ Էլ քո սիրտը չենք կոտրիլ՝ քո հոգո՛ւն մատաղ՝ թաք ըլի մեզ սիրես, մեզ պահես, մեզանից էլ չխռովիս»։

Ա՛խ՝ էնպէս զարհուրելի սնաթին՝ ո՞ւմ անկաղն էս ձէնն ընկնի, որ սիրտը չտրորվի, չը խորովվի։ ՆԱԶԼՈՒՆ էր, ա՛յ իմ սիրելի կարդացող՝ էս մէրը, որ երեխէքը սուգ էլն անում։ Թէ դու էլ սիրտ ունիս, չես ասիլ՝ թէ չինովի ա էս պատմութիւնը։ ՍԷՐԸ, սուրբ սէրը՝ որ բալասամի պէս կենդանացնում ա մարդի սիրտը, ու թրի պէս կտրատում, սէրը՝ ի՞նչ ասես՝ որ չանի։ Ի՞նչ կրակ կարայ անսէր սիրտը տաքացնիլ. ի՞նչ ջուր կարայ սիրով վառված հոգին դինջացնիլ, հանգցնիլ։ Սիրով վիրաւորված սիրտը ո՛չ հողից կվախենայ, ո՛չ դողից. ո՛չ ահ գիտէ, ո՛չ վախ. ո՛չ սրից երեսը կդարձնի, ո՛չ ջրից։ Քանի չատ ա սէրը, էնքան քաղցր ա տանջանքը։ Սէրին ի՞նչ կդիմանայ, որ մահից վախենայ։ Սիրելուցդ զրկված վախտը՝ հողն էլ ա բերան առնում, քեզ ուտում, քարերն էլ են աչքումդ մզրախի պէս ցցվում, քաշած չունչդ էլ ա քեզ կրակ դառնում, էրում, փոթոթում, քո մարմինը քեզ գերեզման դառնում, քո սիրտը՝ քեզ դժոխք, քո աչքը՝ քեզ արեան ծով. քո ձէնը՝ քեզ ամպ ու որոտումն, մրրիկ, փոթորիկ, բաս Նազլուն կա՞րող էր առանց Աղասուն կենալ, ասած խօսքը, նրա հետ կապած ուխտը չկատարիլ։ Ճշմարիտ սիրողի մեծ մուրազն հէնց էն ա, որ իր սիրելու խաթեր մեռնի։ Նազլվի սիրելին էր հողումը, էն թագաւոր տէրը, էն աշխարքի աչքի լիսը, բաս նա կարո՞ղ էր՝ առանց նրան՝ աչքը բաց ու խուփ անիլ, կամ մեռած, գնացած չունչը երկար քաշիլ։ — Գլուխը դրել էր գերեզմանի վրայ, երեխէքն առել դօշի տակը, լիսն եկել էր չորս կողմը բռնել, բայց ողորմած երկինքը դեռ չէր կամեցել՝ նրա սուրբ հողին առնի, ընչանք էն ամէն երեխէքանցը մէկ տէր լիս կընկնէր։ Նա էլ հօ գլխներին կանգնած էր։ Մէկ ա՛խից աւելի՝ էլ ոչինչ չիմացաւ էս եկողը։ Երանի՛ էն գերեզմանին, որ էսպէս կը սիրեն։ Երանի՛ էն հողին, որ երկու սիրելու մարմինը՝ էսպէս խաւակ, անարատ կտանի, կպահի, որ Աստծու առաջին պարզերես դուս գան՝ մեր երկիրն էլ, որ երկնքի քիրն ա, մեր հոգին էլ՝ որ Աստծու սուրբ պատկերը։ ՆԱԶԼՈՒՆ էլ գնաց, ԱՂԱՍԻՆ էլ, նրանց երեխէքանց տէրն էլ Աստուած հասցրեց, Աստուած կթողա՞յ՝ որ իր որդիքը կորչին. մենք էլ մէկ օր կերթանք, մենք էլ, ա՛յ իմ սիրելի հայրենակիցք. ասա՛, որ Աղասու գերեզմանն էսօր քու աչքդ առաջին էլ ըլի, դու չե՞ս ա՛ի քաշիլ, ողորմի տալ ու մտքումդ ասիլ, «Ի՞նչ կըլար ես էլ քո ընկերների մէկն էի էլել, իմ հայրենիքը սիրել, իմ ազգին լաւութիւն արել, որ ինձ էլ էսպէս սիրէին, իմ անունն էլ էսպէս աշխարքի միջումը փայլէր։ Գանձ ու հարստութիւն, պատիւ ու նշան, իշխանութիւն ու մեծութիւն, մինչև գերեզմանի դրաղն են մեզ հետ ընկեր եւ ոչ բարեկամ. սառը պատանը երբ որ աչքդ փակեց՝ էդ հոգելից աչքին ղուրբան՝ ա՛յ իմ Հայկայ ազնիւ զաւակ, տխուր զանգակը, երբ որ քեզ ժամը տարաւ, քո պայծառ երեսը՝ երբ որ մահուան դեղնութիւնն առաւ, քո անուշ լեզուն՝ երբ որ փէտացաւ, սիրուն արեւդ՝ երբ որ մէր մտաւ, դագաղդ գերեզմանը, մարմնդ հողը, հոգիդ երկինքը գնացին, դինջացան, էն սգաւորքն էլ կդինջանան, որ քո խաթեր իրանց սպանում էին, ու նրանք էլ որ մեռնին, խունկն ու մոմն էլ վրեցդ կը պակսի, ժամ պատարագն էլ։ Կարելի ա՝ որ էն քո վրայ անսիրտ, անջիգեար մարդ եկողների, խնդացողների չատը՝ նրանք են, որ հացդ ուտելիս, բարութիւնդ վայելելիս, քո սաղ վախտը՝ ուզում էին՝ ոտդ համբուրեն։ Աշխարքն էսպէս ա։ Քո գործքը, քո գործքը միայն քո անունը կպահեն։ Հայրենասիրութիւնը միայն քո յիշատակը կտօնի, ազգասիրութիւնը քո արածը՝ կենդանի կպահի, քեզ սրբի տեղ պաշտիլ կտայ։ Հայրենեաց հողը քո անգին ոս-

կերքը, քո սուրբ գերեզմանը ամէն անցկենողի առաջին կկանգնացնի ու մատով ցոյց կաայ. «Թէ ուզում ես, քեզ էլ նոպէս սիրեմ, դվվեմ, դու էլ ինձ սիրի, ինձ պայծառացրու՝ իմ սիրելի որդեա՛կ»։ Աղասու սուգն արինք, պրծանք. ա՛խ՝ նրա պէս Հայազգի յիշատակը, նրա պէս անմահ հոգայի պատմութիւնը, ե՞ս չպէտք է գրէի։ Երանի՛ էն սնոթին, որ մէկ աղնիւ Հայի ծնունդ՝ իմ անպիտան լեզուի վրայ բարկանայ, իմ անպիտան գրութիւնը դէն քցի ու ինքը նորէն էնպէս գրի մեր քաջ Հայերի պատմութիւնը, որ լսող, կարդացող վատվի, բորբոքի, զարմանայ, հիանայ ու էն գրողի գլանն ու գիրքը, ինչպէս Պետարքինը՝ մասունքի տեղ պաշտի, ծոցումը պահի։ Սէրն էր, որ ինձ համարձակութիւն տվեց՝ որ գրեցի, Թո՛ղ՝ կարդացողը պակասութիւնս երեսովս չտայ։ Գնանք Էկ Զանգվի ղրաղն էլ, մէկ մեր սուրբ Զանգին էլ տեսնինք, մէկ նրա ձորն էլ օրով տեսնինք, չունքի գիշեր էր, որ վրոնը անց կացանք, գիշերվան տեսածն ու ցկրեկվանը մէկ չի ըլիլ. մէկ էլ մեր սուրբ Հայրենեաց հողը մանինք, յետոյ ձեռ ձեռի տանք, սիրա սրտի իրար գրկինք, գոչ գոչի տանք, ու որ արտասուքը մեր աչքը կալնի, ցաւն ու կսկիծը մեր հերանը փակի, սար ու ձոր մեր ձէնը խլին, ու թէ մէկս ու մէկս երկընքումն ըլի, միւսը գետընքումը, ո՛ր լուսնի տակին որ կանգնի, ո՛ր աստղին որ նայի, ո՛ր ծովի ղրաղին նստի, ո՛ր սարի գլխով անց կենայ, աչքը երկինքը քցի, ձէնը փորը, ու առաջին ա՛խը, առաջին կաթը, որ թափի, կամ բերնիցը դուս գայ, էն ըլի, որ ասի. «Բա՛րեկամ, բա՛րեկամ, դու գնացիր ես մնացի, ասած խօսքդ գետինը չի քցեցի, Հայրենեաց սէրը միշտ սրտումս ունիմ, Հայրենեաց ուղուրին կանքս եդ եմ դրել։ Չի դարդ անես, չի ցաւիս, ինձ յիշես, կարողութիւն խնդրես։

Զանգի՛, Զանգի՛, գեղեցիկդ իմ Զանգի՛. քո երկնանման երեսը տեսնելիս, քո սխուր ձէնը լսելիս, քո սուրբ ջուրը բերան առնելիս, քո ծաղկաղարդ ձորերի մէջումն, քո ղովարար արիների ղրաղին, քո սպիտակ, լուսաթաթախ փրփրի տակին, քո պարկեշտ Մամբռու ափին, քո խնկահոտ ծառերի տակին, քո անմահական ծաղկների մէջին, քո էդ սրտում, դատնավարան լացի, բութի, սգի ձէնն առնելիս. քո սիրուն աչքի աղի արտասունքը տեսնելիս, — բաս ի՞նչ կըլէր, որ քո բախտաւոր, վաղուց հեռացած, մեր գլխիցը պակսած — մեծաղն, քաջաղօր, աշխարհասասան, անյաղթելի, անպարտելի իշխանաց, աշխարհակառոյց թագաւորաց, մեծաղօր, քաջաբազուկ հոգայից, տաբաբիտ, վասսաբատ, թշուառացեալ, գերեվարեալ, տատանեալ, տարատմեալ, զուրկ, թափուր, սրախողխող, քարակոչկոճ, հայրենամերկ, կենսակորոյս, անանկ, սգաւոր, աղքատ, չքաւոր՝ որդիքը ու թոռունքը՝ մէկ միտք անէին, գլխներին վա՛յ տային, իրանց նեւ օրը լաց ըլէին, թէ ո՞վ քեզ առաջ՝ ուրախ ճանիւ, բարձրաղիր ճակատով, երկնանման պատկերով, արծուահայեաց աչօք, հոգայական դիմօք, քաղցրամոք ժպտիւ, ողջոյն տվեց, քո հանն առաւ, քո ծաղկներիցը՝ ինդալով, ցնծալով հոտ քաշեց, քո քաղցրահամ պտղները ախորժանօք ճաշակեց, քո հով, զովարար ղրաղին էկաւ, բազմեց, քո սուրբ անարատ գիրկը համբուրեց, քո անուշահոտ վարդը, քո պարկեշտ մանիշակը ողջագուրելով, խանդաղատելով — քաղեց ու պերճ դիմօք, վսեմ ծանրութեամբ, իր քաջ բազուկը վրէդ մեկնելով, տարածելով — ու — իշխանական զօրութեամբ, խորհրդածու ուշիմութեամբ՝ էդ սուրբ ափներիդ, էդ աղնիւ ձորերիդ, էդ անդրդուելի քարափներիդ՝ սուր նայելով — էդ անահ, քաջ սրտիդ, էդ փրփրուն, ամեհի, սարսափելի ալեացդ՝ երկար հիացեալ՝ ափշեալ մնալով — խրոխտ ճանիւ, հզօր շրթամբք, վճռահատ, ազդու բարբառով, երկնալից բերանով, քերովբէական լեզուաւ գոչեաց. «ՀՐԱԶԴԱ՛Ն, դու ես այսուհետեւ իմ նաղելի բնակարան»։ —

«Այս քաջ բազուկ, այս լայնալիճ աղեղն, այս նետ երեքթեւեան, այս կուրծ քաջակուռ, ամուր, այս աշխարհասասան, անընկճելի, անվանելի հոգայից սիրազումար դասք, քեզ լեցին, այսմհետէ պահապան, պաշտպան, սիրելիդ իմ Հրազդան»։ Ցնծա՛, զուարճացիր, բերկրեա՛ց, փարթամացիր, հրճուեա՛ց, զուարթացիր՝ գեղեցիկդ իմ Հրազդան։ Թո՛ղ՝ ծոց քո ցնծալից, թո՛ղ՝ դաշտք քո զուարճալից՝ ուռճացին, ծաղկեացին, ընձիւղեսցեն, բողբոջեսցեն պտուղս

հաղարաւորս , սերմանիս բիւրաւորս , 'ի կերակուր իմ սերնդոց , ի ցնծութիւն իմ դաւակաց , 'ի վայելչութիւն իմ ազանց դիւցազանց : Իմ տոհմք ժառանգեսցին յայսմ հետէ զայս դաշտ երկնատիպ , իմ շառաւիղք եղիցին քեզ թշնամայաղթ խնդակիցք։ Այս լերինք երկնամբարձք՝ եղիցին իմ պատուարք մշտահաստատք. այս դաշտավայր չքնաղագէմ՝ իմ քաղցր օթեւան : Քո ձոր ծաղկածին՝ իմ նազելի զբօսարան : Իմ անուն կնքեսցէ՛, դրոշմեսցէ՛ զայս մաքուր, վայելչագեղ սահման , զի ո՛չ գտի երբեք 'ի բոլոր ուղիս , յերկարատեւ չուս իմ բացական՝ սմա հանգուստատիպ՝ տեղի յարանման : Սա՛ կոչեսցի այժմ եւ յայսմհետէ մինչեւ ցօրն յաւիտենական — ՀԱՅԱՍՏԱՆ :

Զանգի՛, Զանգի՛, անողոքելի իմ Զանգի՝ սիրտ իմ մրմռոքի , աղիք իմ դալարին , ոսկերք իմ քստմնին , ուշ իմ ազմկի , հոգիս բորբոքի , տուայտիմ ի ցաւս, վարանիմ ի ծուփս , հառաչեմ լալով , հայցեմ ողբալով , ա՛ռ զիմ արտասուս , տո՛ւր ինձ սփոփ , յոյս : Քանի՛ցս , քանի՛ցս կանգնեալ ի վերայ ահեղատեսիլ քարաժայռից քոց , խայտալով 'ի ծաղկանկար, երփներանգ ծոց քո հրաչագեղ . մինչ տղայն էի , խնդայի, խաղայի , ցնծայի , զմայլեալ, ապշեալ, մերթ եւս զարհուրեալ , սասանեալ յահեղ — գեղեցիկ դէմս քո զայրագին՝ ահիւ , սարսափմամբ՝ կամ ի գիրկս ծնողաց վազէի, կամ խընդութեամբ , ցնծութեամբ յալիս քո կայտռէի — այժմ թանձր հառաչք եւ թախիծք կուտակեալք 'ի մրրկայոյզ, վարանեալ սրտէս՝ առ քեզ համբառնան, առ քեզ գոչեն, 'ի քեզ մնոանին, 'ի քեզ կարկամին :

Զանգի , Երասխ , Հրազդան , Արաղ , կաթնահամ ստինք մոր իմոյ սիրելւոյ եւ գորովագութ ծնողի՝ Մեծինն Հայաստանի : Ո՞ւր ձեր տիեզերատոն անուն , ո՞ւր այն ոսկեղէն դարք, ո՞ւր գիւցազանց բոյլք, ո՞ւր հակայից կաճառք, ո՞ւր աթոռանիստք, ո՞ւր քաղաքք ամբարտակք, բերդունք, ապարանք, կրկէսք երկնահրոսք , տաճարք պանծալիք, չէնք զուարճալիք՝ որք զձեօքն պնդագոյն զօդիւ , հզօր ձեռամբք, ամուր բազկօք , քնքուշ սրտիւ՝ խանդակաթ սիրով՝ գորովածպիտ դիմօք՝ պաշարեալ պատեալ — խանդաղատէինն, փարէինն, ողջագուրէինն, փաղաքշէինն եւ գիրկս առեալ զանուշահամ, երկնատիպ ձերովք լանջօք՝ համբուրէինն զնոսա 'ի համբոյր սրբութեան , 'ի նշան սիրոյ մշտական, 'ի ջերմեռանդն ուխտ մտերմութեան , հարազատութեան :

Զանգի՛ իմ , Երա՛սխ , Մասի՛ս , Ալազեա՛զ. դեռ կանգնիք անմռունչ , դեռ հայիք անշունչ , գնայք միամիտք , հոսէք 'ի մեր հովիտ, սպառնայք ամպոց, խիզախէք ձորոց, վարսագեղ ալեօք, կատաղի դիմօք՝ ոմն ձիւնափայլ, ոմն արծաթափայլ, ոմն ի փողփողիւն, ոմն ի փրփրիւն. ոմն վանէ զերկին , ոմն ճնշէ զգետին , ոմն 'ի ձիւնեայ պսակ , ոմն 'ի ծաղկանց թագ . յարշալուսին տես , լուսնին 'ի պայծառ , հեղ՝ ողջունէք միմեանց՝ համբոյր տայք չրթանց ձեր սուրբ ստորոտաց խնկածին դաշտաց Հայկազանց վայրեաց։ Երկիր աւերակ, դաշտք մեր անբնակ, անսիրտք , անողորմք՝ հի՞մ դուք եղէք վկայք կորստեան ազգի , աւերման դաշտի չքնաղ քաղաքաց , հզօր իշխանաց , որոց զարմ եւ ճիւռ 'ի ձեռս թշնամեաց , 'ի բանտ , դառն յոճիր , անօրէն ազգաց՝ զոհ եղեն 'ի սուր, մտին 'ի բոց, հուր . թողին զմեզ 'ի սուգ , յարեան արտասուք , վտարիլ յայլ աշխարհ , զսուրբ Հայրենեաց վայր սգալ , ողբերգել , կոծել , հեծեծել , 'ի հեռուստ՝ աչօք արտասուօք մաշեալ, աղեկէզ սրտիւ , կարօտով մեռեալ :

Զանգի՛, Զանգի՛, քաղցր իմ Զանգի՛, 'ի քոյդ հայեցեալ անյողդողդ ճակատ՝ վառէինն 'ի զէնս Հսկայք քաջամարտ : Հայկազեան տոհմի ընտիր պատանեակք զքո ալիս տեսեալ , ահեղ — աղուորակ , մղէին ի մարտ , վանել քաջայաղթ , զինակուռ բազկաւ , սիգօք , ասպարաւ, աղեղամբք վառեալք , զրահիւք զարդարեալք , զրէլայն գունդ ահեղ սրոյ մատնեալ 'ի զոհ , ելին յասպարէզ , թշնամեաց ետուն գլոհ . ոսկեթել վարսիւք : դաշնեայ պսակօք , պսակեալ զիւրեանց գլուխ , անվախճան փառօք , ճեմեալ յերկնից խումբս , զվերինն վայելեն զկեանս անտրտում , յերկրի կանգնելով զանմահից անուն , 'ի դարս անանց անհոլով ամաց :

Զանգի՛, Զանգի՛, հրաշագեղդ Զանգի՛. դու զքոյդ սուրբ նախանձ տակաւին տածես , դու ահեղ թնդմամբ տակաւին հերքես, դղրդաս յարձակմամբ , մնծաձայն գոչես. « Ելէ՛ք, Հայկազեան սերո՛ւնդք քաջազունք, առէ՛ք զէն , զասպար՝ զաւա՛կք բարեանունք , հարէ՛ք , փշրեա-

ցէ՛ք զթշնամեաց ձեր գունդ՝ տո՛ւք հոգի հոգ-ւոյ, թիկն ընդ թիկուն։ Զանիշախեսցի՛ թող, դաղանն նկուն. ՈՈՒՍՍԵԱՅ հզօր բազուկ ե-զիցի ձեզ նիզն. նմա զոհ լինել ձեր լիցի միշտ ճիգն։ Վօլդայ իմ մեծ քեռ, ես, — իմ քոյր Երասխ՝ համբոյր մատուցցուք 'ի Կասպեան կո-հակ։ Նա զիւր բարութիւն, ես զիմ խեռութիւն 'ի մի մեր մօր ծոց ընդմիմեանս խառնեսցուք։ Ես զիմ Սեւանայ օրհնութեան մաղթանս, ես զիմ սուրբ Մասսայ ողջոյն հայրական, տարայց, մատուցից սիրելւոյն իմ քեռ, բերից ձեզ զողջոյն, ն'բա աւետարեր »։

« Ո՛չ ես խղճալի օրիորդս էի պարտ, զի չար թշնամին եմուտ 'ի մեր դաշտ, այլ քոյրս զառամեալ, հինաւուրցն Արաղ թոյլ ետ նոցա գալ բռնի ինքնահաս։ Տեսեալ զծերունի սկե-սայր իմ Մասիս՝ ծածկեմ զիմ գլուխ, փակեմ զերեսս, զի մի՛ ալեւորն աղու, ձիւնահեր, յալիս հասակի լիցի դառնավէր։ Թէ քոյր իմ Երասխ, անհաչտ բնութեամբ ո՛չ սայ խղճալւոյն հան-գիստ եւ դադար, ճեղքէ, պատռէ զոտս նորա ցայտմամբ։ Ե՛ս պարտիմ զայս վէրս փարատել խպատ։ Իմ չէ՛ն բայց այդ չնորհք, զի դաշտք, անդաստանք եռուն զիս կոչել Զանգի ոսկե-հանք*. այլ սուրբ Սեւանայ, հօր Լուսաւորչի՝ զրոյ արդար նշխարք ասա իմ առաջի կան եւ պահպանեն, օրհնեն, խնամեն զիմ անզօր ձեւաց զարդիւնս՝ որք ասա են։

Բացէ՛ք զճակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր. իմ քաղցր Վօլդայ քոյր հոգայ միշտ զձեր ճար։ Ես զիմ մաերմութիւն ցուցից նմա համակ, նա զիւր քաղցրութիւն տացէ ձեզ՝ ո՛րդեակք։ Այս կապ անխզուն, այս սէր սրբազան մնասցէ 'ի մէջ մեր 'ի կեանս յաւիտեան։ Դուք զօրացա-ցո՛ւք, որդի՛ք Արամեան, եղերուք ընդ միմեանս սիրով միաբան։ ՍԷՐ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՊԱ-ՀԵՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԱԶԳԻՍ ԵՒ ԶԱԶԻՆՍ Ի ԲԱ-ՐՕՐՈՒԹԵԱՆ(1)։

Խ. ԱԲՈՎԵԱՆ

*Զանգի պարսկերէն նշանակէ հարուստ, ճոխ։ (Ծան. Կ. Հ- Ա.ի)

(1) Կռունկ Հայոց Աշխարհին, Նոյեմբեր 1860։

ԳԱՐԱԿԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆՈՒԹԻՒՆ

«Շահնամէ»

Շնորհիւ Փառնակի եւ Մեսրոպ Վ. Մաքսուտեանցի, Անահիտի ընթերցողները ծանօթացան Խայեթմի գործին եւ Հաֆրզի ու Սաատիի բանի մը հատուածներուն։ Այժմ շնոր-հիւ Տր. Թիրեաքեանի, Պարսիկ Հոմերոսին գլուխ-գործոցէն կտոր մըն է որ կ'ընծայուի մեր գրական հասարակութեան։ Քաջ պարսկագէտ եւ արարագէտ, նաեւ քաջ հայագէտ, ու գրական նուրբ ու կիրթ ճաշակի տէր, Տր. Թիրեաքեան մին է այն սակաւաթիւ Հայերէն որոնք տիրականորէն կարող են կատարել Արեւելքի գրական գանձերու՝ եւ հայ հասարա-կութեան միջեւ միջնորդի դերը որուն կարեւորութիւնը այնքան անգամներ բացատրած եմ Անահիտի մէջ։ Շատ մեծ եղաւ հա-ճոյքս երբ վերջերս՝ տեսակցելով իրեն հետ՝ իմացայ որ Պարս կաստանէն այս անգամ հետը կը բերէ ամբողջ ծրար մը ան-նակարեւոր աշխատութեանց, — բանասիրական ուսումնասի-րութիւն մը որ դասական հայերէնի ծագման հարցին վրայ մեծ լոյս պիտի սփռէ եւ որ մամուլի տակ է այժմ, Թարգմանու-թիւն մը վիեիէվի լեզուով դին քրոնիկի մը, եւ տաղաչափեալ Թարգմանութիւն մը « Շահնամէի » մէկ ընդարձակ եւ կարե-ւոր դրուագին։ Խնդրեցի իրմէ որ հատորի ձեւով տպագրելէ առաջ « Շահնամէի » հատուածին Թարգմանութիւնը, անկից կտոր մը Թոյլ տայ հրատարակել Անահիտի մէջ։ Այս Թիւով կը սկսի երեւալ մաս մը այդ Թարգմանութենէն՝ բացատրողական նամակի մը հետ՝ զոր կը հրատարակեմ մեծարգոյ բանասէրին բաղձանքին համեմատ, բողոքելով միայն այն չափազանց հա-մեստ տողերուն դէմ որով կը խօսի իր պատրաստած աշխա-տութեանց մասին. « Շահնամէի » Թարգմանութիւնը՝ նոյն իսկ հատուածական՝ շատ մեծ բան է ինքնին. ու Թարգ-մանութիւնը զոր կատարած է Տր. Թիրեաքեան, մին է գե-ղեցկագոյններէն որ երեւցած ըլլան հայերէն լեզուով. պարս-կերէնը անծանօթ ըլլալով ինձ, հարազատութեան մասին ոչինչ կրնամ ըսել, բայց Թարգմանիչը հաւատեց ինծի թէ ջանացած է բառ առ բառ վերարտադրել Ֆիրտուսիի բնագիրը. « տեղ տեղ՝ կ'ըսէր՝ նոյն իսկ Ֆիրտուսին պարսկերէն բառերով հայե-

րէն խօսեցնել տուած է, նախընտրելով գործածել նոյնացեղ բառերը որ երկու լեզուներու մէջ ալ նոյն իմաստն ունին. եւ այնքան վստահ է այդ մասին իր ճիգերուն յաջողման վրայ՝ որ դիտաւորութիւն ունի բնագիրը Յարգմանութեան հետ դէմ առ դէմ հրատարակել երբ իր գործը հատորի ձեւով լոյս տեսնէ։ Ինչ որ գնահատել կարող եմ ես, Յարգմանութեան լեզուին մաքրութիւնն ու քաղցրութիւնն է ու տաղաչափութեան անոնների ներդաշնակութիւնը. լեզուն, Եէպէտ դեռ կը պահէ գրաբարի քանի մը ձեւեր որ մեր արդի աշխարհաբարին մէջ գոյութեան իրաւունքն այլեւս կորսնցուցած են, իր ամբողջական կազմութեան մէջ շատ գողտրիկ ու հմտիկ աշխարհաբար մըն է, մերթ աշուղական լեզուի երանգներով ճարտարօրէն ոճացած. բառերուն ընտրութիւնը, դասաւորութիւնը, տողերուն երաժշտականութիւնը զմայլելի են, ու մեզի կուտան կենդանի տպաւորութիւնն այն դիւցազնական պարզութեան, այն արեւելեան մեծվայելուչ ու բնական վեհութեան որով կը գեղեցկենք Եէ տոգորուած պէտք է ըլլայ բնագիրը։ Շնորհակալութիւն յայտնելով Տր. Թիրեաքեանին՝ այս գեղեցիկ աշխատութեան նախաձիրքը Անահիտի ընթերցողներուն ընծայել հաճելուն համար, կը մաղթեմ որ Թիրատրսիի այս Յարգմանութիւնը մեկնակետն ըլլայ ամբողջ շարքի մը, — որուն մէջ մասնաւորապէս կը փափաքիմ օր մը տեսնել «Զէնոն-Ավէստայ»ի Յարգմանութիւն մը։

Ս. Զ.

Սիրելի Զօսլանեան,

Հաւատարիմ խոստմանս, ահաւասիկ կ'ուղարկեմ ձեզ իմ Ֆերդուսիի թարգմանութենէս նմոյշ մը։ Զեմ կրնար, այս առթիւ, ծածկել իմ ամենամեծ ուրախութիւնս, տեսնելով թէ մեր գրագիտաց դասուն մէջ գտնուեր է վերջապէս մէկը որ այսչափ քաջ զգացեր է կարեւորութիւնը մեր արեւելեաց աշխարհի եւ գրականութեան առ հասարակ եւ պարսկականին ի մասնաւորի։ Ես որ ժամանակէ մը հետէ Պարսկաստանի խոր եւ հեռաւոր նահանգներուն մէջ թաղուած, անմահերջն Սաադիի եւ Հաֆըզի հրաշակերտից որոճմամբ եւ դամբարաններուն ուխտագնացութեամբ կ'զբաղէի, շատ հեռի էի կարծել եւ դուշակելէ թէ դուք այստեղ նոյն հոյակապ Հոկաներուն հրաշարուեստ տողերը կը հիւրընկալէիք ձեր էջերուն մէջ։

Մեծ հաճոյքով կարդացի ձեր Ատրպատականի թղթակից Մ. Վարդապետին սիրուն եւ գողտրիկ թարգմանութիւնները որք մի տեսակ հայացի եւ ինքնատիպ դրոշմ մը կը կրեն եւ աշուղական շեշտերը կը յիշեցնեն։

Ապրի՛ Վարդապետը, որ իր պարապոյ ժամերը գիտէ այսպէս օգտակարապէս գործածել, յօրինակ այլոց։

Իսկ Խայեամի առեակներու քթարգմանութիւնդ Գ. Փառնակէ, շատ խոր ըմբռնուած եւ ուսումնասիրուած կ'երեւի, թէպէտեւ ժամանակ չունեցայ բաղդատելու բնագրին հետ։ Խայեամի յառաջաբան ներածութենէն եւ իւր այլ եւ այլ խնդրոց վրայ ըրած տեսութիւններէն դատելով Պարսկական եւ ընդհանրապէս Արիական բաներու հմուտ եւ խորասոյզ երեւցաւ ինձ Գ. Գ. Փառնակ։ Ձեզ ուրեմն կը շնորհաւորեմ երկուքին համար ալ։

Գալով ինձ, կը տեսնէք որ ես ալ իմ ժամանակս պարապ անցուցած չեմ. բերածս թէեւ մեծ բաներ մը չեն, սակայն իմովսանն այնչափ ալ ձեռք բերելու համար, ինծի հարցուցէք թէ քանի՛ մեծ աշխատանքի՝ զոհողութեան եւ ճրգնութեանց եւ աքնութեանց ենթարկուիլ հարկ եղած է։

Հօսելով Ֆերդուսիի այս մի քանի դրուագներուն թարգմանութեանը մասին՝ որոց մի նը-մոյշն է ներկայս, ձեզ բերանացի բացատրեցի թէ ի՛նչ հանգամանքներէ դրդեալ մտաբերեցի այս ծանր եւ հոգեմաշ գործին։

Արտաշիր Բաբակեանի պատմութեան բուն Պահլաւ բնագրէ թարգմանութիւնս գիտէք թէ շարունակելու վրայ է, ի մօտոյ ի լոյս դալու համար։

Որովհետեւ մի քանի կարեւոր կէտերու մէջ կը տարբերի Ֆերդուսին պահլաւ աղբիւրէն, խորհեցայ որ, Սասանեան Հարստութեան հիմնարկութեան պատմական եւ ամենակարեւոր շրջանն աւելի լուսաբանելու համար շատ օգտակար կը լինէր երկու տարբեր աւանդութիւններն ալ ընթերցողին աչաց առջեւ դնել։

Եթէ յանցանք մ'ունիմ, այն է թէ փոխանակ արձակ թարգմանելու, ուղեցի՝ յաւակնեցայ չափով եւ յանգով կաշկանդուիլ։ Չիս թելադրող բուն պատճառն այն էր որ, հետաքրքրուեցայ գիտնալ եւ փորձել թէ հայերէնը ի՛նչ աստիճան կրնայ տալ Պարսիկ հիանալի բնագրին գեղեցկութիւնը եւ ճիշդ ու ճիշդ հարազատութիւնը։

Ոչ միայն այսչափ, այլ պայմաններն աւելի նոյնացնելու համար, չափոյ ընտրութեան ազատութիւնս ալ զոհելով, նոյն Ֆերդուսիին չափը գործածեցի, հատածը բաժնելով 6—5ի որ մեր մէջ շատ ցանցառ գործածուած է (մեր սովորականը լինելով 5—6, ինչպէս խնամով ստուգեցի հին չափականներէ եւ տաղարաններէ)։ Չափական օրինաք, այսինքն ըստ Արուզի, կրնայ բնագիրը 4—4—3 բաժանմամբ ալ կարատուիլ, բայց լաւ կարդացողներէն եւ թէ՛ հանգուցեալ Նասր-էտ-Տինի եւ թէ արդի Շահին յատուկ եղանակիչներէն միշտ 6—5 լսեցի։*

Եւս եւ, նոյնութիւնը աւելի հեռուն տանելու համար, ուզեցի որ մէկ տողի մէջ որչափ իմաստ որ պարունակած էր հեղինակը, նոյն չափը պահուի նաեւ հայերէնի մէջ, առանց իմաստն առկախ պահելով յաջորդին անցընել կամ լրացնելու։

Դուք թարգմանութիւններ շատ ըրած լինելով քաջ կ'զգաք թէ այսչափ երկիւղածութեամբ կատարուած փորձ մը ինչպիսի անհնարին դժուարութեանց կը բաղխի։ Պարսիկ լեզուին բառերն ընդհանրապէս կարճ՝ կոկիկ եւ գողտրիկ, իսկ հայ բառերը սովորաբար թաւ՝ խրթին եւ բազմավանկ, այնպէս որ միեւնոյն կարճուկ տողի մը մէջ 7—8 եւ աւելի բառերով կուռ եւ հոծ եւ լի ու բովանդակ իմաստներ պարփակել անհնարին է։ Թարգմանչին հոգին հանելու համար այս խոչընդոտն եւեթ բաւական էր։

Մի ուրիշ եւ գրեթէ անյաղթելի դժուարութիւն, այն է ներդաշնակութեան խնդիրը, կամ՝ ձեր իսկ ոճով՝ գեղագիտական ճաշակն եւ արուեստն էր։ Արեւելեան արուեստին վրայ ուրոյն եւ հանգամանօրէն խօսիլն ուրիշ դիպող առթի ձգելով, այստեղ այսչափիկ մը ցեկուցանեմ որ տաղերու տողերուն եւ բառերուն շարայարութեան մէջ արեւելեայք ամենամեծ կարեւորութիւն կուտան ձայնից ախորժ դաշնաւորութեան (harmonie)։ Այս ուշադրութիւնը ան աստիճան է որ տողերու վերջին նմանաձայն յանգաւորութեամբ ալ չգոհանալով, մինչեւ իսկ մէջտեղերն ալ, մինչեւ իսկ արձակի մէջ ալ որչափ որ հնար է, նման ձայներ յառաջ բերել կը ճգնին։ Այնչափ սիրահար եւ մոլին են այս ոճին որ մերթ տղայականին զառածելու չափ կը զեղծանին։

Պարսիկ գրականութեան ամենամեծ գեղեցկութիւնը եւ կատարելութիւնը կը համարուի այս խաղը զոր լեզուն ալ կը ներէ։ Սաադին մանաւանդ վեհագոյն վարպետն է կրնամ ըսել այս արուեստին։

Արդ այսչափ նուրբ եւ գեղարուեստ harmonie՝ ինչպէս կարելի է իւրացնել հայերէնի մէջ որոյ չեշտն ու առոգանութիւնն ի բնէ թաւ եւ խիստ, բացարձակապէս անընդունակ եւ անյարմար է յունականին եւ պարսկականին քընքուշ եւ փափուկ ձայներուն, թէպէտ եւ ուրիշ կողմերէ շատ մը առաւելութիւններով օժտուած։ Երբեմն կը պատահէր որ իմաստները կը յարմարէին, այլ սակայն ներդաշնակութիւնը կը վիրաւորուէր. երբեմն ալ յօրինուածն ըստ կարի դաշնակաւոր, այլ իմաստը զոհ կ'երթար։ Մտքի եւ ականջի այս ամէն պահանջներն ալ, լեզուին եւ կամ կարողութեանս ներածին չափ, գոհացնելու համար յանհնարինս տաղնապեցայ։ Չեմ գիտեր որչափ յաջողեցայ եւ այժմ բնագիրն առջեւս ալ չունիմ որ մի վերջին անգամ եւս աչքէ անցընեմ. կուսամ ուրեմն այնպէս ինչպէս որ է։

Թարգմանութեանս ամբողջութիւնը որ 2000 տողի չափ է, երբ վերջնականապէս հրատարակութեան տալու կարգը գայ, ի հարկէ թէ՛ մեծանուն Ֆերդուսիին եւ թէ՛ թարգմանութեան դոյզն փորձին վրայ լիակատար խօսելու առիթը պիտի ներկայանայ։

Ձեր ընթերցողները բոլորովին անպատրաստ չձգելու համար այսչափ մը առ այժմ բառ համարելով կը վերջացնեմ։

Համակիր յարգանօք

Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

Յիւրիխ 11 Յունուար 1906

* Գործոյն վերջերը 4—4—3ով մի նմոյշ տուի սակայն՝ ձանձրալի միակերպութիւնը մի քիչ փոփոխելու համար։

Ֆերդուսի

Ա. ԴՐՈՒԱԴ

Արտաշիր Բաբակեան

Երբ Դարեհը մեռաւ այն պատերազմին*,
Խաւարեցաւ արեւն իւր բոլոր զարմին։
Մի որդի ունէր նա՝ բախտաւոր, սիրուն,
Խոհեմ, պատերազմիկ. Սասան իւր անուն։
Սա երբ տեսաւ այն կերպ ըսպանած իւր հայր,
Եւ Իրանու բախտը չըրջած վեր ի վայր,
Ուսում զօրաց առջեւէն փախաւ նոյն պահուն,
Եւ անձը չը մատնեց թակարդի մահուն։
Անցաւ Հընդկաց աշխարհ, մեռաւ վըշտաբեկ,
Ձըդելով մի եւեթ որդի պատանեկ։
Այս էր նոցա մինչեւ չորիր ազգ նըշան
Թէ հայրը տայր որդւոյն անունը Սասան։
Հովիւ էին նոքա միշտ կամ ուղտապան,
Կուրծք տալով ողջ տարին խիստ աշխատութեան։
Կըրտսեր որդւոյն Իրան գալ եղաւ փափաք,
Դաշտ գընաց գըտնաւ մեծ հովիւը Բաբակ։
Ասաց. «Պէ՞տք ունիք վարձուորի արդեօք
Որ այս տեղ խեղճ է շատ ու չունի ոչ ոք։»
Ընդունեց հովուապետն այս խեղճը նորեկ
Եւ կ՚աշխատցընէր խիստ գիշեր եւ ցերեկ։
Տեսաւ նորա վաստակն՝ հաւնեցաւ անոր.
Պարզ հովիւ էր, հովուաց կարգեց գըլխաւոր։
Գիշեր մը քընած էր Բաբակ Հըռոդիաւ.
Նորա պայծառ հոգին այնպէս մը տեսաւ
Որ ամենի մի փիղ նըստած էր Սասան,
Ունելով ի ձեռին սուսեր հընդկական։
Ամէն այն որ անոր առջեւը կուգար,
Օրհնելով գըլուխը կը թեքէր ի վար։
Անուշ էր իր լեզուն եւ չընորհալից,
Վըշտահար սըրտերէ կը վանէր թախիծ։
Միւս գիշեր Բաբակ երբ նորէն մըտաւ քուն,
Հոգ եւ յուղմունք տիրած էին իւր հոգուն.
Երազին մէջ տեսաւ որ մի կրակապաշտ
Երեք հատ վառ կըրակ կը տանէր ի դաստ.
Որոնցմէ Ատրբ-Գուշասպ ու Խորրատ ու Միհր*,
Պայծառ ինչպէս Վահրամ, Անահիտ ու Միհր**։
Բոլորը Սասանին կը վառէր առաջ,
Եւ հալուէ բարդ ի բարդ կը ծըխէր ձախ, աջ։
Բաբակ ըսթափեցաւ, վեր կացաւ քընից,
Բայց հոգին էր տըրտում, սիրտը թախծալից։
Ամէն ով որ երազ մեկնել իմանայր
Եւ այս գիտութեան մէջ հասել էր ի ծայր,
Բաբակի դահլիճը եղան համախումբ
Բանիմաց ծերերու հետ նըստան ակումբ։
Բաբակ պարզեց անոնց ինչ որ էր թաքուն,
Եւ պատմեց մի առ մի տեսածներն ի քուն։
Տըխրեցաւ յայնժամ մեծ երազագէտն յոյժ,
Քաջն ի պատասխանիս եղաւ մըտայոյզ։
Ուր ուրեմն ասաց. «Արքա՛յ վեհաշուք,
Մեկնութիւնը պէտք է լըսէք հիմա Դուք։
Այն որ այնպէս փառքով շըքով դուք տեսաք,
Նա թագ պիտի կապէ, վեր քան զարիգակ։
Թէ նորա չելաւ այս երազը վերայ,
Բախտը որդւոյն անշուշտ կը մընայ նորա։»
Երբ Բաբակ իմացաւ՝ ուրախ եղաւ շատ,
Ընծաներ ըստ կարգի տըւաւ նոցա 'ռատ։
Մի փոթորիկ օդով մարդ յըզեց արօտ,
Հովուապետը եկաւ շուտ Բաբակի մօտ.
Փաթաթուած մի մեծ կապայի մէջ բիրտ,
Համակ ձիւնաթաթախ եւ տըրոփ ի սիրտ։
Օտարները բոլոր դուրս հանեց Բաբակ,
Ամէն ով որ կային ծառայ ու գուշակ։
Սասանը մօտ կանչեց, նըստեցուց պատուով
Եւ հարց ու փորձ ըրաւ գիտնալ թէ նա ո՛վ,
Ո՛ր ազգատոհմէն էր եւ ի՛նչ իւր ծագում։
Հովիւը լուռ կեցաւ, մեծ էր իւր յուզում.
Հուսկ ուրեմն ասաց. «Արքա՛յ, թէ խօսք տաս
Թէ հէք հովուիս ըընաւ վընաս մը չիտաս,
Ըսեմ քեզ իմ տոհմիս բոլորն անխափան,
Միայն թէ ափիդ մէջ դի՛ր ափս ի պայման,

* Մեծին Ալեքսանդրի և վերջին Դարեհի պատերազմին կ՚ակնարկէ։

* Մեհրական դից նուիրեալ բազին։

** Արեգակն։

Որ ինձ քեզմէ վընաս չը պէտք է հանի ,
Ոչ ի յայտնի երբէք եւ ոչ ի գաղտնի ։ »
Երբոր լըսեց Բաբակ՝ բացաւ իւր բերան ,
Ուխտեց բարերարին Աստուծոյ անուան ,
Թէ « Բնաւ չեմ վընասեր քեզ , կա՛ց ապահով ,
Կ՚ընեմ քեզ երջանիկ , կը պահեմ պատուով ։ »
Յայնժամ ասաց տըղան Բաբակին թէ « Ես
Սասանայ որդին եմ , ո՛վ քաջդ ի հանդէս ,
Շառաւիղ Արտաշիր աշխարհակալին
Զոր յիշողներ համայն բահնան կոչեցին
Որ էր պայդատ քաջին ըՍպանդիարայ
Ժառանգին ըՇտասպայ՝ աշխարհի վերայ ։ »
Բաբակ որ այս լըսեց՝ յորդ հեղեղի պէս
Հուր թափեց աչքերէն այն երաղատես ։
Բերաւ յայնժամ ըղգեստ քաջ արծնց յատուկ
Եւ ասպ ու ասպազէն մի խոսրովաչուք .
Ասաց . « Հիմա գընա՛ մըտիր բաղանիս ,
Կա՛ց անդ մինչեւ բերեն նոր շորեր՝ հագնիս ։ »
Նաեւ բընակարան մը ճոխ սարքեցին ,
Փառաց ի փառս հանեց իւր հովիւը հին .
Երբ որ հաստատեց զայն շրքով՝ այն պալատ ,
Ծառայ ու սպասաւոր կարգեց նըմա շատ ,
Ամէն ինչ որ պէտք էր լիուլի տըւաւ ,
Պերճանք՝ հարըստութիւն, ամէն ինչ անբաւ .
Յետոյ իւր աղջիկը տըւաւ նըմա կին
Զըքնաղազեղն ու իւր գլխու զարդն անգին ։
Երբ ամիս ինն անցաւ՝ մի արփենըման
Մանկիկ աշխարհ եկաւ նազելիէն ան .
Համատիպ Արտաշրի՝ հաւուն մեծհամբաւ ,
Վեհ ու գեղատեսիլ ու սըրտագրաւ ։
Արտաշիր տըւաւ հայրն անունկոչ նըմա ,
Որ նայելով անոր սիրտն ուրախանայ ։
Գիրկը կը մեծցընէր զայն գուրգուրալով ,
Մինչեւ այսպէս անցաւ ժամանակ յոլով ։
Նա ինքն է որ ամէն բանիմաց անձինք
Արտաշիր Բաբակեան կոչեն հիմա դինք ։
Ամէն ինչ պիտանի անոր ուսուցին ,
Որով նոր փայլ առաւ հանճար բընածին ։
Այնչափ էր քաջալարժ եւ գեղապայծառ
Որ ասէիր դէմքէն լոյս ցոլար աշխարհ ։
Արտաւանին* հասաւ վերջապէս ակոնջ .
Պատանեւոյն այս ձիրքերն ու շնորհ հիասքանչ ,
Թէ առիւծ ամենի էր ի մարտի ան ,
Խըրախճանքներու մէջ Անահտայ նըման ։
Արտաւան , յետ այնու , գրրեց մի նամակ
Քաջ ու հրոչակաւոր իշխանին Բաբակ
Թէ « Ո՛վ բազմահրմուտ եւ խոհեմազարդ՝
Բանիբուն՝ անարատ եւ ռահուղիղ մարդ ,
Իմացայ քո որդին է քաջ ձիավար
Եւ կարի բանիբաց եւ խօսող ճարտար ։
Նամակս ա՛ռածիդ պէս , ուղարկէ փութով
Մեզ այն քաջ պատանին , գոհ ուրախ սըրտով .
Ամէն ինչ պիտանի շնորհեմ անմիաղ
Եւ ի մէջ քաջերուս լինի գերանաղ .
Բուն իմ որդւոցըս հետ այնպէս յօդուի ան
Որ չըսէ ոք երբէք թ՚ է օտարական ։ »
Երբ Շահին այս գիրը Բաբակ ընթերցաւ ,
Ցօղեց իւր աչքերէն արիւն ոչ սակաւ ,
Հրամայեց եկաւ շուտ իւր մօտը դըպիր ,
Դեռահաս պատանին նոյն ինքն Արտաշիր .
Ասաց . « Ա՛ռ սա նամակն Արտաւանի , տե՛ս .
Կարդա՛ ուշի ուշով , հասկըցիր , մինչ ես
Մի պատասխան իսկոյն գրրեմ կէտ առ կէտ ,
Ուղարկեմ բարեմոյն մի ծառայի հետ .
Ասեմ , ահա՛ իմ սիրտ ու աչացըս լոյս
Այն պատանին ընտիր՝ քաջ ու գեռաբոյս .
Ցըղեցի քեզ , տալով խըրատ մի քանի ։
Երբ Վեհիդ տեսութեան լինի արժանի ,
Դու այն արա՛ ինչ որ արքայավայել ,
Մի՛ գուցէ ժըտի հոնի երեսը չոյել ։ »
Բացաւ գանձը Բաբակ հողմի պէս արագ
Տըւաւ ինչ որ անդ կար ընտիր ու բարակ ։
Ոսկի երասանակ , հուժկու լախտ ու սուր .
Ոչինչ զըլացաւ նա որդեկին ի տուր .
Դիպակ ու գենար ու նըժոյգ ու գերի ,
Ճենեայ՝ բեհեզ , արժան մեծ թագաւորի ։
Գանձապահը բերաւ որ առնեն տանին ,
Արտաւանին ի սպաս մըտաւ պատանին .
Հետը շատ մը նաեւ ուրիշ ընծաներ ,
Դենար՝ ոսկի եւ մուշկ եւ ազնիւ ամբեր ։
Մեծ հօրմէն պատուեցաւ տըղան բարեհետ ,
Եւ Շահին դուռն ի Ռէյ եկաւ այնուհետ ։
Երբ մօտեցաւ իմաց տըւին Արքային ,
Եթէ հրաման ունի՝ երեւնայ Շահին ։
Արտաւան պատանին ներս կոչեց սիրով ,
Եւ շատ բաներ հարցուց Բաբակի վրայով ,
Իւր գահուն մօտերը տեղ ցուցուց անոր ,
Պալատէն ոչ հեռու՝ մի տուն փառաւոր ,
Ամէն տեսակ խորակ ու ագտնելիք

* Արշակունի վերջին դէմք , ազգական մերոյս խոսրովու , հօր Պարթեւին Տրդատայ ։

Ու պերճ կահ ու կազմած չընորհեց ի լիք։
Պատանին եւ բոլոր ընկերք մեծանուն
Եկան ուր Արտաւան որոշած էր տուն։
Իւր դահուն վերայ երբ ելաւ արեգակ,
Եւ երկիր Ռոմուհւոյ պէս եղաւ ճերմակ,
Ծառայ մը իւր մօտը կանչեց Արտաշիր,
Եւ բոլոր ընծաներն այն ընտիր ընտիր
Ինչ որ էր ուղարկել Բաբակ Փէհլէվան,
Ուղարկեց մատուցին Շահին Արտաւան։
Որ իբրու թէ սա իւր մեծ որդին լինէր
Այնպէս մի ժամանակ խընամ կը տանէր։
Գինի՝ ուրախութիւն՝ որս, ամէն ուրիք,
Շահն առանց պատանւոյն չէր լիներ երբէք։
Որպէս մի աղգակից կը վարուէր յաւէտ,
Եւ խրատիր չէր զըներ իւր որդւոցը հետ։
Դէպ եղաւ որ մի օր երբ որսի հեծան
Եւ զօրք եւ Շահազատք եղան ցիր ու ցան,
Արտաշիր զուգընթաց էր Արտաւանին,
Քանզի միշտ սիրելին էր նա Արքային։
Արտաւան չորս որդի ունէր, այնպէս որ
Ասէիր ամէն մին էր մի թագաւոր։
Դաշտի մէջ հեռուէն երեւցաւ մի ցիռ,
Իրար անցաւ լաշկարն՝ առաւ թիւ ու թիռ,
Սըլացաւ օդաչու երիվարներով,
Քըրտինք ու թաւ փոշի իրար խառնելով։
Ամենէն առաջ էր անցել Արտաշիր,
Երբ մօտ եկաւ, լարեց աղեղ լայնալիր,
Նըշան առաւ գիտէն կենդանին արու,
Փըքինը մինչ փետուր խըրեցաւ հեռու։

Թարգմ. ՏՐ. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

(Շարունակելի)

ԽՈՐԷՆ ՆԱՐՊԷՅԻ

ԱՆՏԻՊ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Գանգաս

Ո՛հ, երբ ըզքեզ կը տեսնեմ
Պատեալ յաշխոյժ պատանեաց,
Որ գգուանօք զուարթադէմ
Քեզ հետ խօսին անձկայրեաց,

Երբ կը տեսնեմ որ նոցուն
Պատասխանես ժպտանաց,
Եւ ակնարկներ շողշողուն
Շնորհես նոցա պչրանաց.

Եա՝ մէկ անկիւն մութ քաշուած,
Քեզ կը հայիմ, հայիմ միշտ,
Սիրա՝ ի թախիծ խոր լցուած,
Աչերս՝ յարցունք սրտավիշտ.

Անկարելիր դու ոակայն՝
Շարունակես խօսիլ թել.
Եւ քո զըւարթ ժըպիտք, ձայն,
Շարունակեն զիս տանջել։

Ա՛հ, է՞ր զոգւոյս չըզլաս ցաւ.
Եւ օտարաց տաս խրախոյս,
Երբ յիս աղջիս սուգ անլաւ
Եւ զիմ սրտի մարես լոյս։

Ա՛հ, չը գիտե՞ս որ մէն մի
Ժըպիտ զոր տաս դու այլուս՝
Նըւէր է նա անձկալի
Յոր նախանձիմ ես տրրտում.

Ո՛հ, չը գիտե՛ս որ կ'ըմպեմ
Քո մէն մի բառն եւ հայեաց.
Եւ զամէն զայնըս կ'ատեմ
Որ քեզ հըպին սիրտ-զգեաց.

Ո՛հ, չը գիտե՞ս որ երբ դու
Կ'ուղղես ակնարկդ առ օտար,
Ինձ տաս մի վէրք մահացու
Յորմէ բուժիլ չիք հընար.

Կամ չը գիտե՞ս թէ այս սիրտ
Որ կ'ապրի քեզ համար լոկ,
Պիտի մեռնի անխըլիրտ,
Երբ տաս քո սիրտն առ այլ ոք։

Ա՛հ, զայս ամէն գիտես, կո՛յս՝
Գիտես որ դու ես իմ կեանք,
Գիտես՝ կեանքիս դո՛ւ ես լոյս.
Ընդէ՞ր կ'ընես կեանքս անկեանք։

Թէ մա՛հս է քեզ ցանկալի,
Դու դատակնիքս իմ վրճռէ,
Մեռնիլ ձեռքէ հրեշտակի՝
Կեանք է վասն իմ, Ա՛դինէ։

Տրտմութիւն

Նըստած եմ միայն,
Ցիմ խուց գիշերայն,
Կանդեղիս լուսով
Տըմոյն հրսկելով.

Սիրտ իմ տանջի դուր,
Մըտածմամբ տըխուր.
Զունիմ ոք առ իս
Որ ըզդայ հոգիս.

Հոգիս՝ որ ծածկուած
Ցաւովք վշտամած,
Առանց քեզ՝ մութ է,
Արե՛ւս, Ադինէ։

Զի ո՞ այլ հոգւոյս
Կարէ ազդել յոյս.
Ո՞վ այս սրտիս հէգ
Փարատել ըզմէգ.

Թէ ոչ՝ դու եւեթ,
Կոյս անսեթեւեթ,
Որ զիս ես հմայած
Շնորհօքդ երկնայած։

Գեղանի մարմին
Ունիս հրեշտակին,
Աչեր՝ լուսազմայլ
Եւ դէմք՝ ձիւնափայլ.

Քոյինդ էութիւն՝
Է Անմեղութիւն,
Որ զիս հրապուրէ
Սիրովդ, Ադինէ։

Ուր եւ դանըիմ՝
Քեզ խնդրեն աչք իմ.
Հիւծիմ ի կարօտ,
Զի չես ինծի մօտ։

Շըրթունք իմ հեծեն
Զանունդ ոսկեղէն,
Եւ ի սուրբ քո յուշ՝
Կ՚ըզգամ բոյր անոյշ։

Եւ ի քոյդ տեսիլ՝
Կ՚ըզգամ սիրտս հալիլ.
Զի գո՛ւ ես հոգւոյս
Տենչ եւ կեանքն, ո՛վ կոյս։

ԽՈՐԻՆ ՆԱՐՊԷՑ

Առեւանգիչը

Երկակարկառ եւ ամայի լերան վրայ՝
Ինչպէս արծիւը՝ օձին,
Հանդիպեցայ ես անոր,
Եւ, ճապաղօրէն, ձեռքով ուն իր պըրկեցի.
Գրլխուս վրայ, նախանձէն,
Անդը երեք հեղ թեւերն իր բարախեց։

Մինչդեռ պատուէն զօրացած
Բազուկիս տակ լիրը թըշնամիս դեռ յոխորտ
Կը գալարուէր, ես բարկասաստ մըընչեցի.
— «Գանկդ իբրեւ գուշ կը ջարդեմ.
Ե՛տ, ետ դարձուր հափտիած կոյսըդ աչեղ։» —
— «Այտերն առած՝ ծընօտը քեզ կը բերեմ։» —
Ընդվզեցաւ։ Ըզգացի
Որ ճակատէս վեր խուժեցին բարկութեան
Վառ երակներս իբրեւ հալած կայծակներ,
Եւ բարկասաստ մըընչեցի.
— «Ամէն մէկ ո՛սկրըդ զատ զատ չան կը նետեմ.
Ե՛տ, ետ դարձուր հափտիած կոյսըդ աչեղ.
Ինչպէս սերմն իր կեանքի որրանն՝
Հէգ սիրտս զի՛նք, զինք կ՚ուզէ։» —
— «Այդ որրանին մէջ պիտ՝ տրոփանքս օրօրեմ.
Տո՛ւր, սիրտըդ տուր. — դաշոյնս իրեն կը տանի։» —
Ընդվզեցաւ։ Մոլեցայ։
Եւ հակընդդէմ իբրեւ երկու գաղափար՝
Մեր դաշոյններն ընդհարեցան չառաչով.
Մաքառեցանք. — (սո՛ւրբ է սո՛ւրբ
Մաքառումն այն՝ ուրկէ ժայթքած արիւնն հիր
Արդարութեան ոտքերը՝ ջինջ կը լուայ։)
Մեր կրունկներուն տակ թընգաց
Լեռը, պարար դաշտերու։
Մաքառեցանք. — ձորէ ժայռ,
Ժայռերէ ձոր եկեւէջներ գործեցինք։
Մեր սըրտերուն խորը ամպրոպն էր թաւեր
Եւ դաշոյնին վրայ՝ չանթ։ —
Դէմքն իր արեամբ ներկեցի՝
Հեղելով դուրս կարմրութիւնն իր չրթունքին,
Ուր, ո՛վ Սատան, գուցէ հարուածս ըսպասնեց
Համբո՛ւր մ՚երկար լըկումներով ըստացուած։
Զայն մըղեցի, մըղեցի,
Ըսպասելով կեր ընել՝
Խորխորատի մ՚աւելի սեւ։ — Գրլխուս վրայ,
Պատիւն (ինքզինքը ծածկած՝
Աղտոտ երկրիս չիջած դեռ կոյս շողերով)
Ուժերուս ուժ կը բարդէր,
Երակներուս մէջ կը ծորէր, չիթ առ չիթ,
Քըրտինքս արեան վերածած։ —
Զայն մըղեցի, մըղեցի զայն։ Ձեռքերէն,
Բուռն հարուածի մը տակ, իբրեւ ընդոստ խժ,
Վիհ մը դաշոյնն իր կըլլեց։
— «Ա՛յ, քեզ անէ՛ծք . . .» — մըրմռաց,
Եւ մէկ զարկիս տակ կարշնեղ,
Սահմռոտկելով, ինչպէս կըրօնք մը խարդախ,

Մութ անդունդի մ՚որկորին մէջ, ա՛լ անդարձ,
Թաւալգլոր, արիւնոտ, խոր, գահավիժո՛ց . . .

Հոն, վարը, — ես լըսեցի,
Ձիս օրհնեցին. ես լըսեցի, — վարը, հոն: —
Հայուհիներ հափափուած՝
Որոնց համար գեղեցկութիւնը եղաւ
Մազնիսը պիղծ ոճիրին,
Քըրքում կոյսեր, վարդ կոյսեր՝
Որոնք բըռնի տրուփանքներու ենթարկուած՝
Իրենց կոկոն մարմնէն ներս
Պիծակներու թոյնի հոտումն ըզգացին,
Շուշանազգեստ նոր հարսեր՝
Որոնց կաթի կուրծքերէն վար, մորթըւած,
Արիւն ծորեց Հայու համբոյրն, եւ անոնց
Թեւերուն մէջ, խո՜ր երկինք,
Կիրքը, հաջո՜ղ բորենի,
Կըրծեց պայծառ մեղրալուսինն. եւ կիներ,
Տըժգոյն աստղեր՝ ճահիճի մէջ ցոլացած,
Կիներ խըլուած, կիներ խեղճ,
Թագըստոցի քարայրներու ներքեւէն,
Հաւատարմութեան հաւատարիմ,
Անձնասպանի երազներէ տրժգունած,
Գերի Երկրին խոռոչներուն մէջ՝ գերի,
Եւ, ո՜վ Սարսափ, պըղծըւած՝
Մեր պապերուն նըշխարներուն վրայ քինոտ,
Շըղթայուած է՛գ առիւծներ,
Խոժոռ, ահեղ, մոընչելով զի՛ս օրհնեցին:

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

10 Յունուար 1906
ԿԱՆ

ՔՐՈՆԻԿ

Քաղաքական կացութիւնը. — Հոկտեմբեր 30ի յայտագիրը չիրականացուց այն յոյսերը զոր արթնցուց առաջին վայրկեանին: Յետադիմական կուսակցութիւնը՝ տեսնելով իր գոյութեան տպառնացող վտանգը՝ ռուս պետութեան ամէն կողմերը սարքեց կոտորած ու խռովութիւններ. յեղափոխականներն ալ պատասխանեցին ներհակ ծայրայեղութեամբ, պահանջելով այնպիսի բաներ որ յայտնապէս դեռ անիրագործելի են Ռուսիոյ մէջ, ինչպէս ռամկավարական Հանրապետութեան մը հաստատումը, եւն. այժմ քաոսային դրութիւն մը կը տիրէ, արիւնով ու խաւարով, շփոթութեամբ ու ոճիրով զանգուած. բայց անտարակուսելի է որ ազատականութիւնը պիտի յաղթանակէ ի վերջոյ. այն նոր պայմաններուն մէջ որ ստեղծուեցան քանի մը տարիէ ի վեր, այլ եւս անկարելի է որ փլէվէական ըէժիմը կարենայ վերականգնիլ: Որպէս զի այդ յաղթանակը շուտով եւ նուազագոյն արիւնհեղութեամբ կատարուի, մաղթելի է որ հին ըէժիմին դէմ պայքարող տարրերը մէկդի դնեն ծայրայեղ պահանջքները եւ ճգնին իրագործելու ինչ որ այժմ կարելի է, եւ այդ «կարելի»ն արդէն բաւական է դնելու համար ռուս պետութիւնը աստիճանական յառաջխաղացութեան բնաշրջման ճամբուն մէջ:

Հակառակ արդի անկերպարան ու մըրրկոտ կացութեան, արդէն իսկ անգլիական եւ ռուս կառավարութեանց միջեւ համաշխարխարհային բոլոր մեծ հարցերու մասին ամբողջական համաձայնութիւն մը բերելու նպատակով ջանքերը կը շարունակուին ու հաւանական է որ յանգին ամբողջական յաջողման: Հայոցս համար՝ ինչպէս արդէն դիտել տուած եմ այստեղ՝ այդ համաձայնութիւնը շատ կարեւոր արդիւնքներ կրնայ ունենալ, — մինչ գերմանօ-ռուս մերձեցում մը ընդհակառակն շատ աղետաբեր պիտի ըլլար: Երբ նոյն իսկ արդի շփոթ ըէժիմին մէջ՝ ռուս կառավարութիւնը հակամէտ կը թուի Անգլիոյ մօտենալու, դժուար չէ գուշակել թէ ո՛րքան պիտի սերտանայ այդ մերձեցումը երբ ազատականութիւնը յաղթանակէ Ռուսիոյ մէջ:

Թրքօ-հայ ընդհարումները Կովկասի մէջ կը շարունակուին, աւելի կատաղի քան երբեք: Գրեթէ բոլոր կանոնաւոր պայքարներու մէջ Հայերը կը յաղթեն, ու Թուրքերը մեծ կորուստով ետ կը մղուին: Բայց որքան ալ Հայոց ցոյց տուած քաջութիւնը մեզ ուրախութեամբ լեցնէ, ցանկալի կը նկատենք որ Հայք չհեռանան իրենց նախկին ուղեգծէն, — մէկ ձեռքով յարձակմանց դիմադրել ուժգնապէս, միւս ձեռքով ջանալ մարել այդ ոճրագործ հրդեհը՝ Թուրքերուն խօսք հասկցող մասը համոզելով վերջ դնելու այդ ապուշ եւ անպատակ արիւնհեղութեան:

Մակեդոնիոյ ի նպաստ կատարուած նաւային ցոյցը տժգոյն արդիւնք մը տուաւ, ու հարցը կը մնայ միշտ իր շփոթ վիճակին մէջ: Այդ կէս-վիժման գլխաւոր պատճառը Մարոքի անտանելի խնդրոյն առթիւ գերմանօ-ֆրանսական գժտութիւնն էր. արեւմտեան Եւրոպան այդ վտանգաւոր խնդրոյն վրայ կեդրոնացուցած էր իր ամբողջ ուշադրութիւնը, եւ չհամարձակեցաւ շատ կորովի ձեւ մը տալ իր պահանջքին, ինչ որ՝ նկատելով մանաւանդ Գերմանիոյ Թրքապաշտպան դիրքը՝ կրնար տեղի տալ գերմանօ-ֆրանսական գժտութիւնը աւելի խիստ ու սուր դարձնելու եւ եւրոպական պատերազմի վտանգը սաստկացնելու: Բայց այս պահուս Մարոքեան հարցը իր վտանգաւոր փուլէն ելած կը թուի. հաւանական է որ Ալժեսիրասի խորհրդաժողովը պիտի յանգի համաձայնութեան մը՝ այս կամ այն կերպով. Վիլհելմ սկսաւ անուշ լեզու մը բըռնելու՝ իր դեսպաններուն բերնով՝ Ֆրանսայի հանդէպ. Գերմանիոյ բուն նպատակը պատերազմը անխուսափելի դարձընել չէր՝ ինչպէս կ՚երեւայ այժմ, այլ Ֆրանսան վախցնելով՝ զինքը մեկուսացնելու համար անոր ըրած ջանքերն ի դերեւ հանել. հիմա, կը կարծէ հասած ըլլալ իր այդ նպատակին: Նորէն Ֆրանսան է որ կարգ պիտի հաստատէ Մարոքի մէջ, եթէ ոչ այժմ անմիջապէս, ապահովաբար առաւել

կամ նուազ մօտ ապագայի մը մէջ: Ալժեսիրասի խորհրդաժողովին աւարտումէն յետոյ՝ Արեւելեան հարցը՝ Ռուսաստանի վերանորոգման հարցին հետ՝ օրուան առաջին հարցը պիտի ըլլայ:

Մեծանուն գիտուն Պերթըլօի ձեռքով խմբագրուած նամակ մը, ստորագրուած չորս հարիւրի մօտ Ֆրանսացի, անգլիացի, իտալացի, գերմանացի, տանիմարքացի, Նորվեկիացի, զուիցերացի, պելճիքացի քաղաքական ու մտաւորական տիեզերահռչակ անձնաւորութիւններէ, ղրկուեցաւ վերջերս Ռուզվէլթ նախագահին, խնդրելով իրմէ կարեւոր նախաձեռնութիւն մը ստանձնել Հայոց խնդրոյն լուծման նպաստելու համար. ահա քանի մը հատուածներ այդ նամակէն. «. . . Ձենք տարակուսիր որ խորապէս յուզուած էք եղերական ճակատագրովը հայ ժողովրդին, որ համացեղ է մեզի հետ եւ որ հին դարերէն ի վեր քաղաքակրթութեան բնաշրջանը մէջ այնքան կարեւոր դեր մը կատարած է: Այս ժողովուրդը, այսօր յուսահատութեան մղուած, վտանգուած է կորչելու անգթութիւններովն ու անպատիժ ձգուած բռնաբարութիւններովը բարբարոս մահմետական ցեղերուն որ զինքը կը շրջապատեն եւ որ տասը տարիէ ի վեր զինքը բնաջինջ ընելու կը ձգտին: . . . Ահա ինչու Ձեզի կը դիմենք, Պարոն Նախագահ, խնդրելով որ միջամտէք Ձեզի պատշաճ երեւցած ձեւով ու չափով, իբրեւ օրկան՝ քաղաքակիրթ ազգերու հանրային կարծիքին, կառավարութեանց մօտ այն երկիրներուն՝ ուր տեղի կունենան այդ վայրենութեան տեսարանները. կը համարձակինք յուսալ որ Ձեր համակրելի ձայնը լսելի ըլլայ Ռուսիոյ Ձարին, որ այնքան բարձրօրէն ցոյց տուաւ իր մարդասիրական դիտաւորութիւնները եւ ուզեց զանոնք նուիրագործել միջազգային համաձայնութիւններով: Կը խնդրենք Ձենէ եւրոպական տէրութեանց աջակցութիւնը հրաւիրել Օսմանեան պետութեան հպատակները հարկադրելու համար ընդգրկել հանրային խաղաղութեան եւ ընդհանուր կարգաւորութեան այն վիճակը, որու պակասը արդէն այնքան աղէտքներ յառաջ բերաւ այդ պետութեան մէջ եւ կը սպառնայ անոր ամբողջական կորստեան փորձանքը պատճառուորել:»

* * *

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն. — Հաճոյքով իմացայ Եգիպտոսի հայ թերթերէն թէ Գահիրէի մէջ խումբ մը Հայեր որոշեր են հիմնել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» մը «Ալիանս Իսրայէլիթ»ի ծրագրով, եւ թէ Պողոս փաշա նուպար յանձն առեր է պատուոյ նախագահութիւնը եւ իր որդին Առաքել պէյ գանձապահի պաշտօնը: Հանգանակութիւն բացուած է արդէն. Պողոս փաշա նուիրած է 1000 ոսկի եւ խոստացած՝ ամսական 20 ոսկի: Դեռ կանոնագրութիւնը չէ խմբագրուած, եւ տնօրէն մարմին մը չէ ընտրուած. «Բարեգործական» վերադիրը զոր աւելցուցած են «Հայկական Միութիւն» անունին, կրնայ շփոթութեանց տեղի տալ, եւ լաւագոյն է՝ ըստ իս՝ ջնջել այդ վերադիրը;

Կը մաղթեմ որ այդ ընկերութիւնը ըլլայ այն որուն պէտքը կը զգացուէր վաղուց եւ որու մասին «Անահիտ»ի մէջ գրած եմ յաճախ: Այստեղ, ես այն կարծիքը յայտնած էի թէ այդպիսի ընկերութեան մը վարիչ մարմինը պէտք է Փարիզի պէս կեդրոնական քաղաքի մը մէջ հաստատուի. իմ կարծիքս միշտ կը մնայ անփոփոխ. բայց Պողոս փաշայի պէս անձնաւորութեան մը գործին գլուխն անցնիլը հասկնալի կը դարձնէ որ առ այժմ ընկերութեան հիմունքը հաստատուի Գահիրէի մէջ. անշուշտ ի մօտոյ անոր մէկ մասնաճիւղը կը հիմնուի Փարիզի՝ ինչպէս բոլոր հայաշատ քաղաքներու մէջ, եւ նպատակայարմար կը գտնենք որ բուն գործօն մարմինը հաստատուի եւրոպական մեծ քաղաքի մը մէջ: Այս մասին աւելի մանրամասն կը գրեմ երբ ընկերութեան կանոնագրութիւնը հրատարակուի: Կը շատանամ՝ հիմակուհիմայ՝ կրկնելով ինչ որ կ'ըսէի այստեղ՝ այսպիսի ընկերութեան մը դերը բացատրելով. «. . . Ընկերութիւնը որ պիտի հիմնուի, ոչ միայն պէտք չէ թշնամի ըլլայ յեղափոխական մարմիններուն, այլ պէտք է ջանայ անոնց վրայ բարերար ազդեցութիւն մը ունենալ, պէտք է զանոնք պառակտող գժտութիւնները ջնջելու, զանոնք մերձեցնելու աշխատի, ճգնի մեղմացնել անոնցմէ ոմանց ծայրայեղ յանդգնութիւնները: Իսկ իր բուն գործունէութիւնը պէտք է ըլլայ քաղաքակիրթ աշխարհին ճանչցնել մեր ազգին պատմութիւնը, քաղաքակրթութիւնը եւ ցաւերը, եւրոպական եւ ամերիկեան կառավարութեանց ուշադրութիւնը միշտ հրաւիրել մեր դատին վրայ, նպաստել մեր ազգին պահպանմանը, նիւթական ու մտաւոր զարգացմանը, օգնել հանրօգուտ մտաւորականներու (օրինակ՝ Նորայր Բիւզանդացիի նման գիտուններու) արտադրութեանց երեւման, օգնել ապագայ խոստացող ուսանողներու, վաղուան Հայութեան համար «մարդ»եր կազմել, եւն. եւն.»

* * *

Մելիքոֆ-Ձերազ միջադէպը. — L'Arménie-ի դեկտեմբերի թիւին մէջ երեւցած յօդուածի մը քանի մը տողերէն ինքզինքը վիրաւորուած զգալով, Տր. Լորիս-Մելիքոֆ մենամարտի հրաւիրեց վերջերս Պ. Ձերազը. այս վերջինը մերժեց մենամարտիլ եւ առաջարկեց որ Տր. Լ. Մելիքոֆ պատասխանէ «լ'Արմէնի»ին մէջ, եւ կամ հարցը դրուի Հայերէ բաղկացած պատուոյ ատեանի մը առջեւ: Տր. Լ. Մելիքոֆ պնդեց իր մենամարտի պահանջքին վրայ եւ հուսկ ապա «Օրօռ»ի, «Իւմանիթէ»ին եւ «Փրօ Արմենիա»յին մէջ հրատարակեց իր վրկաներուն ատենագրութիւնն եւ իր մէկ նամակը ուր կը ներկայացնէ Պ. Ձերազը իբր մարդ մը որ «նախատելէ յետոյ, վատօրէն կը խուսափի իր նախամտածուած արարքներուն հետեւանքներէն,» (ինչ որ անտեղի ամբաստանութիւն մըն էր՝ քանի որ Պ. Ձերազ՝ յանձն առած ըլլալով պատուոյ ատեանի մը առջեւ ներկայանալ, իր արարքին հետեւանքներէն չէր խուսափած):

Տ. Մելիքոֆի ընթացքը խորապէս դատա-

պարտելի կը թուի ինծի : Պ. Զերազի քննադատութիւնը անտեղի էր. կաթողիկոսական պատգամաւորութեան պտոյտէն ի վեր տարիէն աւելի էր անցած, ու հարկ չկար այդ փակուած հարցը նորէն ծամծմել. արդար չէր անոր մասնակի վիժումը միմիայն պատգամաւորներուն վերագրել. պայմանները շատ աննպաստ էին այդ պահուն, եւ քննադատելի բան մը եթէ կար՝ պատգամաւորութիւն մը այդ միջոցին Եւրոպա ղրկելու գաղափարն էր. լաւագոյն պիտի ըլլար անշուշտ որ փոխանակ օտարազգիներու բերնով յայտնելու Հայոց կաթողիկոսին զգացումները, Եւրոպական լեզուներու քաջատեղեակ Հայեր կատարէին այդ պաշտօնը, քանի որ պատգամաւորութիւնը «հայկական» էր. բայց ճիշդ չէ թէ՝ պատգամաւորութիւնը բոլորովին ապարդիւն եղած ըլլայ. Բուզվէլթ նախագահին Հայոց նկատմամբ ցոյց տուած համակրանքէն յետոյ, անհրաժեշտ էր որ հայ պատգամաւորութիւն մը ներկայանար իրեն. կաթողիկոսական պատգամաւորութեան սիրալիր ընդունելութիւնը Բուզվէլթ նախագահէն՝ օգտակար իրողութիւն մըն էր, եւ պէտք է հաշուուի միակ «արդիւնքը» այդ պատգամաւորութեան : Պերլինեան պատգամաւորութեան մէկ անդամը ինքն իսկ Պ. Զերազն ըլլալով, անճահ էր որ ինքն ընէր բաղդատութիւնը երկու պատգամաւորութեանց : Վերջապէս, ու մանաւանդ, անպատշաճ էր որ այդ քննադատութիւնը երեւար ֆրանսերէն լեզուով թերթի մը մէջ որուն միակ նպատակը օտարներուն առջեւ Հայոց դատը պաշտպանել էր (այս դիտողութիւնը առաջին անգամը չէ որ կ'ընեմ Պ. Զերազին): Պ. Զերազ իր թերթին վերջին թիւին մէջ կը յայտնէ թէ միմիայն Հայոց կը ղրկէ եղեր իր լրագրին այն բոլոր թիւերը որոնց մէջ հայ կուսակցութեանց կամ անհատներու դէմ քննադատութիւններ է հրատարակած. այդ պարագային պէտք է ենթադրել որ իր հրատարակած թիւերուն գոնէ կէսը չէ ղրկած Եւրոպացւոց — արդ՝ իր լրագրին միակ գոյութեան պատճառը հայկական դատը «Եւրոպացւոց» ծանօթացնել եւ համակրելի դարձնել պէտք էր ըլլար : Այս բոլորը ո եւ է կերպով չեն չքմեղացներ սակայն Տր. Լ. Մելիքոֆի վարմունքը:

Նախ, Պ. Զերազի քննադատութիւնը, շատ անախորժ՝ պատգամաւորութեան համար, չէր պարունակեր սակայն այնպիսի բացատրութիւններ որոնք Տր. Մելիքոֆի անձնական պատիւը արատաւորէին. նքնադատութիւն մըն էր, եւ Տր. Մելիքոֆ ստանձնած ըլլալով հանրային պաշտօն մը, պէտք էր բնական գտնէր որ այդ պաշտօնին կատարման մասին նպաստաւոր կամ աննպաստ կարծիքներ յայտնուէին. ֆրանսական մամուլին մէջ ամէն օր հրապարակագիրներ այդպիսի — եւ աւելի ծանր — քննադատութիւններ կը հրատարակեն իրենց հանրային պաշտօնեաներուն դէմ՝ առանց որ ասոնք մենամարտի հրաւէր կարդալու մտածեն : Մենամարտի մղող վիրաւորանքները — նոյն իսկ այն հասարակութեանց մէջ ուր մենամարտի սովորութիւնը ընդունուած է, — տարբեր են: Ասկից զատ, նոյն իսկ եթէ Պ. Զերազի քննադատութիւնը իրօք անպատուիչ ըլլար, Տր. Մելիքոֆ դարձեալ պէտք չէր դիմէր մենամարտի միջոցին, որ բարբարոսական եւ անարդար սովորութիւն մըն է — բացարձակապէս անիրաւանձ մըն ալ՝ երբ իրաւամբ կը քննադատուի՝ կրնայ զէնքի միջոցով լուալ ուզել խարանը զոր ընդունած է արժանաւորապէս. կը սխալին անոնք որ կը կարծեն թէ մենամարտի մուտքը Հայոց մէջ կրնայ բարձրացնել պատուոյ զգացումը. Անգլիացիք բացարձակապէս վտարած են մենամարտը իրենց բարքերէն (բաւական համարելով բարոյական զէնքերը, գրիչ, պատուոյ ատեան, դատարան), եւ ես շատ գոհ պիտի ըլլայի եթէ Հայերը Անգլիացւոց կէսին չափ ունենային պատուոյ զգացում : Տր. Լ. Մելիքոֆ կրնար յօդուածով մը պատասխանել Պ. Զերազին, կամ պատուոյ ատեանի առաջարկն ընդունիլ (թէպէտ այդ իսկ աւելորդ պիտի նկատէի ես, որովհետեւ իսկապէս Տր. Մելիքոֆի պատիւը խնդրոյ տակ չէր Պ. Զերազի յօդուածին մէջ, այլ իր իբր գործիչ այդ պարագային մէջ ցուցուցած առաւել կամ նուազ ձեռնհասութիւնն եւ հաստատամտութիւնը :

Տր. Մելիքոֆի պնդումը մենամարտի վրայ՝ դատապարտելի է նաեւ մասնաւորապէս այն տեսակէտով որ Պ. Զերազ հիւանդ է, Տերացած, երկու տարիէ ի վեր յայտնապէս ինկած՝ առողջութեամբ. մենամարտի հրաւիրել մարդ մը որ կեանքին մէջ ձեռքը զէնքի մը չէ դպցուցած եւ որ քայքայուած առողջութիւն մը կը քաշկռտէ, «ասպետական ոգիի» գոյութիւնը չէ որ կ'ապացուցանէ Տր. Մելիքոֆի մէջ: Վերջապէս, «Օրօր»ի եւ «Լ'Իւմանիթէ»ի մէջ հրատարակելով Պ. Զերազը «վատ» կոչող նամակ մը, Տր. Մելիքոֆ վնասած եղաւ ոչինչ միայն Պ. Զերազին, այլ հայկական դատին. ինչ թերութիւններ ալ որ ունենայ, Պ. Զերազ կարեւոր դեր մը կատարած է մեր ազգային ժամանակակից պատմութեան մէջ. իր անունը ծանօթ է Եւրոպային իբրեւ հայկական դատը ներկայացնող գլխաւոր անուններէն մին. այդպիսի անուն մը ցեխոտել «Օրօր»ի եւ «Իւմանիթէ»ի պէս թերթերու մէջ որոնք անհունապէս աւելի տարածուած են Եւրոպական հասարակութեան մէջ քան «Լ'Ամէնի»ն զոր գրեթէ միայն Հայերը կը կարդան, վնասել էր Հայոց դատին : Իսկ բոլորովին անհասկանալի կը գտնեմ, այդ տխուր պատմութեան վերաբերող տոքիւմաններուն «Փրօ Արմէնիա»յի մէջ հրատարակուիլը: «Փրօ Արմէնիա»ն Տր. Լ. Մելիքոֆի անձնական օրկանը չէ, հայ ժողովուրդին օրկանն է՞, հաւաքական ճիգերով հիմնուած, եւ իր միակ նպատակն է հայկական դատին շուրջ համակրութիւններ արթնցնել Եւրոպական հասարակութեանց մէջ. հայ դատին իբր ախոյեան Եւրոպայի մէջ ծանօթ երկու հայ գործիչներու անհատական գզուրտուքը փռել այդ թերթին մէջ՝ վնաս միայն կրնար բերել հայկական դատին :

Ցանկալի է որ հայ ժողովրդին ներկայ ճգնաժամային դրութեան մէջ, մեր գործիչները գիտնան քիչ մը աւելի պաղարիւնու-

թիւն դնել իրենց վարմանց մէջ եւ ազգային արժանապատուութիւնն ու շահը գերադասեն անձնական նկատումներէ :

Պալարիւնութեան պակասի-ապացոյց մըն է որ տուաւ Պ. Ջերազ իր թերթին հրատարակումը դադրեցնելով : Եթէ Պ. Ջերազ այդ դադարումը որոշած ըլլար՝ մտածելով թէ եւրոպական տարածուած թերթերու մէջ յօդուածներ հրատարակելը աւելի օգտակար է հայ դատին քան քիչ տարածուած ուրոյն թերթ մը հրատարակելը , ոչինչ պիտի ունենայի ըսելու. բայց մէկ քանի յարձակումներէ զզուած ըլլալուն համար դադրեցնել թերթին հրատարակութիւնը, անընդունելի եւ անընդունելի կը թուի ինծի: Պ. Ջերազէն շատ նուազ տարուք ըլլալով հանդերձ , տասն անգամ աւելի յարձակում — եւ ի՞նչ նողկալի ձեւերով — կրած եմ անազնիւ հակառակորդներէ, սակայն երբեք չեմ խորհած ո եւ է մէկ գործս կասեցնել զզուանքի ազդեցութեան տակ : Մենք պէտք է աշխատինք ոչ թէ գովեստներ ընդունելու համար, այլ որովհետեւ ատիկա մեր պարտականութիւնն է հանդէպ մեր ազգին. եւ այն ներքին մեծ հաճոյքը՝ զոր պարտականութեան կատարումը կուտայ, կը բաւէ՝ աւելի քան ո եւ է գովեստ՝ մեր ճիգը վարձատրելու եւ բոլոր անարդար պարսաւանքներու դառնութիւնը մոռցնելու :

Եւ արդէն Պ. Ջերազ իրաւունք չունէր ամբողջ հայ ազգը իբր «ապերախտ» ներկայացնելու (եւ այն ալ ֆրանսերէն լեզուով գրրուած յօդուածի մը մէջ) հայ գործիչի մը հանդէպ. քիչ գործիչ այնքան քաջալերուած է իր գործունէութեան ամբողջ ընթացքին մէջ՝ որքան Պ. Ջերազ. ինչո՞ւ նոյնացնել ամբողջ ազգը քանի մը անհատի հետ : Ասկից զատ , տարօրինակ կը գտնեմ որ Պ. Ջերազ իր պարկեշտութեանը իբր վկայական ընդունի Փարիզի Օսմ. դեսպանատան մարդոց կարծիքը (Համիտի ծառաներու կարծիքը ոչ մէկ արժէք պէտք չէ ունենայ մեզի համար) եւ ելլէ պարծենալ գնահատումով մը որ՝ եթէ իրաւացի ըլլար՝ պիտի անպատուէր հայ ազգը , քանի որ ըստ այդ կարծիքին՝ Պ. Ջերազը միակ պարկեշտ անձն է եղեր՝ Ահմէտ Ռիզային հետ՝ Թուրքիոյ բոլոր «խռովարար»ներուն , այսինքն ազատական գործիչներուն մէջ:

Ա. Զ.

Ց. Գ. — «Տերտունի»ի յօդուածներէն ոմանց քննադատութիւնն ընելով » Անահիտ »ի վերջին յաւելուածին մէջ, բնաւ դիտաւորութիւն չունէի անձնական անախորժ եւ աւելորդ վէճ մը բանալ («Տերտունի» կեղծանունին քօղն իսկ՝ այնքան թափանցիկ սակայն՝ վեր չէի առած եւ միմիայն այդ յօդուածները ի նկատի ունեցած էի եւ ոչ զանոնք արտադրող անձը) . այն երեք ընդարձակածաւալ յօդուածներուն մէջ որով պատասխանել ուզած է նկատողութեանցս, «Տերտունի» շատ աւելի զբաղած է անձովս — եւ ի՞նչ տղայական ու անազնիւ ձեւով , — քան յայտնած գաղափարներովս : «Անահիտ»ի ընթերցողները գիտեն թէ ի՞նչպէս հաւատարիմ մընացած եմ «բանակուիներու» անօգուտ ժամավաճառութենէն ետ կենալու որոշմանը զոր տուի երկու տարի առաջ, ու բնաւ պէտք չեմ տեսներ բացառութիւն մը ընելու այս պարագային մէջ: Շատ դիւրին պիտի ըլլար ապացուցանել այդ շողշողուն ու ճարպկոլոր ֆրազներու մեծակարկառ շէնքին ամբողջ ներքին խախուտութիւնը , եւ պայծառ ցոյց տալ այն միամտութեան եւ չարամտութեան խառնուրդը որ անոնց հիմը կը կազմէ : Դիւրին պիտի ըլլար բացատրել » Տերտունի «ին թէ « հռետորութիւն » բառը զոր գործածած էի, երբեք այնքան չէր արդարացած որքան այդ յօդուածներովն իսկ ուր ամենէն չալաշտանուելիք « կաֆ »երը չքմեղացնելու լարախաղացական — կամ ըսենք՝ Արփիարական — ճիգեր են թափուած , ինչպէս եւ « թեթեւսոլիկութիւն » բառս , որ կ՝ապացուցուի անգամ մը եւս՝ երբ « Տերտունի » կ՝ելլէ առանց խնդալու հռչակել թէ ես այն « հազուագիւտ Հայերէն եմ եղեր որոնք կրցեր են հասնիլ հայկական ընդհանուր չափանիշէն վեր մտաւոր ընդհանուր զարգացումի մը՝ բարձրագոյն իմաստակութեան մը » (ասկէց տրամաբանօրէն կը հետեւի թէ հայ ժողովրդին մը-տաւոր գերագոյն ճիգը « բարձրագոյն իմաստակութեան մը » միայն կրնայ յանգիլ , եւ այն ատեն պէտք էր յուսահատիլ այս ժողովրդէն , եթէ՝ բարեբաղդաբար՝ գոյութիւն չունենար «Տերտունի»ն որուն մէջ խտացած ըլլալու է հայկական ամբողջ իրական եւ անիմաստակ հանճարը) : — Դիւրին պիտի ըլլար հասկցնել «Տերտունի»ին թէ իր յօդուածները ոչ մէկ կերպով չեն ունեցած վրաս այն ազդեցութիւնը զոր կ՝երեւակայէ , եւ թէ ես առաջին վայրկեանէն տեսած էի Տր.Գաբրիէլեանի գրքին մէջ՝ լաւ կողմերուն հետ՝ նաեւ ինչ որ կար հոն քննադատելի . եւ իրեն գրրած նամակիս մէջ ակնարկած էի այն կէտերուն որոնց համաձայն չեմ : — Դիւրին պիտի ըլլար բացատրել թէ ո՛րքան միամտութիւն կայ իր կողմէն՝ երբ կը զարմանայ որ Տր. Գաբրիէլեանի անձնական նկարագրին վրայ իր յայտնած կարծիքը չենք ընդգրկեր՝ հիմնուելով իր « անկեղծութեանը » վրայ . չենք կրընար մոռնալ վերջապէս թէ իր » անկեղծութիւնը » ի՞նչ ձեւով լրծնաներկեց ատենով «Հայրիկ»ի պէս պաշտելի դէմք մը , ինչպէս եւ ուրիշ դէմքեր որոնք՝ ինք ալ գիտէ՝ հեռու էին նմանելէ իր գծած կենդանագրին : — Դիւրին պիտի ըլլար բացատրել թէ ո՛րքան կը սխալի « Տերտունի » կարծելով թէ ես կ՝ուզեմ քննադատութիւնը մալուած տեսնել ամէն բիրտ ցասումէ , ամէն խարանող բացատրութիւններէ . ինքզինքս ուրացած պիտի ըլլայի այդպէսով . ազնիւ եւ արդար ցասումը սուրբ է , եւ զայն արտայայտելու համար բիրտ բառերը (զոր Ցիսուս իսկ գործածած է) անհրաժեշտ են . բայց որպէս զի այդ բիրտ բառերը ազնուանան , ցասումը պէտք է « արդար » ըլլայ . եւ « Տերտունի »ին ցասումները հեռու են միշտ արդար ըլլալէ . յետոյ , ազնիւ նկարագիր մը գիտէ յաճախ զսպել իր բարկութիւնը , բաւականանալ փաստացի դատափետումով , ու սրամտութիւնը վայրագօրէն պայթեցնել միայն արտասովոր պարագաներու մէջ. երբ մարդ տարին տասներկու ամիս ամէն օր եւ ամենուն դէմ հայհոյէ , ուրիշ ոչինչ կ՝ապացուցանէ բայց թէ հայհոյանքը

կը սիրէ (եւ ատոր համար հանճարի պէտք չկայ, Փարիզի կառապանները աւելի հզօր են այդ ճիւղին մէջ քան ինքն իսկ «Տերտունի»ն). Յիսուս հազիւ 6-7 անգամ հայհոյած է. Թող «Տերտունի»ն Թոյլ տայ որ իբր մտատիպար հանրային գործիչի նախընտրեմ Յիսուսը «Տերտունի»էն; — Դիւրին պիտի ըլլար ի վեր հանել լրջութեան ու ազնուութեան պակասը զոր մարդ կը յայտնէ՝ ամէն առթիւ «նկատումներ», շահադիտական կամ անձնամոլական ներքին ձգտումներ վերագրելով ասոր անոր, եւ թէ ատիկա ուրիշ բանի չի ծառայեր՝ հասկցողին համար՝ բայց եթէ վերագրողին հոգին շատ աննպաստ լոյսի մը մէջ ցոյց տալու. դիւրին պիտի ըլլար՝ օրինակի համար՝ հաստատել թէ ի՞նչքան տխմար է եւ անազնիւ՝ «Արեւմտեան բիւրօ»ին հաճելի ըլլալու դիտումներ տեսնել «Վարդօ»ի Դաշնակցութեան հանդէպ վերջերս բռնած դիրքին մասին յայտնած զգացմանս մէջ. «Վարդօ» եթէ Սասունի ջախջախումէն անմիջապէս յետոյ սկսեր քննադատել իր կուսակցութիւնը, պիտի մղուէի թերեւս անկեղծութեան նշոյլ մը տեսնել իր մէջ (որքան ալ ատիկա դժուար ըլլայ ենթադրել այդպիսի տիպարի մը մօտ). ընդհակառակն, այդ միջոցին իր բոլոր ուժովը պաշտպանեց կուսակցութիւնն ալ, անոր գործած այդ մեծ սխալն ալ եւ գետնէ գետին զարկաւ անոնք որ իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարած էին՝ առաջուց ցոյց տալով վիհը որ կը բացուէր Սասունի առջեւ. իսկ իր քննադատութիւնը սկսաւ այնպիսի ատեն մը ուր իր կուսակցութիւնը ո՛եւ է Հայու համար յարգելի կը դառնար՝ դէպքի մը հետեւանքով՝ որու վրայ դեռ կարելի չէ որոշապէս խօսիլ, ինչպէս նաեւ Ռուսահայոց ինքնապաշտպանութեան մէջ կատարած կորովի ու գեղեցիկ դերովը. իր դիրքը ամէն տեսակէտով շիլ էր եւ անմաքուր. ես հպարտ եմ այդ մասին նողկանք յայտնած ըլլալուս, եւ «Տերտունի»ի գորովը դէպ ի հայհոյանքի եղբայրակից մը՝ զիս չի զարմացներ: — Դիւրին պիտի ըլլար ցոյց տալ թէ ո՛րքան ծիծաղելի կը դառնայ «Տերտունի»ն երբ խեղաթիւրում կը կարծէ տեսնել իր այս կամ այն ֆրազին տուած մեկնութեանցս մէջ որոնք սակայն միակն են որ կարելի էր տալ. «Մարդը պարապ տեղը Ակնցի չէ ծներ», իբր շարլաթան ու ըեքլամասէր ներկայացուած Ակնցի Տր. Դաբրիէլեանին համար ըսուած, հայերէն լեզուով ուրիշ բան չի նշանակեր բայց եթէ՝ «Ակնցիները» ցեղովին շարլաթան են եւ ըեքլամասէր. «պղծեցէք» հրամայականը՝ թաթարներուն հետ կռուի բռնուած կովկասահայերուն ուղղուած, ուրիշ սեռի խնդիր չի կրնար ունենալ բաց ի այն (հաւանօրապէս սեռային) խնդիրէն զոր երեւակայած էի. ու անոր ընկերացող բոլոր «եթէ»ները չեն կրնար մեղմացնել այդ հրամայականին թաթարոգի հանգամանքը: — Դիւրին պիտի ըլլար ցուցընել թէ ներելի չէ «գաղթային համայնքի մը բարքերու ուսումնասիրութիւն» նկատել Նայլոբի «Փտախտաւոր հոգիներ»ը, որ որոշ գաղութի մը ճիշդ ամենէն ազնիւ ու յարգելի անձը զզուելի ծաղրանկարով մը չարաշատկերելու միակ նպատակն ունէր, եւ թէ այդ գրուածքը՝ առանց մոռցընել տալու գրական արժանիքը զոր անոր հեղինակը ցոյց տուած է իր ուրիշ էջերուն մէջ եւ զոր ես երբեք չեմ ուրացած՝ նոյն իսկ այն վաղանցուկ օրերուն երբ «Տերտունի» արհամարհանքով կ'որակէր զայն՝ նողկանք միայն կրնար ներշնչել անոնց որոնք գրականութիւնը կը սիրեն բայց բարոյական ազնուութիւնը ոչ նուազ կը սիրեն: Այդ լրջուկ գրուածքը — որուն հեղինակը անշուշտ օր մը պիտի զղջայ զայն արտադրած ըլլալուն — ոչ մէկ կապ չունի գրականութեան հետ: Վակներ որ «Նայլոբ»էն՝ կ'ենթադրեմ՝ քիչ մը աւելի հանճար ունէր, ֆրանքօ-փրուսիական պատերազմին ատեն գրած է փանֆլէ մը՝ Ֆրանսացւոց դէմ, բացարձակապէս զզուելի, անազնիւ ու գծուռ. բայց ամենէն մոլեռանդ վակներապաշտը այսօր կ'ամչնայ անունն իսկ տալու այդ ամօթալի գրուածքին:

Այս բոլորը շատ դիւրին պիտի ըլլար բացատրել մանրամասնօրէն, բայց երկար, եւ աւելորդ: Այնպիսի բոպէի մը մէջ ենք ուր մեր պարտքն է մեր բոլոր ուժերն եւ ուշադրութիւնը նուիրել հանրային մեծ հարցերուն, եւ յանցանք պիտի ըլլար ժամանակ կորսնցընել՝ աւելի քան ինչ որ պէտք է՝ այսպիսի ճղճիմ խնդիրներու համար: Ամէն պարագայի մէջ, «Տերտունի»ին հրաւէրին պէտք չունիմ անփոփոխ պահելու համար զգացումներս այն կուսակցութեան հանդէպ որուն ինքը կը պատկանի. ես երբեք չեմ շփոթած ու չեմ շփոթեր կուսակցութիւն մը՝ անհատի մը հետ. երբ ինծի դէմ հրատարակուած պիգալի պարսաւատետրի մը հեղինակը Վեր. Հնչ. կուսակցութեան օրկանին իբր խմբագիր հրաւիրուեցաւ, ատոր համար քէն չբրի այդ կուսակցութեան, եւ հիմա, «Տերտունի»ին այս վարդէ ջրով խառնուած թունապուրը անդիմադրելի բայց վաղանցուկ սիրտխառնուքէ մը ուրիշ ազդեցութիւն չի կրնար ունենալ վրաս. ես այդ կուսակցութեան բարեկամը եղած եմ՝ ոչ թէ զայն կազմող բոլոր անձերուն ինծի համակրելի կամ հակակրելի ըլլալուն համար, այլ որովհետեւ ան հաստատուած է Դաղափարի մը վրայ որ ինծի խորապէս սիրելի է:

Ղ.

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ

ՃԷՅՄԱ ՊՐԱՅՍԻ

Փետրուար 23ի Ուրբաթ օրը, Լոնտոն, Ուէսթմինսթրը Փալէս Հոթէլին մէջ, տեղի ու-

նեցաւմիջազգային խորհրդաժողով մը, կազմակերպուած՝ Արեւելեան հարցի Միջազգային Ընկերակցութենէն՝ ի նպաստ Օսմ. Պետութեան կեղեքեալ ժողովուրդներուն. իրիկունը հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ ձէյմս Պրայսի՝ իր նախարար ընտրուելուն առթիւ :

Խորհրդաժողովին ու հացկերոյթին ներկայ գտնուեցան լոնտոնաբնակ Հայոցմէ՝ ՊՊ. Ց. Յակոբեան եւ Ն. Մոստիչեան, փարիզաբնակ Հայոցմէ՝ ՊՊ. Յ. Իսկենտեր եւ Ա. Զօպանեան : Պ. Զերազ, որ նմանապէս հրաւիրուած էր, չէր կրցած գալ՝ իր առողջական վիճակին պատճառով :

Խորհրդաժողովին հրաւիրուած էին ոչ միայն շատ մը անգլիացի կարեւոր անձնաւորութիւններ, այլ եւ Ֆրանսայի եւ Իտալիոյ քաղաքական, գրական ու գիտական մեծ դէմքերէն շատերը. դժբաղդաբար, Մարոքի հարցը ինչպէս եւ ուրիշ ստիպողական այժմէութիւն ունեցող խնդիրներ արգիլած էին շատերը՝ ներկայ գտնուելէ. Իտալիայէն ոչ ոք եկած էր, Ֆրանսայէն՝ միայն Պառոն տ'Էսթուռնել տը Քոնսթան, Փիեր Քիյար եւ ժան Լոնկէ : Նոյն օրը, անգլիական խորհրդարանին մէջ՝ Թրանսվալի մէջ չինացի գործաւորներու կարեւոր հարցը յարուցուած ըլլալով, երեսփոխաններէն շատերը չէին կրցած գալ խորհրդաժողովին. ներկայ էին ՍաուԹուօրքի եպիսկոպոսը, Լորտ Սթանմոր, Պ. Սթիվընսըն, նախագահ անգլո-հայկական ընկերակցութեան, Պ. Նօել Պրքսթըն, Տր. Ռէյնոլտս, Վանայ բազմաշխատ ամերիկացի միսիոնարը, բեվ. Ա. Մ. Ֆերպէրն, Մաք Քոլ կանոնիկոսը, Փրոֆ. Ակար Պիթ, Ի. Վ. Ա. Մուր: Բազմաթիւ անձնաւորութիւններ, ինչպէս Պերթըլօ, Անաթոլ Ֆրանս, Տրնի Քոշէն, եւն. համակրական նամակներ ուղղած էին, յայտնելով իրենց ջերմ սրտակցութիւնը խորհրդաժողովը կազմակերպողներուն հետ. Պ. տ'Էսթուռնել տը Քոնսթան, որ կը նախագահէր, ու վերեւ յիշուած բոլոր անգլիացի անձնաւորութիւնները, խօսք առին՝ բացատրելու համար՝ անգամ մը եւս՝ անհրաժեշտութիւնը Օսմ. Պետութեան կեղեքեալ ժողովուրդներուն դատը արմատապէս լուծելու (գրեթէ բոլոր բանախօսները շեշտեցին մասնաւորապէս հայկական հարցին վրայ): Պ. Յակոբեան շնորհակալութեան քուէ առաջարկեց Պ. տ'Էսթուռնել տը Քոնսթանին, եւ յետոյ դառնութիւն յայտնեց որ հակառակ Հայոց թափած այնքան արիւնին եւ Եւրոպացի հայասէրներու տարիներէ ի վեր կատարած ջանքերուն՝ հայ ժողովրդին կացութիւնը ոչ միայն չէ բարւոքուած, այլ տասնապատիկ աւելի վատթարացած է քան 1876ին: Պ. տ'Էսթուռնել տը Քոնսթան, պատասխանելով Պ. Յակոբեանին, հասկանալի գաւաւ Հայոց զգացած դառնութիւնը, բայց, ըսաւ, պէտք չէ վհատիլ. Եւրոպան ցարդ, պառակտուած ըլլալով, կարող չէր արեւելեան հարցը լուծել. այժմ, Եւրոպայի ազատական ազգերը սերտ բարեկամութեամբ կապուած են, ու Եւրոպա պիտի սկսի կարող ըլլալ այդ հարցը լուծելու :

Հացկերոյթը՝ շատ շքեղ ու փառաւոր արտայայտութիւն մը եղաւ յարգանքի դէպ ի ձէյմս Պրայս եւ համակրութեան դէպ ի Օսմ. պետութեան կեղեքեալ ժողովուրդները (Հայաստան, Մակեդոնիա, Կրետէ) : Պ. Սթիվընսըն կը նախագահէր. ներկայ էին հարիւր յիսունի մօտ անձնաւորութիւններ, Լորտ Պրասէ, Շօու Լիֆիվը, Փրոֆ. Մահաֆի, Լորտ Մընքսվիլ, Մուր, Պ. Միյաթովիչ, Լորտ Նորթպըրն, Փ. Քիյեար, տ'Էսթուռնել տը Քոնսթան, Լորտ Սթանմոր, Շուան, ՍաուԹուօրքի եպիսկոպոսը, Սերպիոյ, Պուլկարիոյ, Յունաստանի դեսպանները, Սըր ձօն Քէնաուէյ, Նօել Պրքսթըն, Ակար Պիթ. եւն. եւն.: Բաժակաճառեր արտասանեցին Սըր ձօն Սիթուէլ, Լորտ Նորթպըրն, Սըր ձօն Քէնաուէյ, տ'Էսթուռնել տը Քոնսթան, Լուիճի Վիլլարի, Մաք Քոլ, ձէյմս Պրայս, Փրոֆ. Մահաֆի, Պ. Միյաթովիչ, Նօել Պրքսթըն : Ամէնքն ալ՝ այլեւայլ ձեւերով՝ համաձայն էին Օսմ. Պետութեան արդի խայտառակ կացութիւնը բարեփոխելու անհրաժեշտութեանը մասին :

Պ. Միյաթովիչ, Սերպ, յայտնելէ յետոյ սերպ ազգին երախտագիտութիւնը Անգլիոյ, շատ սրտաշարժ ակնարկութիւն մը ըրաւ Հայոց դատին, եղբայրական մաղթանքով մը որ արդարութիւնը յաղթանակէ նաեւ բռնութեան այդ վերջին եւ ամենադժբաղդ զոհին՝ Հայութեան՝ ի նպաստ :

Հայ հեռաւոր գաղութներէն՝ միայն Աղեքսանդրիոյ հայ գաղութը խորհած էր երախտագիտական հեռագիր մը ուղղել Պ. Պրայսին :

Պ. Իսքէնտէր, քանի մը վայելուչ ու զգայուն խօսքերով՝ արտայայտեց երախտագիտութիւնն ու սէրը զոր հայ ժողովուրդը կը զգայ դէպ ի Պ. Պրայս, դէպ ի այդ մեծ հայասէրը, որ առաջին եւրոպացին եղած է Արեւմուտքի մէջ լրջօրէն Հայոց հարցով զբաղող, որ այդ հարցը ուսսումնասիրած է խորապէս եւ անոր արդարութիւնը հիմնովին հասկցած եւ իր մեծ հեղինակութեամբ զայն հասկցուցած է ամբողջ Անգլիային, որ հիմնադիր եղած է հայկական դատին մեծ ծառայութիւններ մատուցանող անգլո-հայկական ընկերակցութեան եւ երեսուն տարիէ ի վեր ամէն ձեւով եւ ամենայն անձնուիրութեամբ աշխատած է ի նպաստ տառապեալ Հայութեան :

Պ. Զօպանեան արտասանեց հետեւեալ բաժակաճառը.

Տիկիններ, Պարոններ,

Այն պահուն ուր դուք կը տօնէք արդարութեան մեծ պաշտպան մը, սրտաշարժ զուգադիպութիւնով մը՝ հայ ժողովուրդը տօնեց իր պատմութեան ամենէն վեհ թուականներէն մին, որ արդարութեան յաղթանակ մը կը պատկերացնէ: Տասնհինգ դար առաջ՝ այս օրերս է՝ արդարեւ՝ որ Հայութիւնը, Աւարայրի մէջ, վճռական պայքարը մղեց վիթխարի բանակին դէմ՝ Սասանեան Յազկերտին, որ կ'ուզէր զրադաշտականութիւնը բռնի ընդունել տալ Հայոց: Վարդան Մամիկոնեան, հայկական բանակին սպարապետը, ինկաւ այդ պատերազմին մէջ՝ հազար երեսունուվեց զինակիցներու հետ, բայց բռնութիւնն է որ յաղթուեցաւ : Հայութիւնը կը մաքառէր ոչ թէ միմիայն կրօնական զգացումներէ մղուած, այլ եւ՝ ու մանաւանդ՝ պահպանելու

համար։ Իր ազգային գոյութիւնը որուն կը սպառնար այդ բիրտ ձուլման փորձը, ու պաշտպանելու համար ազատութեան սկզբունքը զոր ոտնակոխ ընել կ'ուզէր Արեւելեան բռնապետութիւնը։ Պայքարը, զոր հերոսաբար սկսած էր Վարդան, շարունակուեցաւ երկայն տարիներ, եւ յանգեցաւ ազատութեան դատին յաղթանակին, որ եւ եղաւ արեւմտեան քաղաքակրթութեան յաղթանակը Ասիոյ մէջ։ Սասանեաններն ու իրենց զօրութիւնը շատոնց ի վեր անհետացած են, ու հայ ժողովուրդը դեռ կանգուն է, անեղծ պահած իր լեզուն, իր կրօնքը, իր աւանդութիւնները եւ իր բուռն սէրը ազատութեան։

Սասանեաններն այլ եւս գոյութիւն չունին, բայց միշտ գոյութիւն ունի արեւելեան բռնապետութիւնը։ Ցազկերտ այսօր ուրիշ անունով մը կը կոչուի, եւ դուք գիտէք թէ նոր Ցազկերտը իր նախորդը անհունապէս գերազանցեց վայրագութեան մէջ։ Ու դուք գիտէք նաեւ թէ անոր քստմնելի լուծին տակ տառապող ժողովուրդներէն ոչ մէկն այնքան հաւատարապէս չէ չարչարուած որքան հայ ժողովուրդը։

Ու հայութիւնը այդ զարհուրելի մարտի բոսուութիւնը կրեց ու դեռ կը կրէ՝ որովհետեւ բողոքեց այն ստրկութեան անհանդուրժելի պայմաններուն դէմ զոր թրքական բեժիմը իրեն վրայ կը բեռցնէր, այն անարդարութեանց դէմ որով սիստեմականօրէն կը խեղդուէր ինքը, այն բոլոր ծանր հարուածներուն դէմ որ կը տրուէին իր արժանապատուութեանը, իր ամենէն անկապտելի իրաւունքներուն։ Իր պայքարը, հաւատարապէս անհաւասար, դժնդակ եղաւ, եւ ցարդ աղէտքներու միայն յանգեցաւ. բայց հայ ժողովուրդը հաստատ համոզուած է որ իր հեղեղօրէն թափած արիւնը ամուլ պիտի չմնայ եւ թէ ազատութեան դատը անգամ մը եւս պիտի յաղթանակէ, որովհետեւ պատմական անհրաժեշտութիւն մըն է այդ։

Հայերը աշխարհակալ ձգտումներէ չէ որ մղուած են. ոչ մէկուն շահերուն վնասել չէ իրենց նպատակը. կ'ուզեն որ իրենց պահանջքները, որ օրինաւոր են նկատուած Պերլինի դաշնագրով եւ անկից բղխած միջազգային բոլոր որոշմնագրերով, լրջօրէն եւ ամբողջապէս գործադրուին. եւ իրենք համոզուած են թէ հայկական հարցին արմատական լուծումը, բուժելով Օսմանեան Պետութեան ամենէն ծանր վէրքերէն մին, օգտակար կրնայ ըլլալ այդ պետութեան ամբողջութեան եւ բանալ Արեւելքի համար վերանորոգման թուականը։

Դուք բոլորդ, Պարոններ, որ հաւաքուած էք այս իրիկուն ուօնախմբելու համար սքանչելի Պ. Ճէյմս Պրայսը, այդ պատկառելի Վեթերանը հայկական դատին եւ բոլոր արդար դատերու պաշտպաններուն, դուք բոլորդ, Եւրոպայի սրտին եւ ուղեղին ներկայացուցիչները, որ այնքան տարիներէ ի վեր ձեր վեհանձն ջանքերը կը թափէք փութացնելու համար այս ազնիւ դատին արդար լուծումը, դուք մեզ կը կազդուրէք մեր դժբաղդութեանց մէջ ու մեզ կ'ամրապնդէք մեր հաւատքին մէջ դէպ ի մեր դատին անխուսափելի յաղթանակը։

Ուրախ եմ կարենալուս ձեզ յայտնել այստեղ հայ ժողովրդին խորին երախտագիտութիւնը։»

Հացկերոյթէն յետոյ հայ պատգամաւորները անձնապէս ալ յայտնեցին Պ. Պրայսին իրենց յարգանքն ու շնորհաւորութիւնը։ Պ. Պրայս ըսաւ անոնցմէ մէկուն հետեւեալ խօսքերը զոր օգտակար կը նկատենք բառ առ բառ կրկնել այստեղ.

«Այժմ՝ ինչպէս ցարդ՝ պիտի ըսեմ ինչ որ կրնամ նպաստելու համար Հայոց կացութեան բարւոքման։ Բայց մինչեւ որ Ռուսիա չաջակցի մեր ջանքերուն, մեր ջանքերը չեն կրնար յաջողիլ. Իտալիա, Ֆրանսա եւ Անգլիա՝ միացած՝ կրնան բան մը ընել Մակեդոնիոյ համար, բայց Հայաստանի համար՝ երեքը մէկանց չեն կրնար արմատական փոփոխութիւն մը յառաջ բերել՝ եթէ Ռուսիա հակառակի. բայց յոյս ունիմ որ Ռուսիա այլ եւս չպիտի հակառակի»։

ՏԻՐԱՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍԸ

Փետրուար 21ի Հարեւանցաթի իրիկունը, Փլէյելի սրահին մէջ, Տիրան Ալիքսանեան, ծանօթ հայ բամբիռնահարը, տուաւ նուագահանդէս մը՝ տիկին Մոնթէս-Պարիէր դաշնակահարուհւոյն աջակցութեամբ։ Յայտագիրը կը բաղկանար չորս սօնաթներէ (Պէթովընի, Վալենթինիի, Պրամսի եւ Ժան Հիւբէի). ունկընդիրները, որ բազմաթիւ էին, ջերմօրէն ծափահարեցին մեր երիտասարդ հայրենակիցը, որ իր տաղանդն ու հմտութիւնը մանաւորապէս փայլեցուց Վալենթինիի հոյակապ կտորին մէջ։

ԳՐՔԵՐ

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ»

Դանիէլ Վարուժան, որուն մէկ հոյակապ քերթուածը կը հրատարակենք մեր այս թիւով, ի լոյս ընծայած է բանաստեղծութեանց հատորիկ մը, որ սքանչացմամբ պիտի կարդացուի։ Վարուժան հայ բանաստեղծութեան ամենէն ինքնատիպ ու հզօր դէմքերէն մին ըլլալու կոչուած է։ Իր հատորին վրայ աւելի մանրամասնօրէն պիտի խօսինք մեր յաջորդ թիւով։

Գտնել փափաքողները կարող են դիմել Անահիտի խմբագրութեան։ — Գին 1 ֆր.

Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

AURORA

Պ. Մեշտուտճեան (Դամիր-Արշաւիր) սկսած է հրատարակել Պուքրէշի մէջ ռումաներէն թերթ մը ամիսը երեք անգամ լոյս տեսնող եւ որուն նպատակը պիտի ըլլայ Ռումանիոյ Հայոց մէջ ազգային զգացումը վառ պահել։ Առաջին թիւը, ճոխ պարունակութեամբ, եռեւցաւ արդէն։ Ցաջողութիւն կը մաղթենք այս օգտակար ձեռնարկին։ Տարեկան բաժանորդագին 10 ֆր.։ Հասցէ՝ Rédaction de la Revue AURORA, Rue Spatarului, 46, Bucarest, Roumanie.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

Թիւ 1. — Անաթոլ Ֆրանս. Եպիկուրի պարտէզը, (Հատուածներ), թարգմանեց Ա. Զօպանեան, հեղինակին կենդանագրով. Գին 1 ֆրանք։

Թիւ 2. — Ալֆրէտ տը Վինեիի Քերթուածները, հեղինակին կենդանագրով, թարգմանեց Ա. Զօպանեան։ Գին 1 ֆրանք։

Թիւ 3. — Օմար Խայեամի Քառեակները, քննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնագրէն թարգմանեց Գ. Փոռնակ. Գին 3 ֆրանք։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ «ԱՆԱՀԻՏ»Ի

Թիւ 1. — Նահապետ Քուչակի Դիւանը, սիրոյ երգեր, խրատական եւ այլաբանական երգեր, պանդուխտի երգեր. Քննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Զօպանեան. 3. ֆր.

Թիւ 2. — Մկրտիչ Պէշիկթաշլեանի Քերթուածներն ու նամակները, ծանօթագրութիւններով հրատարակեց Ա. Զօպանեան. 4 ֆր. 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳՐՔԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTERATURE, SON ROLE EN ORIENT par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր.

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'A LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POEMES ARMENIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր.

CHANTS POPULAIRES ARMENIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff.
Ouvrage couronné par l'Académie Française 3 ֆր 50

ԱՆԱՀԻՏ-ի բաժանորդագրութեան պայմանները

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը։

Բաժանորդագրին է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ, 2 տոլար (Ամերիկա), 5 ռուպի (Ռուսիա)։

Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 1 տոլար (Ամերիկա), 3 ռուպի (Ռուսիա)։

Ցաղուած եւ բաժանորդագրին դրկել հետեւեալ հասցէին՝

A. TCHOBANIAN
17, Rue La Bruyère
Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բագու	Տիկին Մարի Սունդուկեանց
Ռուսճուգ	Պարոն Գառնիկ Մազմանեան
Գահիրէ	» Միհրան Արզարեան
Ֆիլիպէ	» Թագւոր Հինդլեան
Թեհրան	» Լեւոն Բաբայեանց (Տեսուչ Թեհրանի Հայոց երկսեռ դպրոցներուն)
Դաւրիզ	» Վ. Բժշկեան
Ուօքեկրն	» Տ. Մատեան
Իսթ Փէմպրիճ	» Գաբրիէլ Մուշեղեան
Իսթ Ուօթրրթաուն	» Կ. Մալխասեան
Սէնթրրլ Ֆոլս	» Նշան Մինասեան
Զիքակօ	» Ս. Մուրատեան
Նեշուէ	» Յ. Արոզեան
Ուսթրր	» Մինաս Գաբրիէլեան
Ֆրէզնօ	» Գ. Նալպանտեան
Պաթում	» Մամաջանեան
Նիւ Պրիթէյն	» Ս. Սաչաքլեան
Փրովիտէնս	» Աւագ Կարապետեան

Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ, 18, Rue des Gobelins, Paris.